336.2
H-16

١٤٢١

336.2
Ա-16
Գոլ
24 NOV 2011
339
30/0
1323-ԻԿ
Ъ Ս.Գ.Ֆ
223
612

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ԱՐՕՐ“

ԽԱԺԱԿ

ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

1003
11813

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՓՈՐՁ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Ս. ՍՏԱՓԱՆՅԱՆ ԱՆՎԱՆ

Արտատպած «Մուրճ» ամսագրից՝ Լրացումներով

Հոբիսիմեան Դպրոց
Եկեղ.-Ժխակ. (արիստոպ)

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“
1903

Дозволено Цензурою. Тифлисъ, 30 Октября 1903 г.

2323-91

(460-91)

223-91

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թուրքիան մեր ամենամօտ դրացին է, բայց մեզ համար կարծես մի անծանօթ աշխարհ է: Նա ունի որոշ ու տեղական ազդեցութիւն մեր կեանքի, նրանում գոյութիւն ունեցող ցիւրական, մտաւոր ու բարոյական հոսանքների վրայ: Պէտք է ուսումնասիրել մեր անմիջական դրացու թէ երկիրը, թէ նրա կազմութիւնը:

Մենք աշխատել ենք այստեղ ներկայացնել Տանկասանի հարկերը: Սա մի ամբողջացած ուսումնասիրութիւն չէ, այլ միայն ուսումնասիրութեան մի փորձ, իւր բոլոր թերութիւններով:

Առանձին գրքոյկով հրատարակելով մեր այս ցիրը, մենք ուզում ենք օրինակ տալ Տանկասանի կեանքին մօտ ծանօթ անհատներին, թէ ո՞րքան հետաքրքիր ու անհրաժեշտ է հրատարակել, ծանօթացնել մեզ այդ երկրի հետ, ուսումնասիրել նրան բազմակողմանի կերպով: Այս տեսակէտից ներկայ աշխատութիւնս անհրաժեշտ գտայ առանձին գրքոյկով լոյս ընծայել: Թերեւս փորձը ունենայ մի քանի հետեւողներ, աւելի ձեռնհաս, աւելի լայն ծանօթութիւններով:

ԹԱԺԱՆ.

1903 թ. Նոյեմբերի 1.
Թիֆլիս.

Բագուի Հայոց
Հռիփսիմեան Դպրոց
Գրադ. Ֆոնդ. (Տրիբուն.)

I.

ՀԱՐԿԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Ամեն պետութիւն հարկ է առնում իւր ժողովրդից կամ իւր հպատակներից։ Չկայ պետութիւն, որ հարկ չվերցնէ։

Մարդկային սկզբնական հասարակութիւնների մէջ պետութիւն (Etat, Staat, государство) չկայ. դրա համար նրանց մէջ հարկ էլ չկայ։

Սկզբնական մարդկութիւնը ապրում էր և այժմ էլ ապրում է փոքրիկ տոհմերով (գենս, կլան), կամ մի քիչ աւելի մեծ ցեղերով (տրիբիւ, աշիրէթ), կամ այդ երկուսի միջին աստիճանը կազմող եղբայրութիւններով (ֆրատրիա)։ Սկզբնական այս միութիւնները տնտեսական ու արիւնակցական կոմունիստական համայնքներ էին, որ ունէին իրենց և՛ ներքին ու արտաքին գործերը, և՛ համայնական հողա-

տիրութիւնը, համայնական որսորդութիւնը, համայնական անվերջ պատերազմները, և՛ համայնական ժողովը՝ կազմուած համայնքի թէ այր և թէ կին բոլոր անդամներից՝—հաւասար ձայնի իրաւունքով (ինչպէս այսօր Ամերիկայի կարմրամորթների մէջն է), թէ իրենց ընտրուած պետը (սախէմ, ըէյս ազսախկայ), և այլն։ Մի խօսքով՝ նրանք ամեն տեսակ համայնական սկզբնական ինստիտուտներ ունէին, բայց պետութիւն դեռ չէին կազմում։

Բնութեան մէջ անշարժութիւն չկայ. ամեն ինչ շարժուում է։ Մի տեղ այդ շարժումը դանդաղ, աստիճանական զարգացում է (էվոլիուցիա), իսկ մի ուրիշ տեղ նա նոյն դանդաղ, նոյն աստիճանական շարժումն է դէպի յետ, դէպի բայբայում (դիսոլիուցիա)։

Ցեղերի (տրիբիւ) թէ թիւը, թէ մեծութիւնը աճում է այն ժամանակ միայն, երբ տնտեսական կեանքի զարգացումը արդիւնաբերութեան միջոցների կատարելագործութիւնը թոյլ է տալիս։ Թւի շատանալու հետ միասին՝ դոյութեան անողորմ կռիւը ստիպում է նրանց կազմել *ցեղերի դաշնակցութիւններ* (fédérations des tribus)։ Սա կազմում է մարդկային սկզբնական հասարակութիւնների կառավարութեան ամենաբարձր և ամենազարգա-

ցած ձևը։ Մարդկային ընկերագիտությունը (sociologie humaine) դրանից բարձր վարչական ձև չի ճանաչում սկզբնական մարդկությեան համար։

Հասարակությեան էվոլյուցիան արեց իր գործը՝ հասցնելով կառավարությեան ձևը մինչև ցեղերի դաշնակցությունը։ Բայց մի ուրիշ էվոլյուցիա կազմում էր նրա հիմքը, նրա սկզբնապատճառը։ Դա արդիւնագործության միջոցների զարգացումն էր։ Քանի դեռ այդ միջոցները կոպիտ, պարզ ու սկզբնական էին, մարդիկ ստիպված էին խմբովին աշխատել, խմբովին ապրել. նրանք ստիպված էին կոմունիստական կեանքով ապրել։ Երբ գործիքն սկսեց զարգանալ այնքան, որ հնարաւորություն տուեց ամեն անհատի, կամ մի փոքրիկ խումբ անհատների՝ անկախ ուրիշների ընկերակցությունից, իր գոյությունը պաշտպանել իր ուժերով՝ այն ժամանակ սկսեց երևալ մասնաւոր սեփականությունը, քանդելով նախկին սկզբնական կոմունիզմը և նրա հետ էլ կառավարությեան այն ձևերը, որոնք ճշտությամբ չափված ու ձևած էին սեփականությեան այդ տեսակի վրայ։

Աշխատանքի բաժանումը խստացաւ։ Հասարակությեան թէ ներքին, թէ արտաքին

գործերը բաղմացան։ Արդիւնքների փոխանակութիւնը կամ վաճառականութիւնը դարձաւ մի տեսակ անհրաժեշտութիւն։ Երևացին բաւական պարզօրէն որոշուած արհեստաւորների, վաճառականների, հոգևորականների, որսորդների և այլ դասակարգեր։

Մասնաւոր սեփականութեան զարգացումը ծնեցրեց մի երևոյթ, որ առաջ գոյութիւն չունէր սկզբնական կոմունիստական համայնքների մէջ. դա հարուստ և աղքատ, ունևոր և չունևոր խօսքերի հասկացողութիւնն էր։ Հաւասարասէր տնտեսական կեանքը համայնքներում քանդուեցաւ և ծնունդ առաւ տնտեսական անհաւասարութիւնը։ Երևացին հարուստներ և աղքատներ։

Այնտեղ, ուր կայ հարուստ և աղքատ, անպատճառ կը ծագի և աղքատի մէջ ձգտում խլել հարստի ունեցածը։ Այդ ձգտումը կը ծնեցնէ մի տեղ գողութիւն (որը գոյութիւն չունէր սկզբնական կոմունիստական համայնքի ներսում), մի ուրիշ տեղ—մարդասպանութիւն, թալան, գաւազրութիւն աղքատների ընդդէմ հարուստների—և այլն։

Մասնաւոր սեփականութեան շնորհով հասարակութեան ներքին ցաւերն աճում, բազմանում են և համայնքն ստիպուած է լինում

կազմել մի հիմնարկութիւն, մի ինստիտուտ, որ կարողանայ կարգ պահել և հասարակութեան ներսում (գլխաւորապէս), և դրսում — հակառակորդ հասարակութիւնների հետ յարաբերութեան մտած սակաւաթիւ դէպքերում։

Ստեղծւում է *ոստիկանութիւնը*՝ այսինքն մի դասակարգ մարդիկ, որոնք պէտք է *կարգ* պահպանեն հասարակութեան ներսում, չթողնեն որ ուրիշի սեփականութիւնը (գրանից և նրա *պատիւը*!!), նրա կեանքը ենթարկւի վտանգի։ Հին Ամէնքի հանրապետութեան մէջ և Սպարտայում առաջին ոստիկանները միայն *ստրուկներն* էին, որովհետև մի ազատ (Եւրոպայիս) անպատուութիւն էր համարում քանի այժ և ինչ գործածել իւր նման մի ազատի դէմ։

Ոստիկանութեան հիմնարկութեան հետ միասին առաջանում են և դատարանները կամ արդարութիւնը որոշող ատեանները։

Սկզբնական համայնքների մէջ ամեն մարդ, յաճախ և ամեն կին, կռւող էր. յատուկ զինուորներ, արհեստով զինուորականներ կամ պատերազմողներ չկային։ Դուրս էր գալիս մի անանի բաջ անհատ. որի վրայ մեծ համարում ունէին համայնքի անդամները, դիւղի մօտ՝ բաց դաշտում զինուորական պար էր սկսում մենակ։ Բոլոր հասարակութիւնը հասկանում

էր, որ այդ անձը մտադիր է մի կռիւ, մի արշաւանք սարքել։ Ով ուզում էր կռուել. իսկոյն գալիս միանում էր նրա պարին։ Երբ պարն սկսողը տեսնում էր, որ բաւական թիւով մարդիկ միացել են իւր հետ, իսկոյն զէնքերն առնում, առաջ էր ընկնում, ունենալով իւր ետեւից պարին մասնակցող բոլոր ընկերները։ Պարն սկսողը դառնում էր և զինուորական պետ կամ ասիէմ։ Պատերազմը վերջանալուց յետոյ նրանք վերադառնում էին իրենց գիւղը և համայնքի խաղաղ, մշտական անդամներ մնում, մինչև նոր պատերազմ։ Բերուած աւարը համայնքինն էր։ Համայնքի ներսում բոլոր, արիւնակիցները բացարձակ հաւասար էին։ Միակ նախապատուութիւնը տրւում էր ծերերին և փորձառու բաջերին։

Պատերազմի ամենագլխաւոր պատճառն էր աւարառութիւնը. ուրիշ ցեղի աշխատանքի արդիւնքը խլել, իւրացնել, ուրիշի աշխատանքով ապրել։ Բռնուած գերիներին ուտում էին (մարդակերութեան շրջան), որովհետև արդիւնաբերութեան խակ, երեխայական շրջանում միայն չունէր գերի պահելը. բռնուած գերին եթէ ապրէր և աշխատէր, հապա իւր ապրուստը կարող էր հայթայթել։ Իսկ երբ արդիւնաբերութեան միջոցները զարգացան և մի

մարդու աշխատանքի արդիւնքը աւելի եղաւ, քան նրան պահելու համար անհրաժեշտ միջոց-ները՝ այն ժամանակ աւելի ձեռնտու եղաւ պատերազմական գերիներին, տիրած ցեղերին թոյլ տալ ապրելու, ստիպել աշխատել և նրանց աշխատանքի արդիւնքը իւրացնել՝ տալով նրանց ապրելու ամենաանհրաժեշտ նիւթերը միայն։ Պատերազմում յաղթող ցեղը կազմում էր տիրող — ազնուական դասակարգը, իսկ յաղթուածը դառնում էր իրաւազուրկ ստրուկ, պլեբէյ, իլօտ, պարիա, ֆելլահ, ռայեա, ֆլա և այլն։

Ցեղի կամ համայնքի զարգանալու հետ միասին՝ աճում ու զարգանում էր և ստրկատիրութիւնը, և ստրուկների թիւը։ Ամէնքի ծաղկած ժամանակը ստրուկները կազմում էին ազատներից (Եւպատրիդ) 4 անգամ աւելի մեծ թիւ։ Նոյն յարաբերութիւնը կար և Հռոմի պլեբէյների և պատրիցիների մէջ։ Համայնքի արիւնակից՝ տիրող ցեղի անդամները դիտում էին ստրուկներին իբր ստոր մի ցեղ, իբր աշխատաւոր անասուններ։ Նրանց մէջքին էին բառնում բոլոր տնային ու դաշտային աշխատանքները, իսկ իրենց վերապահում էին զէնք կրելու իրաւունքը, կռիւ վարելը, հասարակական գործերը և այն ամենը, ինչ որ իրենց գերիշխան էր դարձնում ստրուկների, հպատակների վրայ։

Նոյն իսկ տիրող ցեղի մէջ այդ հաւասարասէր դրութիւնը երկար չկարողացաւ շարունակուել։ Ինչպէս արդէն ասացինք, մասնաւոր սեփականութեան երևալու հետ միասին՝ երևացին և հարուստն ու աղքատը։ Կամաց-կամաց նիւթական հարստութիւնը մի խոր վիհ բացեց այդ երկու դասակարգերի մէջ։ Հարուստներն սկսեցին նախ ստրուկներին իբր *ռաբիկան* և իբր *զինուոր* գործածել իրենց ներքին թշնամիների՝ աղքատների դէմ և ապա՝—երբ շունևորների թիւն աճեց և ազատ շունևորներն սկսեցին անել նոյն աշխատանքները՝ ինչ որ ստրուկներն էին անում՝ — աղքատների մի մասն էլ՝ նիւթական կարիքից ստիպուած զինուոր-ստիպան դարձաւ և իր զէնքն սկսեց գործածել իր վիճակակից աղքատ ազնուականի և ստրկի դէմ. պաշտպանելով տիրող հարուստի շահը։

Ուրեմն՝ մասնաւոր սեփականութեան ծնելու և զարգանալու հետ միասին աստիճան առ աստիճան ծնունդ առան ու զարգացան այն բոլոր ինստիտուտները, որոնք կազմում են *պետութիւնը*՝ իր ամբողջ բարդ կազմակերպութեամբ, իր վարչական մեքենայի բոլոր մասերով։ Ստեղծուեցան բազմաթիւ հասարակական պաշտօններ, իսկ ամեն մի պաշտօն պահան-

ջում է պաշտօնեաների մի դասակարգ։ Առաջացան բազմաթիւ ոստիկաններ, դատաստանական պաշտօնեաներ, աստիճանաւորներ, զինուորներ և այլն։ Բայց դրանց համար ապրուստի միջոց էր հարկաւոր, որովհետև որքան հասարակական գործերն աճում, շատանում էին, այնքան այդ պաշտօնները դառնում էին մասնագիտական գործեր, որ խլում կլանում էին անհատի ամբողջ ժամանակը, այլ ևս անհնար էին դարձնում ծառայողին գտնել այլ զբաղմունքներ, իր ապրուստը ճարել որ և է կողմնակի գործով։ Կարիք զգացուեցաւ վարձատրել, ապրելու միջոցներ տալ հասարակութեանը ծառայող պաշտօնեաներին։

Ահա պետութեան այս կարիքներն էին, որ ծնունդ տին հարկերին։

Հարկերը մի տեսակ տուրքեր են, որ տալիս են պետութեան անդամները՝ վարչական մարմնի կամ պետութեան բոլոր ծախքերը հոգալու համար։

Պետութեան նոր ծնած ժամանակը հասարակական լաւ պաշտօնները վարում էին հարուստ ազնուականները կամ տիրող ցեղի անդամները (պատրիցիները՝ Հռոմում, եւպատրիդները՝ Յունաստանում, փարաւոնի ցեղը՝ Եգիպտոսում, ինկաները՝ Պերուում, նախարարները՝

հայաստանում և այլն)։ Սկզբներում դրանք վարում էին հասարակական պաշտօններն անվարձ, որովհետև միջոցներ ունէին։ Բայց հասարակութեան զարգացումը նրանց մէջ էլ առաջացրեց ապրանքներ և այն ժամանակ հարկերը դարձան անհրաժեշտ։

Սկզբներում հասարակութեան պաշտօնեային տուում էր որոշ չափի հող, որոշ թիւ ստրուկներ և կենդանիներ այդ հողը մշակելու և ապրելու համար։ Յետոյ հարկը վերածուեց որոշ քանակութեան բերքերի, որ առնուում էր ամեն մշակողից կամ սեփականատիրոջից, ամեն ապրանք ներմուծող կամ արտահանող վաճառականից, ամեն արհեստաւորից և այլն։ Վերջապէս երբ միջին դարի վերջերում հաստատուեցան մշտական զօրքերը (armée permonente), պետական ծախքերը շատացան հրէշաւոր չափերով և երբ երեան եկաւ ապրանքային արդիւնագործութիւնը, երբ փողը դարձաւ բոլոր առարկաների փոխանակութեան ընդհանուր չափը կամ միաւորը, այն ժամանակ և հարկերը սկսուեցան կամաց-կամաց վերածուել փողային ձևին. ապրանքներով կամ բերքերով (in natura) վերցուող հարկերը դարձան փողային հարկեր։

Այսօր բոլոր առաջաւոր ազգերի մէջ մենք տեսնում ենք միայ նու միայն փողային հարկեր,

իսկ բոլոր վայրենի ու բարբարոս հասարակութիւնների մէջ հարկն առնւում է դեռևս բերքերով։ Բայց որովհետև կան նաև բաղմաթիւ հասարակութիւններ և նոյն իսկ խոշոր պետութիւններ, ուր գտնւում են բարբարոսութեան և քաղաքակրթութեան մէջ տեղը՝ այդ պատճառով կան և երկիրներ, ուր հարկի մի մասը վերցւում է բերքերով, միւս մասը՝ փողով։ Այդպիսի երկիրներից են, օրինակ՝ Չինաստանը, Հաբէշստանը և այլն. դրանց շարքում են և Պարսկաստանն ու Տաճկաստանը։

* * *

Մեր նպատակը չէ ոչ հարկերի ծագման ու զարգացման պատմութիւնը, ոչ էլ նրանց սիստեմները պարզելը։ Վերևի ընդհանուր խիստ համառօտ տեսութիւնը մեզ համար անհրաժեշտ էր, որպէս զի Տաճկահայաստանի հարկային սիստեմը պարզէր այնքան, որքան հնարաւոր է։

Նոյն նպատակով յիշենք և այն, որ այսօր բոլոր քաղաքակիրթ պետութիւնների մէջ երկու տեսակ հարկեր կան. ուղղակի և անուղղակի։

Ուղղակի հարկ ասում են այն հարկերին, որ առնում է պետութիւնը իւրաքանչիւր ընտանիքից և անհատից (որոշ բացառութիւնն-

բով) կամ ամեն մէկից հաւասար չափերով. կամ համեմատ իր վճարելու կարողութեան։ Ուղղակի հարկերը դրւում են շինութիւնների, հողերի, արտերի և այլների վրայ. նրանք դրւում են ստուգների, գիւղատնտեսական և անասնապահական բոլոր արդիւնքների վրայ. արհեստաւորների, վաճառականների վրայ, ամեն անձի գլխի համար, ճանապարհների համար և այլն, և այլն։ Իսկ անուղղակի հարկերը դրւում են գործածւելիք ապրանքների, նրանց պատրաստող գործարանների, նրաց ծախող վաճառականների, ուրիշ երկրներից ներմուծւող ապրանքների վրայ և այլն։

Քանի դեռ մի պետութիւն յետամնաց է, նրա հարկերը լինում են առհասարակ ուղղակի։ Որքան նրա ինդուստրիան, նրա գործարանները, նրա ներքին արդիւնաբերութիւնը աճում զարգանում են, այնքան աւելի սկսում են աճել և անուղղակի հարկերը, որ վերջ ի վերջոյ ծանրանում են սպառող մեծամասնութեան վրայ։ Այսօր Եւրոպական զարգացած պետութիւնների մէջ կառավարութիւնների եկամտացոյցի (բիւդջէդ) 3/4-ը համարեա անուղղակի հարկերն են և միայն 1/4-ը ուղղակի հարկերը[1])։

Ծանօթութիւն: 1899 *թւի յունվար* 1-*ից մինչև* 1900 *թւի յունվար* 1-*ը Ֆրանսիայի ուղղակի հարկերը*

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI 1922

Որքան քաղաքակրթութիւնը հասնում է աւելի բարձր աստիճանների, այնքան աւելի մարդիկ սկսում են նորից վերադառնալ ուղղակի հարկերին և այն էլ՝ բոլոր հարկերը վերածելով մի և միատեսակ ուղղակի հարկի։ Եւ դա պէտք է լինի *եկամուտի հարկը* (impôt sur les revenus կամ income tax.)։

Ի հարկ. եւրոպական ազգերի մշտական բանակները, կրթուած մարդկութիւնն «զինուած խաղաղութիւն» կոչուած հրէշաւոր վիճակը դեռ ևս թոյլ չեն տալիս հարկերի թեթևացման և նրանց բոլորի վերածման մի տեսակ արդար սկզբունքով բաշխուող հարկի։ Բայց և այնպէս արդէն թէ կեանքի մէջ մասնակի կերպով

926,000,000 ֆրանկ էին, որոնցից մինչև 1900-թ. փետրվար 1-ը հաւաքուած էր 911,000,000 ֆր. և ապառիկ մնացած էր միայն 15,000000 ֆր.։ Իսկ նոյն թուին բիւդջէի նախահաշուի մէջ անուղղակի հարկեր սրոշուած էին 2,727,000,000 ֆր., բայց մինչև յունվար 1-ը (1900) հաւաքուեցաւ 2,833,000,000 ֆր., այսինքն՝ 106.000,000 ֆրանկ աւելի քան սպասւում էր։ (Տես այդ թուի ելեմտից նախարարութեան հաշիւը փրանիոսական Chambre-ին ներկայացուած)։ Մօտաւորապէս նոյն պատկերն են ներկայացնում եւ գերմանական, եւ իտալական ու աւստրիական բիւդջէները։

460-91 (223-9Դ) 1003/11873 2323-91

սկսում է եկամտային հարկը իրականանալ և թէ մանաւանդ գրականութեան, լրագրութեան և հասարակական ժողովներում արծարծուել, պարզաբանուել, ժողովրդի ամեն խաւերի մէջ տարածուել, մինչև որ խնդիրը բոլորովին հասունանայ և իրականացման պայմաններ գտնի։

Այսպէս օրինակ՝ Անգլիայում արդէն եկամտի հարկը (income tax) որոշ և պարզ ձևով մտցուած է. մինչև 50 ֆունտ ստերլինգ (?) եկամուտը համարւում է ապրուստի ամենաանհրաժեշտ միջոց և նրա վրայ հարկ չի դրւում, իսկ նրանից աւել եկամուտ ունեցողի ամեն մի սակի եկամտից առնւում է որոշ քանակութեան հարկ։ Պրուսսիայի մէջ էլ 1872 թուին մինչև 420 մարկ (210 մանէթ) եկամուտ ունեցողը վճարում էր ամեն մի մարկի համար (50 կոպէկ) մի քանի պֆենիկ։ Իսկ 1883 թուին գոյութեան ամենաանհրաժեշտ չափը 420-ից բարձրացաւ մինչև 900 մարկի (450 մանէթ)։ (Տես Deutsche Rundschau, Eugen von Philippovich-ի յօդուածը—Steuerreform und Socialpolitik, XX, № 7)։ Նոյն սկզբունքը մտցուած է, քիչ կամ շատ չափերով և Աւստրիայում, և՛ միւս Արևմտեան Եւրոպական մեծ ու խոշոր պետութիւնների մէջ։ Բայց այդ հարկի հետ միասին կան և բազմաթիւ ուրիշ ուղղակի և անուղղակի հար-

կեր, և դեռ այնքան մօտ չէ այն օրը երբ բոլոր հարկերը կոչնչանան և տեղի կը տան մի ուղղակի հարկի։

Ա.ռ այժմ մարդիկ ոչ միայն ձգտում են շատ ունեցողից շատ վերցնել հարկ, քիչ ունեցողից՝ քիչ, այլև աշխատում են եկամտային հարկը վերածել առաջատական ձևի (impôt progressif—прогрессивный налогъ), այսինքն եկամտի առաջին 1000-ից վերցնել, օրինակ 5, երկրորդ հազարից ոչ թէ 2×5, այլ օրինակ, 2×5+2=12 և այլն։ Դրա հետ միասին օր օրի վրայ շատանում են ձայներն ընդդէմ անուղղակի հարկերի, նամանաւանդ սպառող մեծամասնութեան, բանուորների, չունևորների գործածութեան համար ամենաանհրաժեշտ իրերի վրայ դրած անուղղակի հարկերի դէմ։

II.

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տաճկաստանը, մանաւանդ Նրա Ներքին Ասիական նահանգներն այնպիսի երկիրներ են, շրջապատուած այնպիսի ինքնօրինակ պայմաններով, որ նրանց երբէք չի կարելի դասաւորել ուրիշ պետութիւնների շարքում և ընդհանուր օրէնքներ դուրս բերել նրա հարկային սիստեմի մասին։ Օրինակ՝ թիչ ու շատ քաղաքակիրթ բոլոր երկիրների հարկերը բաժանուում են երկու սրոչ խմբերի, ուղղակի և անուղղակի հարկեր։ Իսկ Տաճկաստանի հարկերը 3 խումբ են, այն էլ իրենց ինքնուրոյն բաժանմունքներով։ Ուղղակի և անուղղակի պետական կամ օրինական հարկերի վրայ աւելանում է կրթուած մարդու համար անըմբռնելի մի հարկ հասայօրինի հարկ։ Զուր տեղը կորոնէիք դուք քաղաքատնտեսական բառարաններում մի այդպիսի վայրենի հասկացողութիւն։ Ամեն հարկ օրենքով է դնում, իսկ ասյորինի հարկ ոչ մի տեղ չի կարելի վերցնել, բացի Տաճկաստանից... Այդ խումբ հարկերը քրդերի, չերքէզների, ալբանացիների, մասամբ լազերի, գաղտնների և այլ թափառական դնուած ցեղերի վերցրած

հարկերն են, որ առնում են գինիի գրոսի, «ուժեղի գերազույն իրաւունքով»։

Մի ուրիշ օրինակ։ Ամեն բաղաքակիրթ պետութիւն ունի աւնուղղակի հարկեր և այն էլ խոշոր չափերով։ Տաճկաստանն էլ ունի, միայն ոսպրմելի, խղճուկ չափերով, որովհետև ինդուստրիա չունի իր ներսում. պատրաստի ապրանքներն ստանում է դրսից՝ Եւրոպայից։ Իսկ Եւրոպան թուրքի հետ դաշնագիրներ ունի. 100 ոսկու արժէք ունեցող ապրանքի համար 8 ոսկուց աւելի մաքս հարկ չի տալիս թուրքի գանձարանին։

Առաջնակարգ պետութիւնների մէջ յաճախ արդիւնաբերութեան և վաճառականութեան այս կամ այն ճիւղը մենաւաճառութիւն է։ Տաճկաստանում էլ կայ այդ մենաւաճառութիւնը։ Տարբերութիւնը նրանումն է, որ ուրիշ պետութիւնների մէջ մենաւաճառը կամ ինքը՝ պետութիւնն է և կամ՝ նրա որոշ պայմաններով՝ տեղական կամ այլ դրամատէրերը, իսկ Տաճկաստանում մենաւաճառ են հանդիսանում միայն օտար դրամատէրերը, որ խոշոր փոխատուութիւններ են արել Մարգարէի փոխանորդին և դրա փոխարէն ստացել են ծխախոտի, աղի, ձկների, ծուների և գետերի ձկնորսութեան, մաքսատեղերի, ոսկերչի խմիչքների, մետաքսի, ծուխերի, փարոսների և այլ մենաւաճառութիւններ։ Միւս

պետութիւնների մէջ կամ պետութիւնը, կամ նրա թոյլտուութեամբ տեղական դրամատէրերը գների որոշ չափեր (normes) են նշանակում մենաշնորհուած ապրանքների համար. իսկ Ռուսական-նում պարտատէր—մենավաճառները դիտում են ամբողջ երկիրը և նրա բնակիչներն իբր ոչխար—կեպեքիր, որքան կարող ես, «կտրիր ուկեր», որքան հնարաւոր է!

Ուրիշ երկրների մէջ ուղղակի հարկերը ծանրանում են գլխաւորապէս հողերի, այգիների, տների և այլ շինութիւնների վրայ։ Իսկ Ռուսաստանում նրանք ծանր բարի պէս ճնշում են գիւղատնտեսական բոլոր արդիւնքները, անհատի գոյութեան իրաւունքը, արհեստաւորի ձիրքը և այլն, ի հարկէ չբնայելով ոչ հողային սեփականութիւնը, ոչ ուրիշ անշարժ կալուածները, ոչ էլ տնային կենդանիներին։

Մեր նպատակն է ծանօթացնել ընթերցող հասարակութեանը գլխաւորապէս Ռուսական-հայաստանի պետական ուղղակի հարկերի, նրանց գանձման սիստեմի, նրանցից առաջացած տնտեսական դրութեան և այլ երևոյթների հետ։ Դրա համար էլ մենք կը բաւականանանք միայն համառօտ ակնարկներ գցելով անուղղակի հարկերի և թափառական ցեղերի առած տուրքերի վրայ, թողնելով աւելի ձե-

ընտաս անձերի նրանց մանրամասն ուսումնասիրութիւնը։

III.

ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԸ

Պետական կամ օրինական ուղղակի հարկերը մօտաւորապէս հետեւեալներն են. 1) գլխահարկ կամ Բէդելը-էսկերիէ կամ զինուորական տուրք, 2) կարուածների հարկեր. ա) Տան հարկ կամ Էմլաք կամ Միւլքիէ և բ. Հողային հարկ կամ Արազը-Վէրգիսի 3) Եօր-Փարասը կամ ճանապարհների հարկ. 4) Զբաղմունքի հարկ կամ թիճարեթ, կամ դեմեթ-թօհար կամ թեմեթքի, 5) Ամուսնական կամ ընտանեկան հարկ, 6) կենդանիների հարկ կամ Աղնամ կամ Խամչուր 7) Երկրագործական հարկ կամ Աշար (տասանորդ), 8) Իմթիհազ կամ ժառանգութեան հարկ. 9) Ապահովութեան հարկ կամ բազմանդ փարասը և 10) Պետական պատանական հարկեր։

Քննենք կամ նկարագրենք, ի հարկէ՝ որքան կարելի է—այդ հարկերից ամեն մէկին առանձին-առանձին։

1) Գլխահարկ կամ Բէդէլը-Էսկէրիէ.

Սա գինուորական հարկն է։ Տաճկաստանում քրիստոնեան գինուոր չի կարող լինել. գինուոր առնում են միայն մահմեդականներից, իսկ դրա փոխարէն՝ ռայան, հպատակ քրիստոնեան հարկ է տալիս։ Տաճկական օրէնքով ամեն 135 արու անձից մի գինուոր է վերցնում։ Դրա համար էլ ամեն 135 քրիստոնեայ արու ռայա պէտք է տայ մի գինուորի արժէքը դրամով, իբր փոխարինութիւն գինուորական ծառայութեան։ Տաճկաստանում ամեն մի գինուորը գնահատւում է 5,000 դահեկան (մի դահեկանը կամ մի զուրուշը արժէ մօտ 8—8½ կոպէկ, իսկ մէկ լիրան արժէ 108 դահեկան ընթացիկ գին)։ Այդպիսով՝ իւրաքանչիւր արու ռայայի վրա ընկնում է 37¼ դահեկան գինուորական տուրք։[1]

Բէդէլը-Էսկէրիէն առնում է 5 օրականից մինչև 75 տարեկան հասակը ամեն արու ռայայից, լինի նա կապ, կոյր, հաշմանդամ, առողջ-միտոյնն է։ Ի հարկէ օրէնքը նախատեսնում է «գինորութեան համար անպէտք» անձերի այս հարկից ազատելու պարագաները. նա կապերին, կոյրերին, պակասաւորներին և այլն՝ ազատում է այս տուրքից, միայն թէ՝ թէ՝ ձևով՝ այդ մենք կը տեսնենք մի քիչ վարը։

Նախ քան այս հարկի հաւաքման ձևի և

Նրանում կատարուող բազմաթիւ զեղծումների մասին խօսելը՝ մենք չենք կարող չբացատրել Նրա ծագումը, որ ներկայացնում է մի տեսակ սոցիոլոգիական հնութիւն, որ գոյութիւն ունէր հին Ամէնքում, Սպարտայում, Հռոմում, Եգիպտոսում և այլն, և որ այսօր էլ դեռ գոյութիւն ունի մահմեդական Պարսկաստանում և Աֆրիկայի վայրենի ու բարբարոս ցեղերի մէջ։

Բեդելը-եակերիե՝ բառացի նշանակում է «զինուորական փոխարէն»։ Ինչպէս ասացինք, *ռայեան* զինուոր չի տալիս և դրա փոխարէն պէտք է վճարէ այդ հարկը։ Զինուոր վերցնել. զէնք տալ *գեաուր* ռայեայի ձեռքը և նրան վարժեցնել այդ զէնքը գործածել՝ կը նշանակէ չափազանց միամիտ լինել։ Չէ՞ որ դժգոհութեան, անարդարութեան կամ ճնշման առաջին դէպքում և եթէ Մարդարէի փոխանորդի տուած սուր զէնքը կըգտնար իր և իր հաւատարիմ հետևորդների դէմ։

Բայց *բեդելը-եակերիե* նոր բառ է, արաբական լեզուից վերցրած հաղիւ 40—50 տարուան դիմակ է։ Ստոյգ է, անունը լոկ հնչիւն է, գլխաւորը երևոյթի էութիւնն է. բայց երբեմն էլ անունը ցոյց է տալիս բնորոշ կերպով *եուրեական* սուր, «մուռտաս» ծագումը։

Քանի դեռ թրքական լեզուն այսօրուան պէս չէր ստրկացել արաբական լեզի առաջ, այդ հարկի անունը «խարաջ» էր, *խարաջ*—capitation—գլխահարկ։ Դեռ 50-ական թուականներին Մ. Ա. Ուրիչինին հետևեալն է ասում խարաջի մասին. «խարաջն այժմ այլևս այն չէ՝ ինչ էր առաջ, երբ նա գրեցաւ յաղթողների կողմից յաղթուածների վրայ, իբր մի նիւթական (գրամական) պատիժ, որ փոխարինում էր գերութիւնը և նոյն իսկ մահը, որին արժանի էին. իսլամականների աչքում, յաղթուած քրիստոնեաները կամ իսլամի ճշմարտութիւնները չճանաչելու կամ նրա զէնքի ուժին դիմադրելու պատճառով։ Ինչ որ ունէր նա (խարաջը) իր մէջ ստորացնող և զզուելի քրիստոնեայ ժողովրդների համար՝ անհետացել է. այժմ նա դիտւում է երկու կողմից էլ իբր փոխարինութիւն այն աւեալի հարկի (զինուորութեան) որ ծանրանում է լոկ մահմեդականների վրայ. (Lettres sur la Turquie—I partie, page 280)։ Այսպէս էր ասում թրքասէր Ուրիչինին, դեռ 1853 թուականին։

Բայց այս երևոյթը նոր չի ծնուել տաճիկների մէջ և ոչ էլ միայն նրանց է յատուկ։ Բոլոր տիրող բարբարոս ցեղերը օգտուել են այդ

սկզբունքից իրենց հպատակների վերաբերութիւնամբ։

Երբ Սուլէյմանի առաջնորդութեամբ՝ 1224 թուին թուրքերը գաղթեցին Խորասանից և բուն դրին Հայոց Երկրի արևմտա-հարաւային մասերում՝ նրանք դեռ վրանաբնակ թափառական բարբարոսներ էին, աւելի վատ՝ քան այսօրուան լեռնական քուրդը։ Սուլէյմանի բարբարոս հորդայի բոլոր արու և մասամբ էգ անդամները զինուած կուռոներ էին, ճիշտ այնպէս—ինչպէս առաջին գլխում ակնարկեցինք սկզբնական այն ցեղերի մասին, որոնց մէջ դեռ պեռտրիւն չի ծնուել։ Սուլէյմանը՝ ցանկալով վերադառնալ Խորասան, ճանապարհին մեռնում է և նրա 4 որդիներից երկուսը տանում են նրա հորդայի մեծ մասը Պարսկաստան, իսկ միւս երկու որդիքը՝ Դենդարը և Երտօղրուլը՝ 400 ընտանիքով, չեցին գէպի Արևմուտք, Ալէպպին I սելջուկեան սուլթանի հովանաւորութիւնը խնդրելու։ Ալէպպինը տուեց քաջ Երտօղրուլին Փրիւգիայի Գարահիսար քաղաքի մօտերը եղած Բիլէճիք ամրոցն իր հոտերով, ուր և Երտօղրուլը իշխեց մինչև 1288 թիւը։ Նրան փոխարինեց իր որդին՝ Օսմանը կամ Օթմանը, որ իրեն հրատարակեց Բիլէջիկի և Գարահիսարի սուլթան և իր անունով սկսեց փող

կորել տալ։ Էրտոգրուլի և Օսմանի ժամանակ իսկ թուրքերը սկսեցին տիրել Հայաստանի արևմտեան մասերին (Տես՝ Веберъ, Всеобщ. История, т. VIII, էջ 580—581 և Գ. եպ. Այվազովսկի — «Պատմութիւն տանն Օսմանեան», հատ. I)։ Նրանք տիրեցին և կամաց-կամաց հպատակեցրին իրենց բնակած շրջանի բոլոր ազգաբնակութիւնները։ Այդ տիրող ցեղը, տիրիրն կամ աշիրեթը բնականաբար իրեն համարում էր աւելի ազնիւ ծագումով, որ կոչած էր միայն տիրելու, զէնք գործածելու, և կուելու իսկ բոլոր տիրուած ռայաներին ստիպուած են հպատակել, աշխատել և տիրողներին ապրելու միջոց մատակարարել։ Օսմանի ցեղը իսկոյն զբրկեց հպատակներին զէնք կրելու իրաւունքից վերհում ակնարկած պարզ պատճառով։ Վայ յաղթուողին... յաղթողը տէր է նրա կեանքի, նրա գլխի, նրա գոյքի։ Տիրողը «բաշխեց» նրան իր կեանքը. նա կարող էր սպանել, նրա արիւնը թափել, նրան շղթաների մէջ պահել։ Բայց նա այդ չարեց, այլ գլխագին, արեան գին, խարաջ—դանիփարասը դրեց նրա վրայ։ Եւ հպատակը պիտի վճարէ ամեն տարի այդ հարկը. նա դրանով գնեց իր կեանքը։ Ու վճարելիս նա մէջտեղ պիտի յիշէ, որ ինքը մահուան

գատապարտած մի սարսուռ է... մի յոլթված, մի թոյլ...

Այդ բաւական չէ։ Տիրողը հպատակից տարբերելու համար՝ զրկեց նրան որոշ գոյնի զգեստներ հագնելու, որոշ տեսակ գլխարկ ծածկելու իրաւունքից։ Օրինակ՝ ռայան կարմիր հագուստ կրելու իրաւունք չունէր, որովհետև բարբարոս արևելցու ազգային երևակայութիւնն այդ խիստ գոյնը համարում էր ազնուականութեան նշան։ Այդ էլ բաւական չէ։ Անզէնացած ռայաները զրկուեցան և պետական դատարանում վկայութիւն տալու իրաւունքից, երբ այդ վկայութիւնը տիրող ցեղի անդամներից մէկի կամ նրանց կրօնակիցների դէմ էր ուղղած։ Ռայեայի վկայութիւնն ընդունւում էր միայն ռայայի դէմ։

Մահմեդի կրօնը լրացրեց ու սրբազործեց տիրող Օսմանցիների այս բարբարոս սովորութիւնները, դարձրեց նրանց Շարիէթի օրէնք, իբր մարգարէի բերանով Աղատից տրուած անխախտելի դիրք։

Անցան տարիներ և դարեր։ Օսմանի հաւասարասէր տիրող ցեղի անդամները չատացան։ Նրանց մէջ էլ առաջացան նիւթական անհրաժեշտութիւնից ստիպուած՝ երկրագործներ, արհեստաւորներ, վաճառականներ։ Աշ-

խատանքը բաժանեցաւ։ Ծնունդ առան և զարգացան ազգատ ու հարուստ, աշխատաւոր կամ կառավարող և կառավարող դասակարգեր։ Ռայան և տիրող ցեղի ահագին մեծամասնութիւնը տնտեսապէս իրար հաւասարեցան և մինչև իսկ տիրողների ազգատ մասը ռայայից էլ աւելի նեղ նիւթական վիճակի հասաւ, որովհետև աւելի յետամնաց, աւելի քիչ կուլտուրական տարր էին։ Բայց որովհետև երկրի օրէնքները հրատարակուած էին իբր անխախտ Աստուածային դիրք, որ փոփոխել անկարելի է, դրա համար էլ բոլոր մահմեդական տարրերը պահպանեցին իրենց սկզբնական՝ տիրողի առանձնաշնորհումները։ Մինչև օրս էլ ռայայից շատ աւելի ազգատ թուրքն ու բուրտը զէնք կրելու իրաւունք ունին. մինչև օրս էլ ռայայի վկայութիւնը էապէս դին չունի մահմեդականի դէմ, թէև Բեռլինի դաշնագիրը «թղթի վրայ» ոչնչացրեց այդ բարբարոս օրէնքը։

Այսպէս ուրեմն՝ գլխահարկը, զէնք կրելու իրաւունքից զուրկ լինելը, վկայութեան չնդունելը և այլն՝ մնացորդներ են հին, բարբարոս ժամանակների։ Ժամանակը հասարակական կազմը, նրա պայմանները, տնտեսական ու քաղաքական կեանքը զարգացել, առաջ են շարժուել,

իսկ երկրի որոշ օրէնքները, նրա մի քանի ինստիտուտները մնացել են հին տարրերինը։ Դրանից առաջացել է մի հրէշաւոր դիսոնանս կեանքի ներկայ պահանջների և հնացած ինստիտուտների մէջ։ Եւ դրա շնորհով ամբողջ Տաճկաստանը այսօր մի կարմիր, մի արիւնոտ ծով է դառել։

Տարօրինակ բան. գինուոր չեն առնում ռայայից, գրկում են նրան զէնք կրելու իրաւունքից, խլում են նրանից բարբարոս երկրում իրաւունք ճանաչեցնել տուող այդ միակ գործիքը՝ դրանով ռայային դնում են մի անպաշտպան ստրկի դրութեան մէջ և դեռ նրանից հարկ էլ են ուզում, որ այդքան ողորմելի, այդքան ստոր դրութեան հասցրին նրան...

Բայց օրէնքը, տառը անփոփոխ է մնում, իսկ էութիւնը փոփոխւում է։ Սկզբնական խարաջն էլ փոփոխուեցաւ և կամաց-կամաց դարձաւ այսօրուան բէդէլը-էոկէրիէն։

Դեռ 1570 թուին Լիսնում հրատարակած իր գրքում ֆրանսիայի դիտնական Ռիգոն հետեւեալն է ասում. «Սուլթան Բայազէդի ժամանակի (XV դար) հաշիւն արին և գտան, որ նա ունէր իր իշխանութեան տակ 1.110.000 հարկ վճարող քրիստոնեաներ, չհաշուելով նրա գերիշխանութիւնը ճանաչող մանր իշխանու-

թիւնները և քրիստոնեաների երեխաները, որ փոքր են եւ հարկ վճարելու հասակին դեռ հասած չեն» (La Généalogie du grand Turc, etc. Lyon, 1570 թիւ)։

Այս քաղուածքից պարզ երևում է, որ առաջներում գլխահարկ վճարում էին միայն հասակաւոր արու անձերը, իսկ փոքրիներն ու կիները ազատ էին այդ հարկից։

1834 թիւին, Սուլթան Մահմուդի օրով փատիշահի մի իրաւեղով հրամայուեցաւ խարաջ առնել ամեն գլխի համար 15, 30 և 60 դահեկան՝ համաձայն կարողութեան։ Ազատ էին խարաջից կիները, երեխաները, ցնորածները, պակասաւորները, աղքատները և հոգևորականները. 1850-ական թուերի դրոց Ուրիշինի կարծիքով՝ այդ հարկի միջին չափը պէտք է հաշուել 40-ական թուերի համար՝ 25 դահեկան, որովհետև հարուստ քրիստոնեաների թիւը շատ քիչ էր. իսկ մենք կաւելացնենք, որ ամենախոշոր հարուստներն ապրում էին Պոլսում.— նրանք էլ, իրը մայրաքաղաքի բնակիչներ՝ ազատ էին այդ անպատուաբեր հարկից։ Մեր կարծիքով՝ Հայկական գաւառների համար հաղիւ կարելի լինէր այն ժամանակւայ գլխահարկը 20 դահեկան հաշուել։ Եւ այդպիսի վիճակագրութիւններ էլ մինչև օրս կարելի է լսել Ցաճ-

կական լծի տակ ապրած գառամեալ ժերերից։

Սուլթան Մահմուդի օրով, համաձայն այդ իրադէի, պէտք է հաւաքուէր 40.000.000 դահեկան խարաջ. ասել է—մօտ 1.600.000 հարկատու արու քիստոնեաներ են եղել այդ թուերին։

Նախ քան 1834-ի ֆիրմանը՝ այդ հարկը գանձւում է յատուկ նշանակած գործակալների կամ դոշաֆի-ների ձեռքով։ Բիանքին իր «բառարանի» մէջ յիշում է մի շատ բնորոշ միջոց, որ գործ էին դնում դոշաֆիները հարկատու հասակին հասած լինելը իմանալու համար։ Նրանք թելով չափում էին երեխայի վիզը, յետոյ թելի երկու ծայրերը տղային էին տալիս ատամներով ամուր բռնելու համար և փորձում էին անցկացնել նրա գլուխը թելի կազմած շրջանի միջով։ Եթէ անցնում էր, նրա վրայ նշանակում էին խարաջի ամենափոքր չափը, որ յետոյ աճելով՝ հասնում էր նրա կարողութեան համար որոշած ամենամեծ չափին։ (Bianchi-«Dictionnaire»-Kharadj բառը)։

1834-ի իրադէն մասամբ վերջ դրեց գոլճիների անկարգութիւններին, յանձնելով գլխահարկի բաշխումը, նրա չափի որոշումը և գանձումը՝ գաղիին, միւսլիմին և ղօխղային

կամ նրանց ներկայացուցիչներին. սրանք պէտք է իրենց ժողովին հրաւիրէին փաշազ-ներին (քահանայ) և «խոջա-բաշիներին» կամ ժողովրդի «իշխաններին»։ 1850 թուին, Սուլթան Աբդ-իւլ Մեջիդի օրով՝ մի նոր ֆիրման յայտարարուեց, որ «այսուհետև գլխահարկի գործում միայն քրիստոնեաների և հրէաների կրօնական պետերը պէտք է լինեն միջնորդ հարկատու ժողովրդի և գանձարանի մէջ։ Այս իրաւունքով հիմք դրուեցաւ ժողովրդի «համայնական պատասխանատուութեան» (in corpore), որի արդիւնքը կըտեսնենք քիչ յետոյ։

Այսպէս որեմն՝ XVIII դարի վերջերում 10 դահեկան եղող գլխահարկը 1834-ի իրաւունքով բարձրացաւ մինչև 20 դահեկանի, իսկ 1850-ի իրաւունքով և մանաւանդ Խրիմի պատերազմից յետոյ տիրող թրքական նիւթական խիստ կրիզի պատճառն եղած կարգադրութիւններով՝ նա հասաւ 27 դահեկան 30 փարայի ($27^3/_4$ դահ.)։ Իսկ վերջին ռուս-թրքական պատերազմից յետոյ նրա քանակութիւնը հասաւ $37^1/_4$ դահ. ահագին չափին։ Միւս կողմից՝ նախ քան Համիդ II-ի «ողորմած» թագաւորութիւնը միշտ մինչև 15 տարեկան հասակը՝ երեխաներն ազատ էին այդ ճնշող հարկից, իսկ այդ թագաւորութեան օրով բոլոր արու անձերը՝ ծնած օրից սկսած

մինչև խոր ծերութիւն՝ ենթարկուեցան այդ հարկին։

Դառնանք բէգէլը-էսկէրիէի գանձելու ներկայ եղանակին։

Կառավարութիւնը հաշուում է ամեն գիւղի, ամեն համայնքի կամ թաղի արու բնակիչների ընդհանուր թիւը և իւրաքանչիւրի համար նշանակելով 37¹/₄ դահեկան տարեկան՝ ընդհանուր գումարը յայտնում է հոգևոր վարչութեան, վերջինս էլ տեղական ներկայացուցչին։ Ինչպէս ասացինք, այդ արուների մէջ կարող են լինել կաղեր, կոյրեր, հաշմանդամներ, հիւանդոտներ, խեղառներ, համրեր և այլն. դրանք բոլորն էլ մնում են հարկատուների ընդհանուր թուի մէջ։ Կառավարութիւնը ճանաչում է գիւղը, թաղը կամ համայնքը— ընդհանրութիւնը (եկ ճեմաաթ) իբր մի ամբողջութիւն, որ պէտք է որոշ գումարը լրիւ վճարէ։ Բայց մեծահոգի կառավարութիւնը մտածում է և այդ դիւրութեան համար անպէտք անձերի մասին։ Մի կողմից նա նրանց վրայ էլ հարկ է դնում, միւս կողմից բոլոր հարկի գումարը պահանջում է ամբողջութիւնից, որ իր մի դահեկանն անգամ չկորչի. իսկ երրորդ կողմից յանձնարարում է հարկատու համայնքին, որ 15 տարեկանից փոքր

անձերի տուրքը քիչ նշանակեն, որ հաշման-դամներին, մնասուածներին, խելառներին կամ բստ տաճիկների՝ «Աստծու մարդկանց» և այլն՝ բոլորովին ազատեն հարկից։ Սա բարեգործություն է, բայց ի հաշիւ ժողովրդի, ի հաշիւ հարկատու համայնքի վճարելու ընդունակ անձերի։ Թաղը, համայնքը և այլն՝ ծառայում են կառավարութեան աչքում իբր Քիսակաշ հիմնարկութիւններ։ Անկարող անհատներից դժուար է հարկերը գանձել՝ ուրեմն՝ թող ամբողջութիւնը վճարէ, թող համայնքը լինի պատասխանատու իր բոլոր անդամների համար պետական գանձարանի առաջ։ Սա 1850 թուի իրաւունքն էր։

Ենթադրենք, որ գիւղի վրայ ընկել է ուղիղ 10 000 դահեկան, որովհետև համաձայն առաջնորդարանի տուած տեղեկութիւնների և «համիդիէ» թղթերի կամ ծննդեան վկայականների՝ այդ գիւղում կայ 270 տղամարդ 1-ից մինչև 75 տարեկան հասակը։ Հարկը բաժնւում է (բաւական անել), բայց հէնց դրա երկրորդ օրը կարող են մեռնել 10 արու զաւակներ. այդ նշանակութիւն չունի՝ մեռածից էլ հարկն առնում են ցնոր կարգադրութիւն։

Ամեն գիւղի կամ թաղի բէգելը-էսկէրիէի չափը որոշելուց յետոյ՝ յանձնւում է միաբարին

գանձերու։ Մխտարն ընտրուում է գիւղից կամ թաղերից, և ներկայանում է կառավարութիւնն առաջ իրր պատասխանատու իր շրջանի զինուորական տուրքի համար։ Միևնոյն մարդը կարող է լինել մի տարի մէկ, երկու և աւելի գիւղերի կամ թաղերի համար։

Ընտրած մխտարի համար կառավարութիւնը պահանջում է առնուազը 2—3 կարող երաշխաւոր անձեր ամեն գիւղից կամ թաղից, որ եթէ մխտարը փչացնի կամ ծախսի հաւաքած գումարներից, այդ ստորագրողները պարտաւոր լինեն վճարել նրա փոխարէն։ Իսկ այդ մխտարին երաշխաւոր կանգնող անձերը յաճախ վերցնում են նրանից որոշ ստորագրութիւն, և իրր գրաւական, կամ նրա հողերը, կամ նրա տունն ու այգին։ Իսկ եթէ Մխտարն ունի այնքան կալւած, որ կարող է ապահովացնել իր շրջանի հարկերը՝ կալւածները կըգնէ կառավարութիւնն մօտ իրր գրաւական և այլ ևս երաշխաւորների կարիք չի ունենայ։

Այսպէս փոխադարձ ապահովելուց և բոլոր ձեռնարկութիւնները կատարելուց յետոյ՝ «ժողովրդից» ընտրած մխտարը մտնում է իր պաշտօնի մէջ։ Նա կամ ինքն է հաւաքում հարկը կամ իր կողմից նշանակում է հարկահաններ (գապզրմար)։ Մխտարը կամ գապզը-

մալը միշտ ստանում է կառավարութիւնից մի քանի զափրիեներ (ոստիկան) հարկերը գանձելու համար։ Եթէ որևէ անձ չի տալիս տուրքը՝ մխտարը նրան անմիջապէս բանտարկել կըտայ Ալայ-բէյի կամ Զարիֆա-Մէմուրի (զափրիեների մեծի) միջոցով, կամ չվճարողի կահ-կարասին, անկողինը, անհրաժեշտ բոլոր իրերը ծախում և պարտքը լրացնում են։

Մխտարն ստանում է որոշ ռոճիկ, նայելով իրեն ընտրողների հետ կապած պայմանին։ Նրա ռոճկի չափը կախված է հաւաքելիք հարկի չափից։ 100-ին 4—10% նշանակում է մխտարի համար և բարդում ժողովրդի վրայ, այնպէս որ հարկահանը կամ մխտարը կառավարութիւնից ոչինչ ծախք չի պահանջում։

Իրաքանչիւր գիւղի կամ թաղի յայտնը-ւում է իր վճարելիք հարկը և ապա համայնքն սկսում է այդ որոշ գումարը բաժանել (թաւճ անել) իր անդամների վրայ համեմատական սկզբունքով. շատ ունեցողից շատ են առնում, քիչ ունեցողից՝—քիչ. իսկ ապրատներին, անկարողներին և պակասաւորներին բոլորովին ազատում են տուրքից, ի հարկէ բարդելով նրանց բաժինները ունեորների վրայ։ Եթէ նահապետական ժողովրդի մէջ մնացած այս արդարասէր փոքրիկ մնացորդներն էլ տեղ-տեղ

գոյութիւն չունենային՝ վարձուց հիմնայատակ եղած կը լինէր թրքահպատակ բրիստոնեաների բոլոր տնտեսութիւնը։

Գիւղի կամ թաղի մէջ բաժանած հարկերը ցուցակագրում և հոգևոր կառավարութեան կամ առաջնորդարանի միջոցով յայտնում են կառավարութեան. այս վերջինս էլ ցուցակագրելով այն իւր թղթերում, մի օրինակ պաշտօնապէս ուղարկում է մխտարին, որ սկսի գանձումը։

Հարկերից ամենապարզը և, ըստ երևոյթին՝ այնպիսին, որի մէջ ոչ մի հնար չպէտք է լինէր որևէ զեղծում գործելու՝ այս զինուորական հարկն է։ Բայց յետամնաց ու անիշխանութեան մատնուած երկրներում ոչինչ չի կարող կատարուել առանց զեղծումների։ Բէտէլը-Էսկէրիէի գանձման մէջ էլ մտնում են բազմաթիւ զեղծումներ։ Յիշենք մի քանի գլխաւորները։

Մխտարի ընտրութեան մէջ, հարկերի համփայական բաժանման խնդրում և այլ «հասարակական վճիռներով» կատարուող գործերում համարեա երբէք հասարակութիւնը չի մասնակցում իր բոլոր հասակաւոր անդամներով. ամեն տեսակ ընտրութիւններ, ժողովներ ու վճիռներ կայացնում են հասարակութեան մի քանի «իշխանները կամ հարուստ, ազդեցիկ անձերը, որ և ժողովուրդի արիւնը ծծող վաշխառուներն

են։ Սա, իհարկէ, արդիւնք է մեր ժողովուրդի խաւար, մութ մտաւոր վիճակի, նրա դարեւոր ստրկական կեանքի ու բնաւորութեան։

Բէտէլը-Էսկէրիէն բաժանում են այդ «իշխանները» գիւղերում և ապա թուլթը ուղարկում մօտաւոր հոգեւոր վարչութեան, իսկ քաղաքներում՝ այդ անում են առաջնորդի մասնակցութեամբ։ Առաջնորդարանը այդ իրը թէ «հասարակական վճիռը» ուղարկում է կառավարութեան, որ և վերադարձնում է մխտարին դանձելու։

Ցկէտ, անդրադէտ ռամիկը ոչինչ չի հասկանում այդ ժողովներից, այդ օրէնքներից, կարգերից ու վճիռներից։ Հոգեւորականը, որ պիտի նրա օգուտը մտածէ, առաջնորդը, որ պէտք է նրան առաջնորդէ դէպի լաւը, բարին ու մաքուրը՝ միանում է համարեա միօտ կեղեքողի, վաշխառուի, տզրուկ ազայի հետ։ Ամբոխը, ռամիկը մնում է մոլորած ոչխարի վիճակում։ Մխտարը յայտնում է նրան, թէ հարկն այսքան է որոշուած — և նա լսում, հաւատում է... Ինչ կարող է անել. բողոքելը նրա վրայ միշտ աւելի թանկ է նստել, քան որեւէ ապօրինի պահանջ կատարելը։ Շատ էլ հեշտ մարսելու բան չէ աշխարհիս կարողների կամ իշխանաւորների դէմ բողոքելը նամանաւանդ ապօրինութեան

կամայականութեան ու կաշառակերութեան թագաւորութեան երկրում։

Ուրեմն՝ մի ողորմելի, ոչիւար անգրագէտից շատ կամ քիչ առնելը կախւած է մխտարի բարոյականութիւնից։ Եւ ահա ձեզ զեղծման մի հոկայական դուռ բացւած։

Հարկն ստանում է մխտարը և ստացագիրը է տալիս, այն էլ թուրքերէն։ Կարդալ չգիտէ ամբոխը. ինչ և ինչքան է գրւած, իւր համար անյայտ է։ Ծալում, ծոցն է դնում։ Յաճախ ստացւում է շատ՝ գրւում է քիչ։ Երբեմն ստացագիրն է կորչում և մխտարը երկրորդ, նոյն իսկ երրորդ անգամն է գանձում նոյն հարկը նոյն անձից։ Զլուեց, իսկոյն մխտարը բանդ է գցել տալիս ըմբոստին ալայ բէյի միջոցով։ Ամեն մարդ չի կարող տանել տաճկական բանտի, այդ իսկական դժոխքի կեանքը։ Եւ այն ժամանակ սկսւում է կաշառակերութիւնը։ Բանդի հասարակ դռնապանից «բաբուչՀիից», շաուշից սկսեալ մինչև ամենարարձր պաշտօնեան կաշառք են ուտում բանտարկւածից և նրա մասին աշխատող բարեկամներից։ Եւ ինչ անեն ասիական բռնապետութեան այդ մեզի ու ողորմելի ծառաները. ոսկիի չեն ստանում կամ տարւայ մէջ միայն երկու անգամ են ոսկիի երես տեսնում, այն էլ բայրամից բայրամ։ Նրանց

ապրուստի համարեա միակ միջոցը, նոյն իսկ թրքական մայրաքաղաքում՝ կաշառքն է մնում։ 50 դահեկանի համար բանդ գնացող ապրատ անձը հաճախ ծախսում է իրը կաշառք՝ 200-300 դահեկան, մինչև որ կարողանում է իր կաշին այդ ծուղակից ազատել։ Այդ էլ քիչ է։ Վերջին ժամանակներս՝ բանդարկութեան ամեն մի չընչին առթի ժամանակ ասպարէզ է դալիս «կոմիթաճիութիւնը» որով սարսափեցնում են ունեոր և խաղաղ ռայային և կողոպտում նրայ ամբողջ ստացուածքը։ Յաճախ, շատ յաճախ ստեղծում են բանդարկութեան չնչին պատրուակներ. նեռում են բանդը հայ հարուստներ, ծծում, բամում նրա կարողութիւնը, գցում նոյն իսկ պարարի տակ և ապա ազատ արձակում «չընորհիւ վեհափառ Սուլթանի»։ Արդէն «ջուրը պղտորուած» է. բարձրից որոշ ոգի և ուղղութիւն է ներշնչուած. և «ձկնորսների» թիւը բազմացել է։ Զարմանալի չէ, երբ ասում են, որ Տաճկաստանում մարդ բանդ է գնում գաւառի կամ քաղաքի ամենահարուստը համարելով այնտեղից դուրս է դալիս օր հացի կարօտ, իրը մուրացիկ։

Կան գիւղեր ու գաւառներ, ուր ժողովրդի մէջ, ինչպէս վերևում նկատեցինք, հաւասարական կամ համայնական սովորութիւնները մա-

սամբ մնացել են և հարկ առնում է՝ շատ ունեցողից շատ, քչից՝ քիչ։ Բայց շատ տեղեր էլ այդ արդար սովորութիւնը վերացել և անհատականութիւնը խոր արմատ է բռնել։ Այսպիսի տեղերում ազգատ և բազմանդամ ընտանիքները չափազանց ճնշւում են դինուորական տուրքի ծանրութեան տակ։

Թէ համայնականութեան և թէ անհատականութեան շրջաններում հարկահանների գործադրած ամենասովորական և ամենամեռասակար գեղծումը հետեւեալն է։ Մխտարը, համաձայնութեամբ տեղական իշխանութիւնների, իւրացրնում է ժողոված հարկի մի մասը և այն ցոյց է տալիս իբր ապառիկ պանդխտութեան գնացած անձերի վրայ։ Վերադառնում են այդ անձերը պանդխտութիւնից, հետները բերելով իրենց ապի բրտինքի մի քանի քարացած կաթիլները — մի քանի լիրա. կառավարութիւնը բռնում, մխտարի ցոյց տւած բոլոր ապառիկները նրանցից է առնում. տակը մնացած փողն էլ սպառում են միւս պաշտօնեաները՝ շատ շտանջելու կամ «նրա Ստամբոլի, Պուլգարստանի, Մոսկովի մէջ ըրած կոմիթաճիութիւնները» ծածկելու համար։ Իսկ այս ամենի դէմ քրիստոնեայ ռայան մի միջոց միայն ունի. ապաշել, ոտ ու

ձեռք համբուրել, ասնջել ու լռել։ Բողոքելու մասին նա չի մտածում անգամ.

Վեհապետեան Յարութիւն պատրիարքի օրերում (1885 87) լոյս ընկաւ Երուսաղէմի շարաբատիկ պարտքի խնդիրը։ Եթէ չեմ սխալւում այդ պարտքի չափը 60,000 ոսկի էր (մօտ 516,000 ռուբլի). «Ժողովուրդի ցաւը մտածող» Յարութիւն պատրիարքի խնդիրքով Սուլթանը կարգադրեց, որ զինուորական հարկի վրայ աւելացուի ամեն մի արու անձին 3 դահեկանը ևս, որպէսզի 3 տարուայ ընթացքում բոլոր պարտքը դանձի։ Այսպիսով 37½ դահեկանը, դարձաւ 40¼։ Երեք տարի հաւաքեց, «անտակ կարաս» Երուսաղէմի պարտքը վճարեց, իսկ աւելացած 3 դահեկանն այլեւս չվերացաւ... Այդ էլ եղաւ Յարութիւն պատրիարքի հասցրած «խէրը» հայ ժողովուրդին։ Գանձած գումարից 14,000 ոսկի կարծեմ դեռ ևս մնում է կառավարութեան մօտ։ Աշրգեան, Բարդուղիմէոս Իզմիրլեան և նոյն իսկ Յարութիւն պատրիարքները չա՞տ անգամ ջանացին դուրս առնել այդ գումարը, բայց բոլոր ջանքերն իզուր անցան. գանձարանը դատարկ է... Շա՞տ անգամ ժողովուրդը խնդրեց, որ աւելորդ 3 դահեկանը վերցնեն. չա՞տ անգամ բողոքեց, բայց բողոքներին ու խնդիրներին լսող չեղաւ...

Այս հարկը թեթևացնելու համար ժողովուրդը աշխատում է ծածկել իր արու զաւակների թիւը։ Այսպիսի ծածկածներ շատ կան։ Իսկ եթէ պատահեց, որ բացուեց, իսկոյն կառավարութիւնը բոլոր անցած տարիների թիւով 41 գահեկան միանգամից է առնում և մի տուգանք էլ վրան աւելացնում։ 1900 թուականին Բ. Դրան կարգադրութիւնով ամենախիստ հրամաններ գնացին Պօլսից բոլոր գաւառներ, որոնցով հրամայւում էր մխտարներին «արու զաւակի ծնելուց առ առաւելը 48 ժամ յետոյ իմաց տալ պատշաճաւոր վարչութեան»։ Եթէ չիմացրին՝ մխտարը կենթարկի ծանր պատասխանատուութեան։

Տուն, խանութ կամ մի այլ կալուած ծախելու դէպքում պաշտօնեաները քննում են բոլոր «տէֆտէրները» (մատեան) և պապական ու հայրական բոլոր երեսակայական ու իսկական ապառիկները հանում միջից... Մնացած փոքի խէրը թող տեսնի ծախողը։

Կրթութեան և այլ մանր-մունր պատահական կամ մշտական հարկերը բարդւում են առհասարակ այս հարկի վրայ և յանձնւում մխտարին հաւաքելու։

1895-97-ի Հայկական-Սարսափների ժամանակ, երբ գեհ-արիներ ծով էր դարձրել Հայ-

կական բարձրավանդակի ամեն անկիւնները. երբ բոլենիները, անգլները և գիշակեր ամեն անասունները հարուստ սեղան ունէին անտէր մնացած քրիստոնէական դիակներով. երբ բաշիբոզուքների, սոֆիմաների, քրդերի և կանոնաւոր կայսերական զինուորների գնդակներից ազատուածները սովի և նրանից առաջացած զանգան մահացու հիւանդութիւնների ճանկերում զարարում էին. մի խօսքով՝ երբ ամբողջ երկիրը մի անվերջ սպանդանոց, անկեղանոց ու գերեզմանատուն էր ներկայացնում և ողջ մնացած, սովամահի դուռը հասած որբուկներից, այրիներից ու ծերերից այլեւ ոչինչ չէր կարելի դանձել՝—ճիշտ այդ ժամանակ դուրս եկաւ մի կայսերական ոգորմած իրատ. «Ներել հայկական նահանգների 5 տարուան բէտէլը-էսկէրիէն»։ Մօտաւորապէս այդ էր իրատի միտքը, միայն մէջ ու երկդիմի գրուած։ Ու Պօրտական տարկական մամուլը փոր փշեց, թմբուկ զարկեց, մինչեւ երկինք հանեց այդպիսի մի «Հայրական գթասրտութիւն» և այլն, և այլն։ Բայց ֆրանսիական առածն ասում է. «ինչ որ գալիս է փոքով (զուանա), գնում է թմբուկով» Այդպէս էլ եկաւ։ 1900 թուին, հայոց պատրիարք Օրմանեան էֆէնդիի օրով, Եւրոպից հրաման եկաւ. «դանձել հայերի զինուորա-

կան տուրքի այս 5 տարուան պարտքերը»։ Օրմանեան ու Ազգային ժողով իրար խառնուեցան։ Երբարդ գնալ գալը դարձաւ «փարամը». շատ դիմումներ, շատ խնդիրներ ու աղերսներ... բայց լսող չեղաւ։ Սուլթանի անձնական քարտուղարներից Իզզէտ բէյ բացատրեց, որ կայսերական նախկին իրաւէն սխալ է հասկացել. ներւած չի եղել պետական հարկը 5 տարի ժամանակով, այլ միայն յետաձգւած։

Այսպէս՝ ազրատուլթեան ու հոգեվարքի դուռը հասած տաճկահայը յանկարծ 5 տարուան պետական տուրք միասին պարտք եղաւ հայրախնամ Սուլթանական կառավարութեան։ Հրրաման գնաց բոլոր գաւառներն՝ ամենայն խրատութեամբ սկսել գանձել այդ պարտքը։ Բայց ինչ կարելի է գանձելիքներից, մի մեծ ոչնչից!!! Հայի տնտեսութիւնը Տաճկաստանի գաւառներում մի մեծ զէրո է։ Երբ փորձը ցոյց տուեց որ պետական գանձարանը ոչինչ չպիտի մնի այդպիսով՝ կառավարութիւնը իրը թէ լսեց Պատրիարքի խնդիրը և 5 տարուայ պարտքը 3 տարով էլ յետաձգեց։ Ազգային ժողովի մէջ Երուսաղէմայ տան ներկայացուցիչը, Մանկունի եպիսկոպոսները և ուրիշ մի բանի հոգի դէմ էին այդպիսի խնդիր տալուն։ Սրանք ուզում էի դիմել պալատ և խնդրել լսել նրանց. իսկ եթէ

չնիրուէր, նրանք չէին ուզում պարարը յետաձգել տալ, այլ թողնել, որ այժմ եղէ կարող են՝ հաւաքեն, մտածելով, որ բանի յետաձգի, պարտապանի վիճակն այնքան աւելի պիտի վատանայ։

2) Կաշուածական հարկեր.

Սրանք են, Ա.) Տան հարկ՝ կամ Էմլաք կամ միւլքիե և բ) Հողային հարկ կամ Արազը-վերգիսի։ Այս երկու տեսակն էլ գոյութիւն ունեն և գիւղերում, և քաղաքներում։ Սրանց առարկաներն են. տները, խանութները, գոմերը, մարտկները, փարախները, ջրաղացները, բաղնիսներ և այլն, և արօտատեղերը, արտերը և այգիները—միայն նրանց բռնած տեղը, հողը և ոչ բերքերը։

Ներքին գործոց նախարարութեան իշխանութեան տակ կայ մի ատեան, մի հիմնարկութիւն, որ կոչւում է Էմլաք-Դայրէսի։ Ի հարկէ սրա կեդրոնական վարչութեան բոլոր անդամները նշանակւում են կառավարութիւնից, իսկ գաւառական ատորաբաժանումների մէջ նշանակում են մի կամ երկու անդամ իբր թէ ընտրուած անձեր՝ ժողովուրդի կողմից։ Ինչ կարծիք, որ այս «ընտրեալները» լինում են կամ տաճիկ կամ հայ վաչխատուներ, աղաներ, տըգ-

բուկներ, որ աւելի վատ ու զզուելի են, քան թուրք պաշտօնեաները։

Էրմաք դայրէսին գնահատում է բոլոր անշարժ կալուածները, թէ շինութիւնը և թէ հողը,—և ապա գնահատած գումարների համեմատ նշանակում է կալուածների հարկը։ Հողերից, կալուածներից և շենքերից առնում են 1000-ից 6։

Այս հարկերի դանձումն էլ յանձնւում է մխտարին, որին կառավարութիւնը տալիս է նախօրօք տպագրած ստացագրեր կամ *fojaներ*. Մխտարը կպցնում է նրանց վրայ 1 դահեկանոց *մարկաներ* (*փուլ*), գրում վրան իր ստացած գումարը, ստորագրում և յանձնում է կալուածի տիրոջը։ Այդ հարկի վրայ բարձրանում է և մարկայի 1 դահեկանը, և՛ մխտարի 8-10% ռոճիկը, որովհետև մխտարը բոլոր հաւաքած գումարներից է ստանում այդքան տոկոս և ոչ միայն բեդելը-եսկերիեից։ Օրինակ՝ եթէ տունը գնահատած է 16,667 դահ. նրա *միլլիեմ* կլինի ուղիղ 100 դահեկան. մխտարը կըրաբդէ նրա վրայ իւր 8-10% ռոճիկը և մարկայի 1 դահեկանը և բոլորը միասին կլինի 109-111 դահեկան։

Այս հարկերի գեղծումներն էլ համարեա միատեսակ են, ինչպէս բեդելը-եսկերիեինը։ Նոյն անկրպակա ու տգէտ ռամիկը, նոյն շատ

առնել՝ քիչ գրելը ֆոչանեներում (ստացագիր), նոյն երկու-երեք անգամ գանձումը, չտալու դէպքում բանտը, աշայ բեյը, տուն ու կալուածք ծախելը և այլն։ Բացի այս ամենը, սրանց մէջ մի ուրիշ զեղծում էլ կայ, որ յատուկ է միայն այս խումբ հարկերին, դա գնահատութեան մէջ գործադրուող զեղծումն է։ Էմլաք-Դայրէսիի անդամները գնահատում են կայրերը խիստ բարձր գներով, իսկ ժողովուրդը ձգտում է պակասացնել դումարները, հարկը քիչ վճարելու համար։ Եւ սկսում է կաշառակերութիւնը կալուածների տէրերից։ Ով կաշառք չի տալիս, նրա ստացուածքը գնահատում է 3, 4, 5 անգամ աւելի... Ի տարբերութիւն կալուածատէրն աւելի ձեռնտու է համարում մի անգամ կաշառք տալ, քան մի քանի անգամ աւելի հարկ վճարել տարեկան—մինչև նոր գնահատութիւն։

Սրանցում գործադրուող զեղծումների մեծ մասի առաջն կարելի է առնել, եթէ հարկատուն կրթուած, լուսաւորուած լինի։ Բայց «մեղաւորին ով է տալ արքայութիւն»։

3.) Եօղ փարաւաը կամ ճանապարհների հարկ։

Այս հարկը նոր է լոյս ընկել։ Առաջ Տաճկաստանը երբէք կարիք չէր զգում կանոնաւոր ճանապարհների, բայց ներսպական կեանքի և

մանաւորապէս Ռուսիայի հետ ունեցած վերջին ընդհարումը (1877-ի) նրան շատ բան սովորեցրին։ Նա կարիր զգաց և կանոնաւոր ճանապարհների...

Ամբողջ Տաճկա-Հայաստանում միայն երկու հաս խճուղի (շոսէ) կայ. Տրապիզոնից մինչև Երզրում և Սամսոնից դէպի հարաւ, Ամասիայի, Թոխատի վրայով մինչև Սեբաստիա կամ Սրվաց։ Կայ և մի յարդարուած ճանապարհ Սև-ծովի ափերով՝ Շապին-Գարահիսարից մինչև Կիրասուն։ Թէ ինչ ապրմելի վիճակի են այս խուճուղի կոչուած աւերակ ճանապարհները, կարող են ընթռնել միայն նրանք, որ ճանապարհորդել են այդ կողմերում։ Ճանապարհների մեծ մասը բանգուած, ճամբորդների կողմից բարձի թողի արուած. կամրջերը և կառապանները մեծ մասով գնում են կողմնակի, գիւղական ճանապարհներով, բան իսկական խճուղիով։ Համեմատաբար աւելի լաւ վիճակ ունի Տրապիզոնից —Կարին տանող ճանապարհը, իբր զինուորական ուղի։ Երկրի մնացած բոլոր մասերը կարաւանի, սայլի, ոտաւորի գիւղական ուղիներ են (проселочныя дороги), որ կառավարութիւնից ոչ մի ծախք չեն պահանջում։

1877-ի պատերազմից յետոյ սկսեցին առնել եօշ փարասը հարկը, որ ճանապարհներ

չինեն, բայց ահա 22-23 տարի է դեռ պիտի չինեն...

Այս հարկը առնում է ամբողջ ազգաբնակությեան 20-50 տարեկան բոլոր արու անդամներից։ Այդ կարգի ամեն անհատ պարտաւոր է կամ 3-5 օր աշխատել, ունենալով հետը մի սայլ, 2 լուծ եզ և մի հոտաղ (օգնական) կամ 13 դահեկան հարկ վճարել։ Օրինակ՝ ընթերցող, Ցանկա-Հայաստանում մի հասակաւոր մարդու, մի զոյգ եզի և մի երեխայի 3-5 օր աշխատանքը գնահատւում է 13 դահեկան կամ մօտ 1 ռուբլի 10 կ !!! Երևակայեցէք, թէ որքան ընկած է աշխատանքի գինը Սուլթանների լծի տակ գտնւող այդ երկրում։

Ի հարկէ, հազարից մէկ հաղթ համաձայնւի որեմ գիւղացի, իր եզներով ու իր հատապով աշխատելու գնալ. ամեն մարդ նախապատւում է 13 դահեկան վճարել, քան անձամբ գնա աշխատելու։ Կառավարութիւնն էլ դիտմամբ այդպիսի անհրաժեշտի գնահատութիւն է նշանակել մարդու և եզի աշխատանքին, որպէսզի բոլորը համաձայնեին կանխիկ դրամ վճարել և ոչ աշխատանք. նրան դիտղ է հարկաւոր և ոչ ձանձրացարեն...

Այս հարկը ևս գանձւում է միտարի ձևերով։

Զեղծումներն էլ, քիչ կամ շատ չափերով նման են նախընթաց հարկերի զեղծումներին։

4) Զրպարտների հարկ կամ թեմեր-բուհաբ կամ թեմերբիր։

Սա արհեստաւորների, վաճառականների, աղատ արհեստներով զբաղողների հարկն է, որ ծանրանում է գլխաւորապէս քաղաքների բնակիչների վրայ։ Սրան ենթարկւում են և այն անձերը, որոնք որ և է աշխատանք չունեն և ապրում են միայն իրենց օտարութեան ընդունած զաւակների, եղբայրների կամ հայրերի ուղարկած նպաստներով։ Ամեն մի արհեստաւոր վարպետից առնում են տարեկան 40-60 դահեկան (3½-5 ռուբլի), իսկ վարպետի բարդաներից (խալֆայ)՝ տարեկան 10-40 դահ։ Վաճառականներն էլ պարտաւոր են վճարել 60—200—400 դահեկան, նայելով իրենց ընդարձակութեան։

Գիւղացի այն անձերը, որ զբաղւում են տնային գործերով կամ որևէ արհեստով, համարւում են իբր արհեստաւորներ և վճարում են թեմեր-բուհաբ.

Զրպարտների հարկից աղատ են Հոգևորականներն և վարժապետները։

Այս հարկը ևս հաւաքում է միտարը կառավարութեան տուած *ֆշանների*ով (ստացագիր),

կպցնելով մէկ դահեկանոց մարկա և աւելացընելով իր 8—10% մարկայի մէկ դահեկանի հետ։

Հեղձումները համեմատաբար շատ քիչ են և գլխաւորապէս որոշման մէջ են. ով է վարպետը և որքան պիտի վճարէ —40° թէ 60, կամ բարգահը՝ 10՝, 20, 30 թէ 40։ Նոյնը և վճառականների վերաբերութեամբ։

Քաղաքներում բնակող այն անձերը, որ բնիկ տեղացի չեն, այլ ուրիշ գիւղերից կամ քաղաքներից եկած՝ իրենց հարկերը չեն վճարում միատարին, այլ ուղղակի աշայ-բէյին։

Իբր ծանօթութիւն՝ աւելացնենք և այն, որ կառավարութիւնը ծրագիր էր կազմել վերջին տարիները վերջացնել վաճառականների բեմերբիւն և նշանակել գիշդիական հարկ։ Այդ ծրագրի համաձայն պէտք է լինէին 3 գիլդիաներ —I, II և III։ Առաջինը վճարելու էր 8 ոսկի կամ 864 դահեկան, երկրորդը— 5 ոսկի կամ 540 դահ. և երրորդը՝ 3 ոսկի կամ 324 դահ.։ Բայց, ընթերցող, թուրքիայում կառավարութիւնը տէր չէ նոյն իսկ իր ներքին՝ պետական գործերին։ Այստեղ կան և բաւական թւով օտարահպատակ վաճառականներ, որ ենթարկւում են իրենց հիւպատոսներին և ոչ երկրի իշխանութեան։ Հիւպատոսներն ու դես-

պանները չը համաձայնեցան այդ կարգադրութեան, առարկելով, որ նա դէմ է դաշնագիրներին։ Գիլգիական հարկի ծրագիրը մնաց անգործադրելի և՛ տեղացիների համար, և՛ օտարահպատակների համար։ Տեղացիները չարունակեցին վճարել բեմեբրիան նախկին չափերով, իսկ օտարահպատակ վաճառականներն ու արհեստաւորները մինչև օրս էլ ոչ մի հարկ չեն վճարում երկրի վարչութեանը, բացի հնչին քաղաքային տուրքերը։ Ի հարկէ այսպիսի անհաւասար պայմաններում տեղացի վաճառականների մրցումը օտարահպատակների հետ չափազանց դժուարանում է։

5). Ամուսնական կամ ընտանեկան հարկ։

Ամուսնանալու, մի ընտանիք կազմելու համար էլ պէտք է հարկ տալ, քիչ է, այն, բայց և այնպէս դա էլ մի հարկ է։

Վերջին ռուս-տաճկական պատերազմից յետոյ ներմուծուեց ծննդական վկայագրերի կամ «մարդահամարի թղթերի»—Նուֆուզ-թեսքերեսը կամ Համիտիէ թղթերի գործածութիւնը։ Հիմնուեցան բոլոր գաւառներում մարդահամարի վարչութիւններ կամ Նուֆուզ-Նազարեթի, ուր և մտնում է ընտանեկան հարկը, որտեղից և տրւում են թէ Համիտիէներ, թէ Ներրին, թէ

արտաքին անցագրեր (թեսրիրէ)։ Նուֆուզ-Նազարէթին ուղարկում է առաջնորդարանները տրված համիտիէներ, իսկ ազգաբնակութիւնը գնում է այնտեղ և գրւում, ծննդական թուղթ կամ համիտիէ ստանում, վճարելով 1 դահեկան առաջնորդարանին, 1½ դահ. կառավարութեան։ Եթէ որևէ անձի համար մինչև 1 տարեկան հասակը համիտիէ չառնեցաւ և եթէ գաղտնիքը բացուեցաւ, մէկ մէջիտից մինչև մէկ ոսկի (20—108 դահ.) տուգանք են առնում։ Երբ առաջին անգամ մտցուեցան այդ թղթերը, ժողովուրդը՝ կարծելով որ նրանք սարքուած են կամ զինուորագրութեան կամ մի այլ չար նպատակի համար, թաղցնում էր իր արու զաւակների թիւը։ Երբեմն մի ահագին դիւղ երևում է կառավարութեան ցուցակների մէջ իբր 80—100 հոգի պարունակող... Մեր կարծիքով՝ ոչ միայն համիտիէ դառնալու համար ծածկելը, այլև ուրիշ հարկեր տալու ծանր պայմաններից առաջացած մարդագողութիւնը բաւական պակասեցնում է հայերի պաշտօնական թիւը Տաճկաստանում, մանաւանդ Տաճկա-Հայաստանում և նրայ լեռնային մասերում։ Այսպէս օրինակ՝ թրքական ոսկիներով գրող և կարելի է նոյն իսկ վենգրիական անուան տակ ծածկուած մի թուրք՝ գրող Բոռէն Դ'Ալլոշ՝ իր գրքում տալիս է հե-

տեսակ պաշտօնական թիւերը. թուրքիայում հայ լուսաւորչականների թիւը—1,075,000 հոգի, իսկ հայ կաթոլիկները և հայ լութերականները հաշուում է խառն միւս ազգութեան նոյն կրօնին պատկանող անձերի հետ, չհաշուելով նրանց հայ ազգութեան անդամներ։ (Տես P. Baudin D'Allouch—la Turquie et les Ottomans, 1894 թ. Paris, երես 137) իսկ երես 156 ում, երբ նա խօսում է «հայկական կարծեցեալ հարցի» մասին (la prétendue question arménienne), յառաջ է բերում հետեւեալ անհեթեթ թիւերը. Խարբերդի վիլայէթում (Մամուրէթ-ուլ-Ազիզ) 73,000 հայ, 300,000 մահմեդական, Բիթլիզի վիլայէթում՝ 101,000 հայ, 167,000 մահմեդական, Տրապիզոնի վիլայէթում՝ 41,000 հայ, 857,000 մահմեդական, Կոնիայի վիլայէթում 98,000 հայ, 877,000 մահմեդական... Եւ «խոհեմութեամբ» լռում է Վանի, Էրզրումի, Սըվազի և Դիարբեքիրի վիլայէթների մասին... Բայց, ընթերցող, Տրապիզոնի և Կոնիայի վիլայէթները չեն կնքուած Եւրոպայի և Ռուսիայի կողմից «Հայկական նահանգներ» անունով, այլ միայն վեց նահանգ են կրում այդ անունները. Վանի, Բաղէշի Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, և Սըվազի վիլայէթները։ Եւ Դ' Ալլոշի գիրքը տպուած է 1894 թիւին թրքական ոսկիներով, հայկական սարսափների

նախընթաց օրը եւրոպական հասարակական կարծիքը խաբելու, նրան ծուռ ճանապարհի վրայ գնելու համար։

Դառնանք ամուսնական հարկին։

Նշանուած զոյգը տանում է իր Համիտիեներին առաջնորդարան, որ նրանց միացնեն և մի ընտանիքի համիտիէ տան կամ, ինչպէս ասում է ժողովուրդը, «իրար վրայ գրեն»։ Առաջնորդարանը կպցնում է նրանց համիտիէի վրայ մի հատ 10 դահեկանոց մարկա՝ առնում է 17 դահեկան, որից $2^1/_2$-ը ուղարկում է ՆոմՄուգ-Նազարեթին հաստատել է տալիս նրանց համիտիէնոյ յանձնում իրենց, իսկ մնացած $4^1/_2$ դահեկանը մնում է առաջնորդարանի արկղը։ Այսպիսով՝ կառավարութիւնն առնում է $12^1/_2$ դահ. ամեն մի նշանուղից կամ ամուսնացողից։

Ի հարկէ բացի կառավարական տուրքը՝ կան և բազմաթիւ «բախշիշներ», գրագրի փող, առաջնորդարանին 10—100 դահ., նրայ սպասաւորներին 5—10 դահ., իրեն՝ առաջնորդին՝ 20—50 դահ. և այլն, և այլն։

6) Կենդանիների հարկ կամ Աղնամ կամ Խամչուր։

Այս հարկին ենթակայ են միմիայն ոչխարը ու այծը։ Կովը, եզը, ձին, էշը, ջորին ու գոմէշը դիտւում են իբր աշխատաւոր անասուն

ներ, դրա համար էլ նրանցից հարկ չի վերցնում. իսկ ոչխարն ու այծը դիտում են իրը արդիւնք տուողներ։ Եթէ աչքի առաջ ունենանք, որ Տաճկահայաստանի նման մի լեռնոտ երկրում գիւղացու ամենաշատ տնտեսական կենդանին ոչխարն ու այծն են, այն ժամանակ պարզ կըլինի, որ իսկապէս այնքան էլ մեծ կորուստ չէ կառավարութեան համար միւս կենդանիներից հարկ չառնելը։

Ամեն մի ոչխարից կամ այծից տարեկան առնում է $4^1/_2$ դահեկան։

Այս կենդանիների թուահամարը կազմելու համար կառավարութիւնը նշանակում է մի գործակալ կամ մի յանձնախումբ ամեն մի շրջանի համար, նրան տալիս է *խարիբ* (գրագիր) և մի քանի օգնական գարթիլներ կամ *առուարիներ* (ձիաւոր գինուոր)։ Գործակալը ձմրան վերջը կամ գարնան սկիզբը գուրս է գալիս պտոյտի։ Դա ճիշտ այն ժամանակն է, երբ տարերը նոր են սկսում, բայց երբ հօտը դեռ ևս գուրսը՝ բաց դաշտում չի կարելի պահել, կենդանիների թիւը չի կարելի ծածկել։ Ասիճանաւորը մտնում է գիւղ, իջնում գիւղապետի կամ ուէսի տանը։ Ուէսը ժողովում է գիւղի բոլոր ընտանիքների գլխաւորներին իր օդան։ Գործակալ ծառայողը, որ միշտ թաւրք է լինում, սկսում է հարցնել

ամեն մէկից իր ունեցած անասունների թիւը. քաթիբը ցուցակագրում է նրանց տասնները, ապա գործակալը սկսում է ընկնել տնից տուն և համարել բոլոր այծն ու ոչխարը։ Եթէ գիւղացիք տաւարից պակաս են ասել, դա գիտւում է իբր պետական սեփականութեան գողութիւն և աւել եղած կենդանիները կամ «յարբունիս են գրաւում» (Միւսեցերէ), որ տաճիկ աստիճանաւորի լեզուով նշանակում է՝ իր գրպանը խոթել,—կամ կրկնակի ու եռակի տուրք են առնում աւելցածից։

Գարնան սկզբներում այծի ու ոչխարի ծինը նոր վերջացած է լինում և համարւում են նոյն իսկ մի օրական գառները և ուլերը և նրանցից էլ հարկ է առնւում՝ իբր մեծերից։ Իսկ թէ գրանցից որքանն է կենդանի մնալու՝ դա կառավարութեան գործը չէ—վայը տիրոջ գլխին։

Գիւղացիք էլ այս հարկի խնդրում յաճախ փառաւորապէս ծածկում են իրենց ոչխարներն ու այծերը... Երբեմն ունեցածների հարիւ ½-ն են ցոյց տալիս։ Բայց յաճախ պատահում է, որ գործակալը լոյս է ընկնում որևէ գիւղում ամռան կիսին, անսպասելի կերպով և նոր թուահամար, վերաքննութիւն նշանակում։ Այն ժամանակ վայը կը գայ գիւղացու գլխին. նա կամ

պիտի կաշառէ գործակալին, կամ անապին տուգանք տայ կամ զրկի իր ոչխարներից. Ա-նօթի պաշտօնեաները այսպիսի թակարդներ սարքում են մեծ եռանդով, որովհետև ռոճիկ չեն ստանում և ապրելու, այն էլ թուրքի պէս շռայլ ապրելու խիստ կարիք ունեն։

Ոչխարի հարկի բոլոր արդիւնքը յատկացուած է Հանրային պարտուց Վարչութեան, ինչպէս և ոգելից խմիչքների, մետաքսի, ապի և այլ բերքերի հարկերը, կառավարութեան գանձարանը ոչինչ չի մտնում, այլ գնում է պարտքի վճարման։

7) *Երկրագործական հարկ կամ Աշար.*

Աշար կոչում է բոլոր հացահատիկներից, խոտից, առւոյտի, բանջարեղէններից, բոստանից (սեխի, ձմերուկի, վարունգի ցանքս) և այլ երկրագործական ու այգեգործական արդիւնքներից առնւոզ տասանորդական տուրքը (dime)։

Տաճկական *օրէնքով*—եթէ ամեն բան կատարւէր օրէնքի գծած սահմաններում—պէտք է գիւղացու արդիւնքի 7/8-ը վերցւէր իբր հարկ։ Այսպէս է տրամադրում օրէնքը, այժմ այդպէս էլ ընդունուած է գրել պաշտօնական թղթերում և պետական հաստատութիւններում։ Ինքն ըստ իրեան հասկանալի է, որ՝ եթէ գիւղացին ստանում է, օրինակ՝ 120 փութ ցորեն, 15-ը

կառավարութիւնն առնէ, 105 ը կրմնայ իրեն և գրանով մի միջին չափի ընտանիք կարող է մի տարի ապրել։ Այլ ես ինչ գժգոհութիւն, ինչ վայնասուն, ինչ արիւն երկու կողմից էլ...

Բայց իջնենք իրականութեան, կարմիր ու արիւնոտ իրականութեան գիրկը։ Սկսենք հէնց այս հարկը հաւաքելու սիստէմից։ Այդ սիստէմը, մեր կարծիքով, շատ բան կը պարզէ ոչ միայն աշարի, այլ և ամբողջ տաճկական կառավարութեան բնաւորութեան, նրանում թագաւորող անդրջրհեղեղեան ներքին կարգերի վերաբերութեամբ։

Ամեն վիլայէթի աշարը ծախւում է հրապարակական աճուրդով։ Միայն աշարը չէ աճուրդով ծախւողը. վիլայէթի վարչութիւնն անգամ ծախւում է աճուրդով։ Սա ծաղրելի է երևում, չափազանցութիւն, նոյն իսկ սուտ թւում... Բայց... փաստ է...

Բացւում է, օրինակ՝ Էրզրումում Վաշիի (գուբերնատոր) տեղ։ Ելլրզ-Բէյոշկի և Սադրազամի (մեծ-եպարքոս կամ մեծ-վեզիր) շուրջը ֆաւորիտների, ներքինիների կամ կրզ-աղաշար-ների ճահիճը թանդ է առնում, ալեկոծւում։ Ամեն մէկն ուզում է իր թիկնածուն առաջ քշել։ Իսկ մի ֆաւորիտի կամ ներքինապետի թիկնածու լինելու համար պէտք է «դե-

դին մեռաց» և ապագայի փայլուն խոսաումներ։ Առանց բախշիշի, առանց ոսկու անկարելի է ֆաւորիտի թեկնածու լինել... Ներողութիւն, մոռացայ. մի միջոց էլ կայ ֆաւորիտի թեկնածու լինելու համար. դա գեղեցիկ աղջիկն է։ Այս միջոցով յաճախ անձեռնմխելի և ամենակարող են հանդիսանում չերքէզները։ Չերքէզ կոյսը չինարի հասակ, բարակ մէջք, սև ու կրակոտ աչքեր, կամար ու խիստ յոնքեր ունի։ Բոսֆորի մեղկացած զաւակն ամեն ինչ կըտայ նրան տիրանալու համար։ Եւ ուղարկում են Մարմարայի հրաշագեղ ափերի փառահեղ պալատները ներքին նահանգներից գեղանի, անմեղ կոյսեր, մանաւանդ չերքէզուհիներ...

Ով աւելի է տալիս, նա էլ դառնում է ամենազօրեղ ֆաւորիտի թեկնածուն, նա էլ ստանում է օրինակ՝ Էրզրումի վալիութիւնը։ Բայց քիչ է վալիի ռոճիկը։ Նրանով չի կարող նա «մարդաւարի» ապրել, իր պաշտպանին Պոլիս միշտ նուէրներ ուղարկել, որ նրա աչքը քաղցը մնայ իր վրայ... Եթէ չուղարկի կամ անկանոն ուղարկի, տեղից կը զրկուի... Վերջապէս այդ ռոճիկով նա չի կարող նեղ օրուայ համար էլ մի բան տնտեսել։ Չէ՞ որ ամեն մի փաշայի բարձրագոյն իդեալն է ունենալ Մարմարայի, իշխանաց կղզիների կամ Բոսֆորի ափե-

բում մի եաշի, մի մարմարեայ պալատ, լիքը գեղանի կոյսերով և Ալլահի պարգևած բոլոր բարիքներով։ Ծոյլ, մեղկ ու ցոփ կեանքը բոլոր թուրք պաշտօնեաների միակ իդէալն է։

Վալին իր այս երեք սրբազան պարտականութիւնները (լաւ ապրել, նեղ օրայ համար անտեսել և իր պաշտպաններին Պոլիս փող ուղարկել) կատարելու համար՝ պատրաստ է ամեն ինչ անել, ամեն սրբութիւն ոտի տակ տալ, եթէ ունի մի այդպիսի բան իր սրտում։

Նա էլ իր հերթին՝ Պոլսում տեսածն իր վերարկուութեամբ, զարդ է դնում լայն չափերով իր իշխանութեան տակ գտնուած բոլոր պաշտօնների բաժանման ժամանակ։ Եւ այսպէս՝ վարչական սանդուխքի ամենաբարձր աստիճանից սկսած մինչև ամենայետին գափթիէն՝ շարունակւում է ծախելու և ծախուելու սիստէմը։

Հրապարակային աճուրդ է նշանակւում վալիանիստ քաղաքում՝ վիլայէթի աշարը ծախելու համար։ «Ուր իցէ գէշն, անդ և ժողովեսցին արծուիքն», ասում է գրաբար առածը։ Բոլոր մեծ փորը գիշակեր վաշխառուները թափւում են քաղաք, աճուրդին մասնակցելու։ Ամբողջ վիլայէթի աշարը մի վաշխառուի ուժից վեր կըլինի, այն էլ Ցաճկաստանի ներքին նահանգների պէս երկրում, ուր դեռ խոշոր

դրամատէրեր չկան։ Դրա համար էլ, գրեթէ միշտ, վիլայէթի աշարը բաժանւում է մի քանի մասերի և ամեն մի մասն առանձին ծախւում։ Ով աւելի շատ և աւելի ճարպիկ կերպով ուտեցրեց վալիին, մուֆտասրիֆին (գաւառապետ), գայմագամին, բաշ-բաթիրին, վալիի մօտաւոր ու ազգեցիկ բարեկամներին, նրա ծառաներին, ներքինիներին և այլն, և այլն՝ նրան էլ կը յաջողւի գնել այս ինչ կամ այն ինչ խոշոր գաւառի աշարը։ Հրապարակային աճուրդը խնդրի ձեւական մասն է. էութիւնը կազմում է այս կուլիսային, գաղտնի գործողութիւնը։

Ում վրայ որ մնայ աշարը, նա այնքան ճարպիկ պիտի լինի, որ և պետութեան հասանելիք կապալագրամը հանէ, և՛ իր, թերևս նրանից շատ աւելի՝ տուած կաշառքները հանէ, և՛ իր «աշխատանքի վարձը» շահի։ Այստեղից արդէն պարզ երևում է, թէ ինչպէս սատնէ պղպճակների նման օդն են ցնդում օրէնքն ու իր պահանջած 1/8-ը կամ 1/7-ը։

Բայց այդ դեռ քիչ է։ Ամեն մի խոշոր աշարառու յաճախ մանր չափերով ծախում է իր առածն աւելի մանր վաշխառուների, շահելով իր «առիւծի բաժինը»։ Երբեմն սրանք էլ՝ որոշ օգուտ ստանալով՝ ծախում են իրանց միջակ բաժինները աւելի մանր կապալառուներ-

բի, այնպէս որ՝ վերջապէս մի փոքրիկ շրջան, մէկ կամ մի քանի գիւղ մնում է որևէ գիւղական մանր վաշխառուի ձեռք։ Իսկ այս ձեռքից-ձեռք անցնելը բարդում ու բարդում է աշարի չափը... Ո՞ւմ հոգն է, թող ժողովուրդի հոգին դուրս կը գայ։

Թէ Եւրոպայում, թէ մեզանում շատերը կարծում են , որ Տաճկաստանի վաշխառուները միայն քրիստոնեաներն են, մանաւանդ հայերն ու յոյները։ Այսպէս մտածողները կարծում են, որ թուրքն ընդունակ չէ վաշխառութեան, իսկ քուրադը—երբէք։ Միամիտ մարդիկ, որ կարծում էք, թէ կրօնը այս ու այն մէտաֆիզիքական բասային յատկութիւնները կարող են արգելել մարդկանց դառնալ վաշխառու, եթէ շրջապատ պայմանները թոյլ են տալիս, նոյն իսկ ստիպում, պահանջում են այդ բանը։

Առաջ աշար գնող վաշխառուների մէջ կային հայեր, թուրքեր, յոյներ, հրէաներ, իսկ այս վերջին 10-11 տարիների ընթացքում բոլոր աշարառուները բացառապէս մահմեդականներ են՝ թուրքեր, քրտեր։ Վաշխառութիւնը ոչ ազգութիւն է ճանաչում, ոչ կրօն. նա բացարձակ կոսմոպոլիտ է։ Բոլոր ազգերի վաշխառուներն իրար նման են. դա բնական հետևանք է զբաղմունքի նմանութեան։ Մի թուրք և մի հայ

վաշխառուն իրար աւելի են նման իրենց բնաւորութեամբ, իրանց բարոյականով ու աշխարհահայացքով, քան մի թուրք վաշխառու և մի թուրք անմեղ ու խաղաղ երկրագործ։ Զբաղմունքների նմանութիւնը ծնեցնում է բնաւորութեան և բարոյականութեան նմանութիւն՝ ասում է Ամոնը (տես՝ Hamon-„Les militaires professionnels“)։ Այսօր Պոլսում եղած սակաւաթիւ պանդուխտ հայերի ցեղերը կազմող «փոշխաաճի»-ները կամ վաշխառուները, որ երկրում փող են տալիս 100, 160 տոկոսով և Պոլսում ստանում են պարտք առնողի եղբօրից, զաւակից կամ հօրից՝ այդ բոլոր փոլիսաճիների 9/10-ը թուրքեր ու քրտեր են և միմեան 1/10 հաղիւ հայեր։

Ամուրդը նշանակում է Էմշաֆ Դայրեսիի (հարկերի սենեակը)։ Նրա նշանակած ամուրդին կարող են մասնակցել գիւղական ամբողջ հասարակութիւնները իբր մի մարմին, in corpore, գնել իրենց գիւղի աշարը, բաժանել ընտանիքների վրայ, հաւաքել և վճարել։ Այդպիսի դէպքերում գիւղը պէտք է ներկայացնել մէկ կամ մի քանի վստահելի երաշխաւոր անձեր։ Ի հարկէ գիւղական ազգաբնակութեան համար՝ աշարի ծանր բեռնից ազատելու ամենաձեռնտու միջոցն այս է։ Բայց «չկայ վարդ առանց փուշի»... Այստեղ էլ նոր ու անտանելի այլանդակութիւններ են

ծագում։ Զուտ հայաբնակ գիւղերը չեն վստահանում այդ քայլն անել, համոզուած լինելով, որ իրենց վրայ խիստ թանգ կընստի մրցութեան մտնել որևէ թուրք կամ քուրտ վաշխառուի հետ։ Զուտ հայաբնակ գիւղերն էլ շատ չեն. մեծ մասը խառն ազգաբնակութիւն ունին։ Իսկ այս դէպքում քրիստոնեայ տարրի վրայ աւելի է ծանրանում աշարի բեռը, քան մահմետական տարրի վրայ։ Իսկ այս վերջին 8-9 տարիներում կառավարութեան բռնած դիրքը պարզ ցոյց է տալիս, որ ուզում է անտեսապէս հալումաշ անել քրիստոնեայ տարրը, քայքայել նրա նիւթականը և դրանով ստիպել կամ մահմետականալու կամ թողնելու հայրենի հողը, գաղթելու։ Դրա համար էլ ամեն դիւրութիւն տալիս է մահմետական տարրին ճնշել, սնանկացնել հայերին...

Այդ և ուրիշ շատ պատճառներ խիստ հաղուագիւտ են դարձնում գիւղական հասարակութիւնների մասնակցութիւնը աշարի աճուրդների մէջ և աշարը մնում է՝ համարեա միշտ վաշխառուների ձեռքը։ Իսկ եթէ կառավարութեան նշանակած բարձր գների պատճառով աշարն առնող չեղաւ, այն ժամանակ մնում է կառավարութեան վրայ, որ և սկսում է հաւաքել իր ստորին ծառայողների ձեռքով։ Զվճա-

բելու դէպքում լցնում է գիւղը սարիներով և «միս ու ոսկոր» անում՝ հաւաքում։ Եկած զօրքն ապրում է գիւղացիների հաշուով. ծեծում են, վիրաւորում նրանց կրօնը, նրանց ընտանեկան պատիւը. դրանից աւելին՝ մորթում են նրանց լծկան եզները և այլն, մինչև որ հարկերը լրացնում են,—ապա հեռանում... Սա կոչւում է զինուորական էկզեկուցիա։

Ներկայացրենք այժմ գլխաւոր դէպքը՝—երբ աշարը մնում է որևէ կապալառուի վրայ։

Կապալառուն խոկոյն վարձում է իր քաթիբը (գրագիր) և աշարը հաւաքող հարկահաններ կամ միւշրեֆիմներ։ Միլլէդիմը նշանակւում է մի կամ մի քանի գիւղերի համար։ Եթէ նրա շրջանը մեծ եղաւ, նա առնում է իրեն օգնականներ, որ կոչւում են շահնաներ, մանր չափերով, ամեն կալից ցորեն, գարի և այլ հարկեր հաւաքողներ։

Միլլէդիմներն իրաւունք ունին պահանջելու կառավարութիւնից և՛ զափթիէներ, և՛ սարիներ, և՛ ուրիշ տեսակ օգնական ուժեր աշարը գանձելու համար։

Երկրագործ ազգաբնակութեան տնտեսական հիմքերը բայբայողը բեդել-էսկէրիէն և աշարն են։ Առաջինը քանդում է գիւղացու տունն իր ծանր ու մեծ չափովը, իսկ երկրորդն իր

ծախելու սիստեմովը, իր վաշխառուական. ամեն տեսակ զեղծումների յարմար ձևովը։

Միայն աշարի մէջ գործադրուող զեղծումները թուելու համար հարկաւոր են տասնեակ երեսներ... Հաշուենք միայն մի քանիսը, առանց որևէ սիստեմի։

Գիւղացին ծեծում է կալը, ցորենը թէժ անում, պատրաստում։ Նա իրաւունք չունի չալները կամ ամբարները լցնելու, մինչև որ միլլէդիմը կամ նրա օգնականը չգայ, չչափի և հարկը — «իբր թէ 1/8-ը» — չառնի։ Կալի տէրը խմացնում է միլլէդիմին, որ վերջացրել է՝ — թող գայ չափէ։ Միլլէդիմը չի գնում. նա ոչի բեհի է ուզում... Կաշառք չըտիր՝ կը գայ ցորենի թէժը կը կնքի նահապետական մեծ փայտէ կնիքով և կը գնայ, ցնոր կարգադրութիւն։ Պատահում է, որ զօրեղ քամի է բարձրանում, կնիքը խախտում... Պատահում է, որ գիւղական շները գալիս և թէժի վրայ են ընկնում կնիքը խախտում... Կնիքը քանուել է, ուրեմն՝ տէրը թէժից զողացել է։ Դա գիտուում է իբր «պետական գողութիւն» և յաճախ ամբողջ թէժը խլում է «խիստ և ի պարծանս» անյատակ գրպանին կամ միլլէդիմ աղայի կամ նրա չորպաճի կապալառուի։ Գիւղացին ստիպուած է ուրեմն կաշառք տալ, որ միլլեդիմը բարեհաճի շուտով չափել և աշարը վերցնել. եթէ ոչ՝ գիշեր-ցերեկ ստիպուած

կը լինի՝ երբեմն էլ ամբողջ ընտանիքով՝ ցորնի թէժերի վերայ հսկել։

Յաճախ միլթեղիմները, իրենց կրքերին (և՛ փողային, և՛ տափական) բաւարարութիւն չեն տալիս գիւղացիները, թշնամանում են և աշխատում թշնամու տունը քանդել, նրա «օջախը մարել»։ Այդպիսի դէպքերում նրանք վարձում են նոյն իսկ մի թուրք, մի քուրտ կամ մի այլ ստոր սրիկայ և ուղարկում, որ հակառակորդի թէժը քանդի։ Հետևեալ օրը գալիս, գրաւում են բոլորը, մի բան էլ վրայ առնում, ծեծում և նոյն իսկ բանտարկել տալիս տիրոջը։

Գիւղի ամենաազդեցիկ և «իշխան» անձերն անդամ՝ յատին զափթիէի, միլթեղիմի կամ մի ողորմելի շահնայի հետ խօսած ժամանակ՝ «միլթեղիմ աղա, այաղարնի էհսանիմ»-ով են խօսում (ոտներդ համբուրեմ!!!)։ Ենթադրենք, որ այդպէս ստորանալով, կաշառքներ տալով՝ համաձայնեցրին միլթեղիմին դալ, թէժը չափել։ Ինչեր են կատարում այդ չափելու ժամանակ... յաճախ դա չափել չի դառնում, այլ *աւազակութիւն*, բաց-աշկարայ աւազակութիւն։ Ոյժը—զափթիէի, զինուորի, պետութեան կոպիտ ոյժը միլթեղիմի կողմն է. նրա կողմն է դադին ու մէջլիսը, արդարութեան այդ ծաղրանկարը. նրա կողմն են *էմլամ դարիէսիի*

անդամներն ու գայմագամը, միլիտասէրիֆն ու վալին, եպարքոսն ու նախարարը։ Իսկ մի է պաշտպանում հարկատու գիւղացուն։ Եթէ լինին մի-երկու լուսամիտ, բանիմաց և օրէնքից հասկացող երիտասարդներ, որ գիւղացու կողմը բռնեն, որ «օրէնքով» խօսեն՝ նրանք շուտով բանտերում կը փթեն, «կոմիտաճի» կանուանեն... Եւ միլիէզիմն անում է այն, ինչ իր քէֆն է տալիս. նուազողն էլ ինքն է, պարողն էլ։ Լաւ իմացէք, որ դա միայն հայերի հետ չի պատահում։ Բոլոր երկրագործ արհեստաւոր ազգաբնակութիւնը տնքում է աշարի ծանր քարի, աստիճանաւորների և վաշխառուների կեղեքումների տակ. հայ, յոյն, ասորի և նոյն իսկ թուրք ու քուրտ... տնքում են, հղմտում...

Բողոքել... Պատմեմ միայն մի փաստ մահմեդականների կեանքից, — մնացածը հասկանալի կըլինի։

Տրապիզոնի շրջանում ապրում են օՔցի կոչուող 60—70,000 հոգի բաւական հարուստ մահմետական յոյներ։ Նրանք չափազանց մոլեռանդ են, ինչպէս ամեն մի նէօֆիտ (նորադարձ) նրանք տալիս են խիստ մոլեռանդ ու հմուտ աստուածաբան մոլլաներ, որ յաճախ Պոլսի սոֆթաների դպրոցի դարդն են կազմում։ 1893 թուին նրանց և միլլիեզիմների մէջ անբաւա-

կանուլֆիններ ծագեցին աշարի առթիւ։ Օֆ-
ցիր բոլորիցին հերմամ գայմակամին, միխա-
սերիֆին, վալիին և ապա հեռագրով նաև մեծ
եպարքոսին ու սուլթանին։ Նրանց բոլորներն
ու խնդիրները «մինդէր ալթը» եղան. առանց
որևէ հետևանքի. նոյն իսկ առանց պատասխանի
մնացին։ Մահմետի մոլեռանդ երկրպագու խո-
բամանկ օֆցիները մի պատգամաւորութիւն ու-
ղարկեցին Բաթում, որ այնտեղից խոյսն մի
հեռագիր խփեց սուլթանի անզուգական բարե-
կամ Վիլհելմ II կայսեր։ Կայսրը գերման դեսպանի միջոցով միջնորդութիւն արեց։ Բ. Դուռը՝ տեսնելով գործի վատ ձև ստանալը, երկու քննիչներ ուղարկեց և 1894-ին գործն «անուշի կապեց», մի կերպ քնեցրեց, ձայնեկեղ դարձրեց[1])։

[1]) Այդ հեռագիրը խփելու գաղափարը տուեց Բիզալի մութասարիֆը, որ մի բաւական յուսամիտ անձ էր, որ ուզում էր պաշտպանել ժողովուրդին ընդդէմ վաշխառու հարկահաւաքների և կաշառակեր ատաբեանաւորների։ Երբ գաղը քննեց, այդ յուսամիտ պաշտօնեայի տեղ տակը սապոն դրին» փողատէր վաշխառուները։ Վիլհելմ կայսեր խփած հեռագրի բովանդակութիւն ֆօտաւորապէս այս էր. «Կայսր, դու մեր սուլթանի մտերիմ բարեկամն ես՝ խնդրում, աղաչում ենք քեզ միջնորդել նրան, որ դէթ գործադրել տայ այն օրէնքը, որ ինքն է դրել։ Հարկահաւաքները կողոպտում են մեզ՝ հակառակ բոլոր օրէնքների։ Եկ եթէ մեզ չպէտք է ապատես այս անտանելի վիճակից, կաղաչենք տեղ պատրաստել, որ գաղթենք, այս տեղից հեռանանք»։

Եթէ օֆցի աստուածաբաններն այսքան արգելքների հանդիպեցան՝ երևակայեցէք ուրեմն՝ թէ ի՞նչ կը լինէր գնաւոր ռայայի դրութիւնը, եթէ նա լինէր բողոքող։

Միլլենիմը չափում է ցորենը և 1/8-ը առնում։ 1/8՝... դա միայն ծայրը է, անխիղճ, անօրէն ծայրը։ Չափելու ժամանակ խեղճ գիւղացին ծալում է ձեռքերը, վիրը ծռում և ողորմելի հայացքով նայում, թէ ի՞նչպէս կողոպտում են իրեն, ի՞նչպէս խլում են իր և իր զաւակների բերնի վերջին պատառը. . . Չափելու խարդախութիւնները մարդկային խելքից բարձր աստիճանների են հասած։ Վերջին ժամանակներս էլ երբեմն գործ են ածում տասնորդական կշիռը, որ խեղճ գիւղացիներին բոլորովին անծանօթ է։ Մի խաչ, երկու խաչ առաջ է տարուում քարը և գողացուում 1,2—5 փութ, մի քանի տասնեակ կիլոգրամ. . . Ցաճախ բերում են աւելի ծանր քարեր. . .ոտով ու ձեռնով վար դարնում կշեռքի նժարը։ Գիւղացին յաճախ տեսնում,հասկանում է այդ ամենը. . . բայց ճարն ինչ։ Դա ուժեղի իրաւունքն է։ Հռոմի յայտնի բարբարոս կերմանը կապիտոլիոնի վրայ իր սուրը գցեց կշեռքի մի նժարը, որ փրկանք տուող ոսկին աւելի շատ առնէ. . . Ուժեղը միշտ արդար է Տաճկաստանում։ Միլլենիմը և կապալ

առուն այնպիսի ցանցերով են պատել վարչական ախտաւոր մեքենան, որ եվէ որևէ խղճատէր իշխանաւորուղենայ պաշտպանել ժողովրդին այդ վամպիրների ճանկերից, իսկոյն նրա «ստի տակը սապոն են դնում», տեղից զրկում։

Կան տեղեր, ուր ցորեն ու գարիից աշարն առնում են մթերքով—ցորեն և գարի, կան տեղեր էլ, ուր դրանցից անդամ հարկն ուզում են նաղդ փողով։ Իսկ այդու, խոտի, խաղողի, փեթակի, առուցտի և այլ աշարներ ամեն տեղ առնում են հնչիւն դրամով։

Մի միջակ բոստանից—կանաչեղէն, ձմերուկ, սեխ, վարունգ և այլն ցանելու համար, բացի հողային հարկից, առնում է, օրինակ, հինգ ոսկի աշար (540 դահ.)։ 8-ը սայլ խոտի աշարը լինում է 50 դահեկան։ Իւրաքանչիւր 8 խորոմ-առուցտից 2 դահեկան։ Նոյն ձևով և կորեկից, փեթակներից, և կենդանիների ապրից պատրաստած բաներից (աթար, кизякъ) և այլն։ Մշու դաշտի մէջ ամենափոքր այդու աշարը 2-2½ ոսկի է, նոյնն է և ամենափոքր բոստանի համար։ Այս աշարի վճարման համար մեծահոգի միլթէզիմը նշանակում է 2—3 օր, առաւելը մի շաբաթ։ Եվէ փողը չուտց, իսկոյն կը դայ, տան ցորենն ու գարին կը կշռէ, կըտանի, *ֆիշեն* (մօտ. 7 փութ 8գրվ.) հաշուելով՝ օրինակ՝

50 դահեկան այն ժամանակ, երբ նոյն չափը գիւղում ծախւում է 80 դահեկանով։ Եթէ ցորենն ու գարին բաւական չեղան, կը ծախէ եղն ու կովը, գուլմանն ու արօրը, տան բոլոր կարասիները և նոյն իսկ առաստաղի գերանները... կըմնայ չորս պատը...

Աշարի ճյուչափ գժոխային ծանրութիւնը բաւական չէ 1900 թուին Սուլթանական իրատէով ամբողջ Տաճկաստանի աշարը 6%-ով աւելացուցաւ. այսինքն այժմ փոխանակ 1/8-ը առնելու, պէտք է առնի մօտաւորապէս 1/7 բաժինը։ Իսկ այդ աւելացած 6%-ը, համաձայն բարձրագոյն իրատէի, պէտք է գործադրւի բանակի համար։

8) *Ժառանգութեան հարկ կամ իմբիհաղ.*

Ռայա-Քրիստոնեայի թողած ժառանգութիւնն իր ժառանգների վրայ հաստատելու համար վերցւում է օրէնքով 10% բոլոր ստացուածքի արժէքի։ Գնահատողները պաշտօնեաներն են. մի կողմից կաշառք են ուտում ժառանգներից, միւս կողմից գնահատութեան մէջ գեղծումներ թոյլ տալիս։ Եթէ ժառանգները պատրաստի փող չունեցան կառավարութեան հատանելիք գումարը վճարելու՝ կամ ամբողջ կալուածը կամ նրա մի մասը հրապարակային աճուրդով ծախւում, առնելիքը լրացւում է և ապա ժառան-

գումիւնը հաստատում ժառանգների վրայ։

Սրանով պետական օրինական հարկերը վերջանում են։ Բայց այդ չէ միայն տաճկական հարկային սիստեմը, նամանաւանդ քրիստոնեաների և առանձնապէս հայերի վերաբերմամբ. իշած հարկերից յետոյ գալիս են և ուրիշները։

IV

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Քաղաքային վարչումիւնը կամ թաղապետումիւնը (պէլէտիէ), ինչպէս ամեն երկրներում, անպէս էլ Տաճկաստանում, ունի իւր սեփական տուրքերը, որ գանձում է ժողովուրդից քաղաքի բարեզարդումեան, ծառայողների ռոճկի, մատերի վրայ համարուող լապտերների և այլ պէտքերի համար։ Այդ հարկերի վրայ մենք կանգ չենք առնիլ, այլ մի քանի խօսքով կընկարագրենք ու կանցնենք կրկին պետական պատահական հարկերին։

Ղաև-փարաաշ կամ Զեպհիյէ։ Սա մորթելու համար բերուող կենդանիների տուրքն է։ Ամեն մի մորթուող ոչխարից բեշլեսիէն առնում է 20 փարայից (4 կոպ.) մինչև 1—1½ դա-

հեկան (8—10 կոպ.) նոյնն է և այծի համար։ Ամեն մի եզից, կովից կամ գոմէշից վերցնում են 3, 4, 5 և աւելի դահեկան, նայելով քաղաքային վարչութեան պէտքերին ու վճիռներին։

Բազմանդ-փարատաչ կամ ապահովութեան հարկ։ Սա գիշերապահների համար հաւաքւող տուրքն է։ Ամեն փողոց կամ մի քանի փողոցներ միասին պէտք է ունենան գոնէ մի գիշերապահ, որ տնագին գաւազանը ձեռքին՝ բարերին խփելով պտոյտներ է գործում և, օրինակ Պոլսում, նոյն իսկ ծառայում է իբր ժամացոյց։ Այո, գիշերապահը իր գաւազանով խփում է բարերին՝ բարձր ձայն հանելով՝ այնքան անգամ, որքան որ ժամացոյցն է խփել։

Ամեն ընտանիք պէտք է վճարէ ամսական առնուազը 2 դահեկան ապահովութեան հարկ, թէև այդ ապահովութիւն ասած անզգամ բանը երբէք գոյութիւն չունի թրքական անիշխանութեան լծի տակ։

Վերջին խառնաշփոթ դէպքերից սկսած՝ կառավարութիւնը սկսել է միջամտել գիշերապահների վարչութեան մէջ։ Ամեն մի գիշերապահ այսօր մի վերակացու, մի լրտես է հայերի վրայ...

Թաղապետութիւններն ունին և՛ կշեռքի (գանթար փարասը), և՛ չափելու, և՛ այլ մանր

մունը տուրքեր, որոնց վրայ աւելորդ է կանգ առնելը։

Պետական պատահական տուրքեր ասելով՝ մենք հասկանում ենք այն բոլոր պատահական հարկերը, որ դնում է կառավարութիւնը ժողովուրդի վրայ կամ իբր միանուագ պահանջող գումար, կամ իբր ժամանակաւոր հարկ և կամ իբր կոռ, բեկեար, անկարեայ և այլն։

Միանուագ պահանջող տուրքերի մէջն է իաւանէ-ն (օժանդակութիւն) կառավարութիւնը յանկարծ նշանակում է ամեն մի ընտանիքի վրայ «այսչափ» դահեկան տուրք, որ կամ իբր կամաւոր և կամ իբր պարտադիր վճար՝ պէտք է տալ։ Այսպէս՝ օրինակ՝ 1867 թուին, երբ Սուլթան Աբդ-իւլ-Ազիզ պիտի ճանապարհորդէր դէպի Անգլիա, բոլոր քրիստոնեաների վրայ դրեցաւ մի իաւանէ, վեհապետի ճանապարհի ծախքը հոգալու համար։ Այդ հարկը դնելու ժամանակ խոստացուել է միայն մի տարի առնել և ապա վերացնել. բայց տարին լրանալուց յետոյ նորից շարունակուել է, մինչև որ մի նոր իաանէ է լոյս ընկել։ 1877-ի պատերազմի ժամանակ բոլոր ազգաբնակութեան երկու տարուայ հարկը միանգամից ու միաժամանակ հաւաքուեց, կուի նիւթական միջոցները գտնելու համար։ Դրեցան բացարձակ խոստումներ յաջորդ

երկու տարիներն այլևս հարկ չլինելու, բայց պատերազմից յետոյ նորից առան այն տարեայ հարկը, որ արդէն միանգամ գանձել էին, և այն էլ աւելի զօրացրած չափերով և աւելի դաղանական միջոցներով։

1896 թուին էլ Տաճկաստանը մի խառնէ ունցաւ։ Կառավարութիւնը կոչ արեց իր բոլոր հպատակ «հաւատացեալներին» մի նուէր տալ զէնք գնելու համար (որ և գնուեց և բաժանուեց ժամանակաւոր ամբոխին)։ Հետաքրքիրն այն է, որ այս խառնէն պարտադիր էր միայն մահմեդականների համար, իսկ քրիստոնեաների համար կամաւոր էր։ Բայց պաշտօնական կոչումում մոռացուրապէս այսպէս էր ասուած. «Կայսրութեան հաւատարիմ հպատակ քրիստոնեաների համար պարտադիր չէ. ով խորին հաւատարմութիւն ունի դէպի դահը՝ նա իր գործով ցոյց կըտայ»։ Դէհ, թող քրիստոնեայ ռայեան համարձակի խառնէ չտալ... իսկոյն նա կընկնի կասկածի տակ, կըդիտի իբր անհաւատարիմ հպատակ, իբր վատնդաւոր մարդ... իբր «կոմիթաճի»...

Ով որ հետաքրքրուում է, կարող է այդ պաշտօնական թղթի պատճէն գտնել 1896 թուի օգոստոսի կամ սեպտեմբերի «Արևելք»ների մէջ։

Այս խմբի մէջն ենք մտցնում և պետա-

կան կոն ու բեկեարը, անկարեան և այլ ձրի կատարել տրուող աշխատանքները. գիւղացիների մօտ և նրանց հաշւով ապրող զօրքը զափթիէները, աստիճանաւորները և այլն, որոնց փոխարէն յաճախ խոստացւում է վճարել, իսկ յետոյ յիշեցնողին կամ բանտն են նետում, նրա ունեցածը ծծում, կամ ամենայաջող դէպքում «շուն դեատուր» ասում, ծեծում վռնտում...

Տաճիկ պաշտօնեաների և առհասարակ տաճկական բնաւորութեան հետ անծանօթ մարդու համար անըմբռնելի կրլինի կոռ ու բեկեարի, եկող գնացող զօրքերին և աստիճանաւորներին կերակրելու ռայական պարտաւորութեան բոլոր դժոխային ծանրութիւնը։

Մտնում են գիւղացու տունը 2—4—10—20 զինուած մարդիկ։ Նրանց անասուններին պէտք է կերակրել, նա։ Եւ ո՞ւրբան պահանջկոտ են այդ հիւրերը։ Կերակուրը մի քիչ վատ եղաւ կամ քիչ, ծեծով ու մահուան սպառնալիքներով ստիպում են տան տիրոջը բերել իրենց ուզածը. բե՞ր, կայ-չկայ՝ հարցանողն ով է։ Այդ դեռ տանելի է։ Լաւ յղփանալուց յետոյ՝ նրանք պահանջում են գոհացում և իրենց անասնական կրքերին։ Յաճախ ձիերը տալիս են տղամարդկանց որ տանեն, մի քիչ ման ածեն, կամ առուակից ջուր խմեցնեն, իսկ իրենք բռնաբարում

են տան կանանց ու աղջիկներին։ Ի՞նչ կարող է անել անզէն ու անպաշտպան ստրուկ քրիստոնեան, չատ էլ որ խօսի, զնդակը ու դաշոյնը պատրաստ են նրա համար։

Երբ որ և է գիւղացու տուն այդ պատուհաս-հիւրերը ոտ են դնում, դրացիք իսկոյն աշխատում են մի կերպ գաղտնի խլել տանից հարս ու աղջիկներին և թաղցնել իրենց մօտ մինչև հիւրերի զնալը տանը թողնում են տգամարդկանց և հասակաւոր կանանց ու երեխաներին։

Զինուած բռնաբարութեան այս գոհերին տեսնելով, չատ եւրոպացի ճանապարհորդներ եկել են այն եզրակացութեան, որ տաճկաստանցի քրիստոնեաները բաւական անառակ են կամ զէթ անտարբեր դէպի ընտանեկան պատիւը։ Բայց վերջին ժամանակի աւելի խոր ուսումնասիրութիւններն ապացուցին, որ միայն զէնքի սպանիչ զօրութիւնը և գոհերի անզինութիւնն է ստիպում նրանց անտարբեր երևալ։ (տես „Положеніе Армянъ въ Турціи“ գիրքը, Մակ կոմի յօդուածը)։

V.

ՔՐՏԱԿԱՆ ԱՊՈՐԻՆԻ ՀԱՐԿԵՐ.

Աւելորդ է խօսել այն քայքայիչ ազդեցութեան մասին, որ անում են քրդերի և այլ թափառական ցեղերի յարձակումները, թալանը, հրդեհները և սպանութիւնները խաղաղ ազգաբնակութեան տնտեսական կեանքի վրայ։ Այնքան է գրած այդ մասին, որ այսօր համարեա ամենքին ծանօթ մի խնդիր է դա։ Բացի դրանից՝ մեր նպատակը չէ ուսումնասիրել տաճկահպատակ ռայայի կեանքի բոլոր երևոյթները։

Շատերը կարծում են, որ Տաճկաստանը մի ձոյլ, կենդրոնացած, բռնապետական պետութիւն է, թէ և թոյլ ու անկանոն։ Այդ կարծիքը սխալ է։ Թուրքիան պարունակում է իր մէջ բազմաթիւ մանր ու խոշոր պետութեան նման բաներ։ Նա ուժի, զէնքի բացարձակ տիրապետութիւն է։ Այստեղ օրէնքը խփում է նրան, գործադրւում է նրա վրայ միայն, ով այժ չունի դիմադրելու, ով վախենում է նրանից։ Մինչև օրս էլ Արաբեայի անապատների բնակիչը և Միջագէտքի Բեդուինը միայն անունով են հպատակ Ստամբօլի իշխանութեան։ Նոյն վիճակին են Դերսիմի աշիրէթներից մի քանիսը,

կորդուաց աշխարհի քրտերից շատերը, Ճուլամերկի ասորիներն իրենց Մելիքներով ու Մար շիմոնով, բազմաթիւ լեռնական եպիսկոպոսները, ալբանացիները և այլն։ Նոյն վիճակին էին մասամբ և Զէյթունը և Սասունը, և Շատախն ու Մաքսը սրանից մի քանի տասնեակ տարիներ առաջ։

Մինչև 1840-50 թուականները բոլոր Ցանկա Հայաստանը, մանաւանդ նրա հարաւ-արևելեան մասը՝ գտնուում էր քրտերի բէկերի իշխանութեան տակ, ճիշտ այնպէս, ինչպէս այսօր Դերսիմի բուն լեռնական մասերը (Կիլանդերէսի և այլ գաւառներ) գտնուում են մի քանի սէյիդների (օրինակ սէյիդ Իբրահիմի) և բէկերի ձեռքում։ Դերսիմը չի վճարում կառավարութեան ոչ հարկ, ոչ զօրք։ Դերսիմը կազմում է մի տեսակ անկախ համայնք Ցանկի պետութեան սահմաններում։ Դերսիմը չի ճանաչում ոչ տաճիկ պաշտօնեայ, ոչ աշար կամ արտգիէ հաւաքող մխտարներ և միւթէսիմներ։ Նրա լեռների փեշերի վրայ և շրջապատի գաւառներում՝ ինչպէս Խոզատ, Զմշկածագ, Բերրի և այլն՝ կան տաճիկ կառավարիչներ (միւթէսէրիֆ) ու գայմագամներ, բայց նրանց իշխանութիւնները երբէք չի մտնում լեռների բարձունքները կամ թափանցում Դերսիմի մէջ

անտառները։ Երբ 1880-86 թուականներում Եըլտզի կողմից գրուեցաւ Դերսիմի գրաւումի ընդհանումի խնդիրը, չեմ լիշում որ փաշան էր (նրան էին առաջարկում այդ գործը)՝ պահանջեց 200,000 զօրք և 2—4 տարի ժամանակ... Այսօր Դերսիմը չի մտած նաև 1890 թուերից կազմուող համիտիական քուրտ ձիաւոր բաշիբոզուք զօրքերի մէջ։ Նա բացարձակ անկախ է, միայն նրա անկախութիւնը չի ճանաչուած միւս պետութիւններից՝ ինչպէս Զերէլ-էլ-լիրանանի ինքնուրոյն վարչութիւնը ճանաչուած է քաղաքական աշխարհից։ Գիտէ և փաստացի կերպով ընդունուում է կամ հանդուրժուում նրա անկախութիւնը միայն Տաճիկ պետութիւնը։

Դերսիմի գրութեանն էին—աւելի մեծ չափերով՝ Դերէրկերը մի քանի դար շարունակ՝ Հայաստանի մի մասում, այն է՝ ներկայիս Վանի, Բաղէշի, Մուշի, Բայազիդի և Դիարբէքիրի վիլայեթներում, ուր թուրք ազգաբնակութիւնը համարեա բացակայում էր։ Դրա համար էլ կառավարութիւնը հայոց երկրի այդ մասը մինչև օրս էլ Քիւրտիստան է անուանում։[1])

Տաճիկ պետութիւնն ունէր իր փաշաները

[1]) 1900 թ. կէսերին Պոլսի թրքական ցենզուրան արգելեց Պիպերտի աշխարհագրական քարտէսի «Թոքր Սախա» թերթը, որովհետև այնտեղ վերևում լիշած նահանգների վրայ գրած էր Armenia և ոչ Kürdistan...

կամ միութիւնները միայն մեծ քաղաքներում, ինչպէս Դիարբէքրում կամ Վանում։ Նրանք այդ տեղերում համարեա ոչ մի իշխանութիւն չունէին. մի քանի մեծ քաղաքներից դուրս ամենքան Դերեբէկների ձեռքին էր, իսկ այդ բէկերը չէին ճանաչում սահմանական իշխանութիւնը, որը և միշտ աշխատում էր յաղթել ու ընկճել նրանց, հպատակեցնել կենդրոնական վարչութեան լծին։ Օրինակ՝ 1747-ին Էրզրումի Սէր-Ասկէր Իբրահիմ փաշան պատերազմ մղեց Մուշի տէր Ալադդին բէկի դէմ և չկարողացաւ նրան յաղթել ու հպատակեցնել։ 1877-ին Դիարբէքիրի Ուզուն-Աբդուլլահ փաշան պատերազմի բռնեց քուրտ Դերէբէկների և լեռնական հայերի հետ, և իր 30,000 զօրքով ջարդ ու փչուր եղաւ։ 1782-ին Դիարբէքիրի մի ուրիշ փաշա կռուի բռնեց Փանոքի քրտերի և հայերի հետ, 500 զինուոր կորցրեց, յաղթուեց ու փախաւ և այն և այն։

Ժամանակը յառաջ էր շարժւում, նրա հետ և Տանզիմ պետութեան կենդրոնացումը։ Կենտրոնացման զարգացումը հասաւ այն կէտին, որ վերջապէս 1835-ին Ռաշիդ փաշան կռիւ գուրս եկաւ Խան-Մահմուդ Դերէբէկի դէմ և փշրելով նրա ոյժը՝ հպատակեցրեց, իսկ 1847 թուին Օսման փաշան ջարդեց բեդրխան-բէկի

բանակը և նուաճեց «Քիւրտիստանը»։ Թէ խան Մահմուդը, թէ Բիդիրխան-բէկը գերի բռնուեցան և առաջինը Սիլիստրա, իսկ երկրորդը Կրիտէ աքսորուեցան։

Միայն այդ յաղթութիւններից յետոյ սկսուեց տաճկական իսկական տիրապետութիւնը Հայաստանի հարաւ-արևելեան մասերում։ Քուրտ Դերէբէկերի վերջին ապստամբութիւնը տեղի ունեցաւ 1854 թուին՝ Բեդիրխան-բէկի եղբօրորդու՝ Եզդիշարի առաջնորդութեամբ։ Եզդիշարը 60,000 քրտերի գլուխ անցած, օգնելով Խրիմի պատերազմի առաջացրած խառն վիճակից՝ մերժեց հպատակուել Սուլթանի կառավարութեան, հրատարակեց իրեն տէր Բազդադից մինչև Վան եղած բոլոր երկրների, կոտորեց ու դուրս վռնդեց բոլոր տաճիկ պաշտօնեաներին-առարկելով, որ այն կողմերում իսկապէս տաճիկ ազդաբնակութիւն չկայ՝ ուրեմն և ձեր ներկայութիւնն աւելորդ է,—և իր զօրքով բանակ դրեց Բաղէշի վիլայէթում։ 1855-ին տաճկական զօրքը կենտրոնացաւ Բաղէշի մօտերը։ Հրամանատար փաշան հրաւիրեց՝ հազար երդումներով՝ Եզդիշարին բանակցութեան և, դաւաճանելով իր երդումին, նրան կալանաւորեց և ապստամբութիւնը ճընշեց փոքր առ փոքր։

Քրտական խոշոր տիրապետութիւնը ճնշեց

ու նաճուեց, բայց քիւրտն անձամբ երբէք հայատակ չեղաւ։ Մինչև օրս էլ բազմաթիւ լեռնական բուրտ աշիրէթներ բոլորովին անկախ կեանքեն անցկացնում։ Միայն արդիւնքն աւելի վատ եղաւ դաշտաբնակ երկրագործ ժողովուրդի համար։ Առաջ միայն քիւրտ բէկերն էին առնում հարկը, այն էլ միայն իրանց անմիջական պէտքերի համար—ամեն բան մթերքով։ Երկրագործը կարող էր ապրել, եթէ նոյն իսկ նրա աշխատանքի կէսն էլ առնէին։ Իսկ երբ պետութեան ձեռքն ընկաւ, սկսեցան անվերջ հարկերը։ Այդ էլ կարելի էր սկզբներում տանել, միայն եթէ պետութեան կենտրոնացման գործողութիւնը մինչև ծայր տարուէր։ Քրտական լայն տիրապետութիւնը ոչնչացաւ, բայց մնացին բազմաթիւ զինուած, անկախ աշիրէթներ, որ իրենց շրջաններում հանդիսանում են իբր ներկրող տերեր։ Պետութիւնը մի կողմից է հարկ հաւաքում, բուրտ բէկը միւս կողմից։ Ժողովուրդը մնում է երկու կրակի մէջ. ոչ մէկին մերժել չի կարող։ Մէկը պետութիւն է. ունի զօրքեր, սուարի, բանակներ, դատարան, թընդանօթ հայլն. միւսը՝ զինուած քիւրտ աշիրէթ է։ Ժողովուրդն անզէն է. պետութեան ու քրտի ատրճանակի, սրի, հրացանի ու թնդանօթի

առաջ միայն մի բերդ ունի դէմ դնելու՝ իր քրտնաթոր մերկ կուրծքը...

Դերէբէկերի իշխանութիւնը ոչնչացնելով և քրտին վերջնականապէս զսպել, զէնքը ձեռից խլել, խաղաղ պարապմունքի անցկացնել չկարողանալով՝ պետութիւնը դրեց նրան աւազակի դրութեան մէջ։ Երբ մարդ համոզուած է, որ երկգործը զէնք չունի և գիտէ, որ պետութիւնն անզօր է իր ետեից ընկնել լեռների ու ժայռերի ծերպերում՝ աւելի ուրախութիւնով ապրուստի հեշտ միջոցը կընտրէ, քան քրտնաթոր աշխատանքը.—նա կդառնայ աւազակ։

Քրտի ուղած հարկը զէնքի, աւազակի պահանջն է։ Նա գալիս է անզէն հայի գիւղը, պահանջում՝ որքան իր քէֆն է տալիս, առնում է ու գնում։ Նա հարկ է առնում, որ հայի հետ հաշտ ապրի, նրան չվնասի։ Դրա համար էլ այդ հարկը կոչւում է սուրբեան կամ հաշտութեան գին։ Հայկական գաւառներում ամեն հայ ունի մի քուրտ աղա կամ բէկ կամ պաշտպան։ Այս ինչ գիւղը, օրինակ, Մստս բէկինն է. հարկ է տալիս, որ Մստս բէկը պաշտպանէ նրան ուրիշ քրտերի յարձակումներից ու թալանից և ինքն էլ չյարձակի։ Եւ քուրտը յաճախ բարեխղճօրէն յարգում է իր նմանի սեփականութեան այդ իրաւունքը։ Բայց քիչ

չեն նաև նրա խախտումները։ Այդպիսի դէպքում երբեմն աշիրէթները, մի հայ գիւղի հարկի համար, սկսում են անվերջ «արեան կռիւներ» վարել իրար դէմ, արեան վրէժ կամ վենդետտա լուծել իրարից։ Բայց այդ բոլորից տուժողը կրկին խեղճ ռայան է. երկու կողմերն էլ հարկ են առնում զէնքի ուժով. չուխի՝ կրկնամանեն, հօտերը կրտանեն, արտերը կրհրդեհեն և այլն։

Քիւրտը հարկ է առնում մեծ մասամբ մթերքներով և աւելի քիչ՝ հնչիւն դրամով։ Նա տանում է ցորեն, գարի, մեղր, ձի, ղգեստ և այլն։ Նրա վերցրած հարկերը ոչ որոշ չափ ունին, ոչ ժամանակ և ոչ սահման. երբ որքան և ինչ ձևով ուզենայ՝ կրտանի զինուած մարդը անզէնից։

Շատ յաճախ կըլսէր, որ քուրտն ասում է մի հայի մասին. դա իմ Քշաւ է։ Այդ նշանակում է, որ այդ հայը այդ քրտին հարկ է տալիս։ Երբ երկրում մնացած հայը չի կարողանում վճարել քրտին հասանելիք տուրքը՝ յաճախ քուրտ բէկը գալիս է Կովկաս, անցնում Բուլղարիա, Խրիմ, և այլ տեղեր, ուր պանդխտել են «իր ֆլանելից փող աշխատելու—և նրանցից գանձում է հարկերը, որպէսզի երկրում մնացածներին զօրեղ պաշտպանութիւն ցոյց տայ։

Վայ թէ դրսում եղած հայերից մէկն ու մէկը մերժէ վճարել կամ կոպիտ վարուի բէկի հետ. նրա ընտանիքի երկրում եղած բոլոր անդամները կրակի կրանեն քրտի ձեռքում, երբ նա կը վերադառնայ։

Սիմֆերօպոլում կան բաւական թւով սպերցի, Դերջանցի և այլ հայեր Կարնի վիլայէթից։ Նրանք մեծ մասով հացագործներ են և բաւական ունեոր։ Մի քիւրտ բէկ վերջին 5--6 տարիները միշտ գալիս էր Խրիմ նրանցից ամեն տարի 1500 - 2000 ռուբլի հարկ առնում ու վերադառնում։ Այդ պանդուխտ հայերից տարգլուխ մի երիտասարդ՝ լսելով՝ որ քուրտը և հարկն է առնում և ամեն տարի երկրում եղածներին էլ կեղեքում իբր ստոր վաշխառու՝ 1899-ին խփում նրան՝ սպանում է Սիմֆերօպոլում և ինքն էլ գնում յանձնւում ոստիկանութեան։ Ռուսական արդարադատութիւնը ճանաչեց նրան անմեղ և ազատ արձակեց։

VI.

ՀԱՐԿԵՐԸ 1877-Ի ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ ԵՒ ՑԵՏՈՑ.

Վերևում յիշած բոլոր հարկերը գոյութիւն

ունէին այս դարի կէսերից սկսած, բայց նրանք կործանեցին ազգաբնակութեան ամբողջ տնտեսութիւնը միայն վերջին 25 տարիների ընթացքում։ «Ինչու նրանք իրենց աւերումները սկսեցին երեսուն հանել 80-ական թուերից միայն և ոչ, օրինակ՝ 50-ական թուերից», կարող է և շատ բնականօրէն հարցնել ամեն մի ընթերցող։ Եւ նա իրաւունք ունի. եթէ երկրի հարկերի մէջ ոչ մի խոշոր փոփոխութիւն չլինէր, նրանք հաւասարապէս պիտի քաշէին գիւղացուն և 50—60 թուերին, և 80—90 թուերին։ Այդ երեւոյթի բացատրութիւնը մասամբ և՛ շատ պարզ է, մասամբ և՛ շատ բարդ։

Երբ Տաճկաստանի մեծամասնութիւնը Դերբէկների ձեռքն էր, ժողովուրդի հարկը համեմատաբար շատ թեթեւ էր և ամեն ինչ վերցւում էր զլխաւորապէս բերքերով։ Երբ, օրինակ, գիւղացին ունէր 12 քիլէ ցորեն (քիլէն 7 փ 8 գր է), 40 ոչխար և այլն—բէկի մարդիկը գալիս չափում և, ենթադրենք, տանում էին նոյն իսկ $^1/_4$-ը կամ $^1/_3$-ը. այնուամենայնիւ երկրագործին մնում էր 8—9 քիլէ ցորեն, 27—30 ոչխար։ Է՛լի դրանով կարելի էր բաւական հանգիստ ապրել։ XVII—XVIII դարերից այդ երկրի ներքին կեանքից մեզ հասած հատ ու կտոր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ՝ թէև ազ-

գարնակութեան կեանքն այնքան ապահով չէր, բայց անտեսական խոշոր տագնապները չէին թագաւորում ու յարատեւում այնպէս, ինչպէս այժմ է այդ լինում նոյն երկրում։

Երբ դերէբէկերը ոչնչացան և երկիրը վերջնականապէս ընկաւ Ցաճիկ կառավարութեան վարչութեան տակ, կառավարութիւնն սկսաց հարկեր նշանակել կամ եղած հարկերը պարտաւորական դարձնել քրտերի հպատակ հայերի համար ևս։ Սկզբներում այդ հարկերը թէ բոլոր էին, թէ չափով տաճկի։

Այսպէս, օրինակ, 1830—50-ական թուերին՝ աշարը, բացի ցորենից ու գարուց, ուրիշ երկրագործական արդիւնքների վրայ չէր տարածւում։ Այգիները, բոստանները, խոտը, առւոյտը, շայիրները, և այլն—համարեա ազատ էին աշարից։ Այն ժամանակ չկար եէօլ-փարասըն, չկար ծխախոտի թէժին (մենաւաճառութիւն), չկար Հանրային Պարտքի վարչութիւնը (Դէյուն-Ումումիէ), չկար բաղմանդ-փարասըն, չկար արհեստների հարկը և այլն։

Բացի այդ բացակայութիւնը, եղած հարկերն էլ անհամեմատաբար աւելի քիչ չափերով էին, քան այժմ[1])։ Այսպէս՝ սկզբնական 2½—5 դա-

[1]) Եւ ինչպէս կարող էր ուրիշ կերպ լինել, երբ մինչև 1850 թիւը թիւրքիան «պեսական պարտք» ասած

հեկտանոց բեղելը-էսկէրիէն 1835-ի իրատէով բարձրացաւ 15 դահեկանի, 70-ական թուերին հասաւ մինչև 27 դահեկանի, իսկ Ռուս Տաճկական պատերազմից յետոյ հասաւ 37½ դահեկանի։ Քիչ էր և արդիէն (հողային հարկը) կամ Սալիանը, ինչպէս ասում էին այն ժամանակները։ Մի հող, որի վրայ կարելի էր յանել 20 քիլէ ցորէն՝ մինչև 1877-պատերազմը պետութեանը վճարում էր 100 դահեկան հարկ, իսկ այժմ ամեն 4 քիլէ ցորենի տեղի համար պէտք է վճարել 100 դահեկան, այսինքն՝ հարկը շատացել է ուղիղ 5 անգամ։ Շատացել է և չինութիւնների հարկը և միւս բոլոր տեսակ հարկերը։ Առաջ աշար վերցուում էր ortélno՝ երկրագործի արդիւնքի միայն ¹/₁₀-ը, իսկ այժմ

բանը երբէք չէր հասկանում, իսկ այդ թւից կամ աւելի ճիշտ՝ Քրիմի պատերազմից յետոյ՝ մինչև 1876 թիւը նա կնքեց 12 հսկայական փոխառութիւններ, 200-ից մինչև 250 միլիոն անգլիական ֆունտ հրէշաւոր գումարով. (տես Stambul und das moderne Türkenthüm, von einen Osmanen)։ Ռուս-Տաճկական պատերազմը եկաւ աւելացնելու այդ ծանր բեռը։ Այսօր, չնայելով որ ոգելից խմիչքները, երկաթուղիները, մետաքսը, աշխարի հարկը, ապը, ձկնորսութեան իրաւունքը, ծխախոտը, մաքսատները, ծովափերը, փարոսները և այլ բազմաթիւ արդիւնաբեր աղբիւրներ դանուում են եւրոպական պարտատէր կապիտալիստների ձեռին, վերջին 25 տարիների ընթացքում այսուամենայնիւ թիւրքիան նորից անքում է 1,230,415,000 ռուբլի պարտքի տակ, վճարելով միայն տոկոս տարեկան 55,250,000 ռուբլի, չհաշուելով մանր պարտքերը։

նոյն օրէնքը պահամջում է 1/8 և 1900 թուից սկսած 1/7։ Առաջ ամեն մի այծի կամ ոչխարի համար վճարում էր—օրինակ— 1 դահեկան, իսկ այժմ 4 1/2։

Այստեղ մի փոքր փակագիծ։ Մինչև վերջին պատերազմը Տաճկաստանը շատ էլ չէր մտածում գպրոցների մասին. իսկ պատերազմից յետոյ լուսաւորութեան կարիքը զգաց և աշարը մեծացրեց, որ նրա աւելացած մասով միլլեթ մեֆթերիներ (ժողովուրդական կամ ազգային գպրոցներ) բանայ։ Եւ յիրաւի, բացուեցան այդպիսի գպրոցներ։ Կարնի այդ հաշուով կառուցած գպրոցի շէնքը նստել է 6—7000 ոսկի, Խարբերդինը նոյնպէս. այն ինչ՝ այդ արհեստից հասկացողների վկայութեամբ՝ դրանք հազիւ արժեն 1000—1500 լիրա։ Մնացածը կլանել են մեծորկոր պաշտօնեաները։ Այդ նպատակով հաւաքուած դրամը յաճախ անցնում է զինուորական նախարարութեան ձեռքը և աւելի յաճախ շոգիանում է զանձարանից։ Եւ իբր թէ այդ գպրոցներում պէտք է ուսանէին բոլոր հպատակ ազգերի զաւակները, առանց կրօնի և ազգութեան խտրութեան. բայց, գործին մօտ մարդկանց վկայութեամբ՝ մի հատ անգամ քրիստոնէի զաւակ չի յաճախում այնտեղ...

այն ինչ հարկի մեծ մասը նրանց մէջքի վրայ է բարդուած։

Երբ պետութիւնը մոցրեց փողային հարկերը, և մանաւանդ երբ նա շատացրեց և նրանց տեսակներն ու չափերը՝ գիւղացու խորարմատ դարեւոր տնտեսութիւնը սկսեց նախ հիւծել կամաց-կամաց և ապա, պատերազմից յետոյ, երբ աշարի մեծ մասն էլ սկսվեցաւ փողով առնել և գինուորական տուրքը բարձրանալ ամեն արու անհատից 40—42—45 դահեկանի անլուր չափին՝—գիւղացու տնտեսութունն սկսեց ճաթճաթելով ու ճռճռալով քայքայել այնպէս, որ երկիրն ընկաւ համաճարակ աղքատութեան կամ պաուպերիզի գիրկը. նրա բրիստոնեայ ազգաբնակութիւնը ձեռք առաւ պանդխտութեան և գաղթականութեան ցուպը, դարձաւ թափառաշրջիկ, մուրացկան, օր հացի կարօտ։ Իսկ միւս կողմում հարուստ հողը, դրախտային պարտէզները մնացին առանց մշակող ձեռքերի. հաւաքեցաւ, կենտրոնացաւ մի քանի սակաւաթիւ ուժեղ ձեռքերում կամ անտէրացաւ ու խոպանեցաւ։

Քննենք այժմ այն անտեսանելի պատճառը, որ քայքայեց երկրի տնտեսական կեանքը, երբ փողային հարկը ոտ դրեց շէմքից ներս։ Դա կարեւոր երեւոյթ է. պէտք է դրայ վրայ կանգ

առնել։ Իսկ այդ երևոյթը պարզ ըմբռնելու համար՝ պէտք է դէթ մի քիչ ծանօթ լինել Տաճկաստանի ասիական նահանգների տնտեսական դրութեան, նրա զարգացման, նրա արդիւնագործութեան, նրա հարաբերակցութեան ճանապարհների հետ։

Երկրի աղգաբնակութեան խոշոր մեծամասնութիւնը գիւղացի դասն է՝ երկրագործական և խաշնարածական զբաղմունքներով[1])։ Քաղաքների թիւը համեմատաբար՝ շատ քիչ է։ Մեծ քաղաքներ բոլորովին չկան։ Մեզ հետաքրքրող սահմանների մէջ ամենամեծ քաղաքներն են՝— Էրզրում, Վան, Դիարբեքիրը և Սեբաստիան. դրանցից ամեն մէկն էլ հազիւ թէ 50—65 հազար բնակիչ ունենան։ Եղած քաղաքներն էլ դեռ ևս ամբողջովին չեն դուրս եկել՝ այսպէս

[1]) Թէ Եւրոպական, թէ Ռուսական մամուլի մէջ մի քանի անգրաբեխիղջ գրողներ իրենց համար արհեստ են դարձրել հայերի վրայ յարձակուել, իբր մի վաշխառու, չարչի ժողովրդի վրայ, որի մեծամասնութիւնը վաճառականներ, վաշխառուներ են։ Այդ տեսակ անձերից նոյն իսկ ամենաուղղամիտները, որ անկեղծօրէն հաւատում են ասածներին-ծանօթ չեն ժողովրդի հետ։ „Россія въ Цифрахъ“ վիճակագրական պատկառելի հրատարակութիւնը ցոյց է տալիս, որ հայ երկրագործները Կովկասում կազմում են ամբողջ Կովկասի հայութեան 86%-ը . . . Իսկ որքան կը լինի հայ երկրագործ դասը Թուրքիայում . . . Մենք կարծում ենք, որ դէթ 90% հաշուել նրանց թիւը երբէք չափազանցութիւն չի լինի։ Բարեիղձութիւն չէ տեսնել միայն Մարսէյլի, Պարիզի, Լոնդօնի կամ Մոսկվայի ու Պետերբուրգի վաճառական հայերը և դրանից եզրակացնել, որ բոլոր հայերը վաճառական, չարչի են։

ասած՝ «գիւղական շրջանից»։ քաղաքի կենտրոնում վաճառականոցն է և արհեստանոցները, վարչական և ազգային հիմնարկութիւնները, իսկ քաղաքի շուրջը, մի համակենտրոն շրջանով պարփակում է քաղաքային երկրագործը (ռաշար), որ ներկայացնում է մի տեսակ «գիւղ՝ քաղաքի մէջ»։ Դա մնացորդ է գիւղական կեանքի, կամ մի տեսակ անցողական գրութիւն է բուն քաղաքի և գիւղական կեանքի։

Մի երկրի կուլտուրական զարգացումը խիստ կերպով կապած է նրա քաղաքների թիւի շատութեան և նրանց բնակիչների առատութեան հետ։ Որքան մի երկիր կուլտուրապէս զարգանում է, այնքան նրա քաղաքների թիւը շատանում է և նրանց բնակիչները բազմանում։ Ազգաբնակութեան այդ կենտրոնացումը քաղաքներում բնական արդիւնք է մեր ներկայ պատմա-անտեսական շրջանի, կուլտուրական զարգացման ճակատագրական պայմանների։ Այսօր ամենակուլտուրական երկրները համարւում են Անգլիան, Ֆրանսիան, Միացեալ-Նահանգները, Գերմանիան և այլն. և դրանց պէս էլ համեմատաբար աւելի շատ և աւելի բազմամարդ քաղաքներ ունեցող երկիրներ չկան։

Անցնում ես մի 2—300 վերստ, օրինակ Զուիցերիայով պատահում ես 15—20 քաղաք-

ների. իսկ եթէ այդպէս երկու տարածութիւն անցնես Տաճկա-Հայաստանում, հարիւր թէ 4—5 քաղաքի պատահես, այն էլ կէս-քաղաք՝ կէս-գիւղ։ Սա կուլտուրական ծայրայեղ յետամնացութեան նշան է։

Երկրի ազգաբնակութիւնը դեռ ևս երկու որոշ մասեր ունի. նոստակեաց երկրագործներ և թափառական-խաշնարածներ։ Թափառական ցեղերը դեռ ևս ապրում են սոցիոլոգիայի մէջ լաւ յայտնի բարբարոսական շրջանի սահմաններում, հարիւր մօտեցած բաղսակերութեան սկզբնական շրջանին։ Նրանց մէջ դեռ ևս կը տեսնէք գենսը կան կլանը (տոհմ-ցինս). ցեղը կամ տրիբիւն (աշիրէթ), ցեղերի դաշնակցութիւնը, ամուսնութեան նախկին ձևերի մնացորդները, աղջիկ փախցնելը, օջախի սրբութիւնը, «արեան վրէժը», վինդգետտան և այլն։ Մասնաւոր սեփականութեան գաղափարը դեռ ևս այնքան թոյլ է, այնքան քիչ է յարգւում և ցեղային համայնական սեփականութիւնը դեռ ևս այնքան թարմ յիշատակներ ունի, որքան Հոմերական շրջանի յոյների կամ բաղմաթիւ ափրիկական Նեգրների մէջ։ Մարդկութեան զարգացման ներկայ պերիոդում կուլտուրական զարգացման հետ ձեռք ձեռքի տուած գնում է և «ուրիշի սեփականութեան», «ուրիշի անձ-

նաւորութեան» յարգանքի զարգացումը։ Գողութիւնը, յափշտակութիւնը, թալանն ուելի շատ են յետամնաց ազգերի մէջ։ Սրա պատճառը, բացի սճրային և այլ պայմաններից, մասամբ նաև անհատական մասնաւոր սեփականութեան գաղափարի խակ վիճակն է։ Քուրդն իր աշխրաթի ներսում չի գողանում, իսկ իւր ցեղին չպատկանող ամեն անձից գողանալը հաջողութիւն է համարում։

Երկրագործ ազգաբնակութիւնը գտնւում է իսկական միջնադարեան վիճակի մէջ։ Հողագործութիւնը, մեղւաբուծութիւնը, կամնատնտեսութիւնը, այգեգործութիւնը և այլն՝ կատարւում են բոլորովին սկզբնական, նահապետական ձևերով։

Եւրոպայում ձեր արած ամեն մի քայլը շրջապատւած է անվերջ մշակւած հողերով. չկայ մի մատնաչափ անմշակ հող, բացի լեռներից ու ժայռերից։ Այնտեղ յաճախ գիւղերն իրար հետ միանում են. ամեն բայլափոխիդ մի գիւղ, մի քաղաք ես պատահում։ Իսկ այստեղ՝ երբեմն օրեր ես գործ դնում, որ մի գիւղից միւսը հասնես. հողերն էլ անվերջ բանակութիւններով անմշակ ընկած են։ Ազգաբնակութիւնն սպանիչ կերպով նոսր է։

Մի կուլտուրական երկրի ամենաառաջին

նշանն է նրա հաղորդակցութեան միջոցների զարգացումը և տեսակները։ Աշխարհի սկզբնական ամենամեծ քաղաքակրթութեան օրրանները եղել են նաւարկելի մեծ գետերի ափերին. Նեղոս, Գանգէս և Ինդոս, Ամու-Դարիա և Սիր-Դարիա, Եփրատ և Տիգրիս (Միջագէտքի մասերը միայն), Դեղին գետ և այլն։ Երկրորդ քաղաքակրթական շրջանը ծովերի ափերումն է զարգացել, երբ մարդիկ մի քիչ աւելի են վարժուել պատրաստել նաւեր ու նաւակներ. Փինիկիա, Յունաստան, Իտալիա, Կարթագէն, Սիցիլիա, Իսպանիա, Պորտուգալիա, Հոլլանդիա, Անգլիա և այլն։ Երրորդ շրջանը ցամաքայինն է, որ կոչւում է համաշխարհային շրջան։ Այստեղ գործում են խճուղիները, երկաթուղիները, շոգենաւերը, գետը, ծովը, ովկիանոսը, շոգին, էլէքտրականութիւնը և այլն (Տես՝ Մեչնիկով Les grandes fleuves historiques et la civilisation)։ Հայոց երկրի ամենամեծ դժբախտութիւնը եղել է նաւարկելի գետերից ու յարմար ծովային ճանապարհներից զուրկ լինելը։ Իսկ այս նոյն երկիրը կարող է էապէս քաղաքակրթուել միայն ցամաքային յարմար ճանապարհներով, ինչպէս Չուիցերիան, Աւստրիան և այլն։ Այդպիսի յարմար ճանապարհներ Տաճկա Հայաս-

տանում բոլորովին գոյութիւն չունին։ Երկաթուղիների մասին խօսելն անգամ աւելորդ է. մնում է խճուղի։ Իսկ խճուղի, ինչպէս միանգամ էլ ասացինք, մենք միայն երկուսը գիտենք հայկական ճանաչուած վեց վիլայէթների շրջանում (Կարսի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սըվազի վիլայէթներ) և նրանք էլ ողորմելի, բայբայուած վիճակի մէջ։

Հաղորդակցութեան միակ միջոցը կարաւանն է՝ ձին, ջորին, էշը, ուղտը, եզն ու գոմէշը... իսկ դրանցով շատ հեռու չես գնալ։ Դրանցով վաճառականութիւն, ներքին արդիւնագործութիւն և արդիւնահանութիւն չի կարող զարգանալ. փոխադրութեան ծախքը 1, 2, 3—5 անգամ աւելի է լինում, քան արդիւնագործութեան բոլոր ծախքերը միասին։ Իսկ մի և նոյն ժամանակ՝ քո անմիջական դրացիներդ ամեն ինչ կատարում են դիտութեան տուած վերջին միջոցներով՝ և լաւ, և էժան... մանաւանդ երբ ունիս մի պետութիւն, որ փողի ու զէնքի ուժի տակ ճնշած՝ ստիպած է ազատ բանալ իր դռներն ամեն մի պետութեան վաճառականութեան առաջ, առանց պահպանողական տարիֆների, առանց իր ներքին արդիւնագործութեան վրայ ուշք դարձնելու...

Թուրքիայի մաքսերն՝ ամեն պետութեան համար՝ ներմուծված ապրանքի արժէքի 100-ից 8-ն է։ Այդքան չնչին մաքս վճարող ապրանքը բոլորովին մեռցնում է Թուրքիայի ներքին արդիւնաբերութիւնը, խեղդում է նրան սաղմի մէջ և թողնում միայն հում նիւթերի արտադրութիւնը։

Արդիւնաբերութիւնը բոլորովին միջնադարեան է. Երկրագործութեան և խաչնարածութեան մասին արդէն խօսեցինք։ Նոյնն են և արհեստները, և ինդուստրիան։ Ամբողջ երկրում մի գործարան չէք գտնի։ Ցայտնի է Վանի շալը կամ ապաև, Բաղէշի շիլաև, Երզրումի էհրաՀը, Երզնկայի, Ակնի և Արաբկիրի մանիսան, Երզնկայի և Մարաշի խաւլուն (երեսսրբիչներ, բաղանիսի ցամքոցներ) և այլն։ Եւ այդ բոլորը նահապետական ձևերով է արդիւնաբերւում։ Զուլֆակի (սոստայնակ) հորը, նրա մի երկու փայտէ ձողերը, նրա սանրերը և մաքուքը—ահա բոլորը... Ուրիշ մի աչքի ընկնող արդիւնաբերութիւն չկայ, որի վրայ կանգ առնես։ Մնում են հանքային հսկայական հարստութիւնները։ Աղը հանրային պարտքի վարչութեան ձեռքն է—եւրոպական կազմակերպված վաշխառութեան երկաթէ ձեռքերի մէջ. նրանից ժողովուրդը չի շահում, այլ տու-

ժում է... Գիմիշխանէի արծաթի հանքը մշակում է մարդկային ձեռքի, ձիերի և ջորիների ֆիզիքական ուժովը. մեքենան բացակայում է, կամ եղածն էլ «ամադան-բարադան» մնացած հնութիւններ են, որ Եւրոպայում միայն մուզէյումներում կը տեսնէք։ Երկրի հանքային հարստութիւնը դեռ ևս ուսումնասիրուած չէ։ Այս ու այնտեղ եղած յայտնի հանքերն էլ անմշակ ընկած են։ Պղինձ, երկաթ, նաւթ շատ տեղերում կայ, բայց մշակող, օգտուող չկայ։ Երբ մարդիկ մտածում են իրենց գլուխներն ուսերի վրայ պահել—այնտեղ հանքերի մասին մտածելն էլ դժուար է... Եթէ նոյն իսկ բոլոր յարմարութիւնները լինին։

Վաճառականութիւնն էլ արդիւնաբերութիւնից աւելի առաջ չէ գնացել։ Ամբողջ Տաճկաստանում կայ բաւականաչափ զարգացած մի վաճառականութիւն, բայց նա հայկական նահանգների հետ շատ քիչ առնչութիւն ունի։ Նրա իսկական շրջանները են Եւրոպական Տաճկաստանը և ասիականի ծովափերը. Կիլիկիա-Մերսինից մինչև Ատանա, Ալէքսանդրետից մինչև Անտիոք, Հալէպ և մասամբ Այնթապ. Բէյրութից՝ Դամասկոս, Հաուրան, Եաֆայից՝ Երուսաղէմ, Զմիւռնիայից մինչև Աֆիոն-Գարահիսար և Էնկիւրու (Գալատիա). Պոլսից-

Իզմիր, Բուրսա, Գոնիա և այլն։ Իսկ մեզ հետաքրքրող շրջանում Եւրոպական վաճառականութիւնը մուտք է գործել մի քիչ՝ Տրապիզոնի վրայով՝ Կարին, Երզնկա և Շապին-Գարահիսար. Կարնից էլ անցել են ողբալի փշրանքներ դէպի Մուշ, Բաղէշ, Վան և այլն։ Սամսոնի և Կերասոնի վրայով դէպի Ամասիա, Թոգատ, Սեբաստիա, Կեսարիա, Դիմրիկ, Խարբերդ, Դիարբեքիր և այլն։ Կրկնում եմ—սա ոչ թէ մի թարմ վաճառականական հոսանք է, այլ խղճուկ փշրանքներ միայն։

Քաղաքներից դուրս, երկրի բաւական ընդարձակ սահմաններում, ապրանքների փոխանակութիւնը կատարւում է նահապետական ձևով։ Քաղաքներում փողն արդէն դարձել է փոխանակութեան միութիւն։ Ամեն բան անցնում է ապրանք-փող-ապրանք կամ փող-ապրանք-փող երրորդութեան օղակներով։ Իսկ գիւղերում մինչև օրս էլ փոխանակութեան մեծ մասը կատարւում է ապրանքներով։ Ապրանք-փող-ապրանք ֆորմուլան, որ արդիւնագործող սպասողի (օրինակ՝ երկրագործի, արհեստաւորի և այլն) տնտեսական ձևն է, այնտեղ կրճատւած է։ Քիչ ու միչ քաղաքակրթւած երկրում՝ երկրագործը կամ արհեստաւորն նախ պէտք է իր ապրանքը (Ա.) ծախէ, իրականացնէ կամ փողի

վերածէ (Փ) և ապա այդ փողով նոր ապրանք (Ա.) գնէ, իր սեփական գործածութեան համար։ Իսկ Տաճկա-Հայաստանի գիւղացին և յաճախ նոյն իսկ արհեստաւորը՝ բաց են թողնում միջին օղակը-փողը. նրանք փոխում են ապրանքի հետ. ինչ որ մէկը շատ ունի, տալիս է այնպիսի մարդուն, որն իր ունեցածից չունի և ուզում է ունենալ կամ կարիք ունի. իսկ այդ երկրորդն ունի այնպիսի ապրանք կամ նիւթ, որին առաջինը կարիք ունի։ Փողը շատ քիչ դեր է խաղում, այն էլ ծայրայեղ պարագաներում։

Բառնում է գիւղացին իր ձիերի վրայ ցորեն, ալիւր կամ մրգեր և տանում նրանց այնպիսի տեղ, ուր ցորենի, ալիւրի կամ մրգերի կարիք կայ և ուր, օրինակ, իւղը կամ պանիրն է առատ։ Տալիս է, ենթադրենք, 4—5 քիլէ ցորեն և առնում է 1 քիլէ իւղ կամ 2—3 քիլէ պանիր։ Քաղաքի մի քիչ եւրոպականացած վաճառականից վերցնում է մանր առևտրականը (փերեզակ, շարշի) նաղդ փողով ապրանք, տանում գիւղերը և ծախում հացով, ալիւրով, հաւով, հաւկիթով, ոչխարով և այլն. և յետոյ այդ բոլորը բերում քաղաք՝ մասամբ իր տան համար գործածում կամ գլխաւորապէս՝ ծախում։

Այդպէս է ոչ միայն Տաճկա-Հայաստանում,

այլ և ռուսական տիրապետության տակ 24 տարի մնացած նոր նուաճած երկրներում, ինչպէս Ղարսի, Կաղզվանի, Օլթիի ու Արտահանի մի քանի գաւառներում։ Մինչև օրս էլ Կաղզվանի այգեպուրը տանում է իւր ծիրանն ու տանձը Գեօլայ կամ Բասենի գիւղերը և փոխում նրանց իւղի, ցորենի ու պանրի հետ։ Այս վերջին տեղերում անգամ փողը շատ քիչ մուտք ունի ապրանքների փոխանակութեան մէջ։ Իսկ աւելի, շատ աւելի յետամնաց Տաճկա-Հայկական նահանգներում փողի գործածութիւնը անհամեմատ աւելի սահմանափակ է։ Այնտեղ գիւղերում ամեն մարդ արդիւնաբերող է. ամեն ընտանիք՝ իր աշխատանքով արդիւնագործում է իր համար անհրաժեշտ երկրի մեծ մասը. մնացած փոքր մասն էլ ձեռք է բերում փոխանակութեան միջոցով—ապրանք կամ նիւթ տալով ապրանքի փոխարէն։

Տնտեսութեան այս ձևը գիտութեան մէջ յայտնի է «բնական տնտեսութիւն» (Naturalwirthschaft) անունով։ Նա թագաւորում էր միջնադարեան Եւրոպայում, այս օրուան Պարսկաստանի ու Չինաստանի նեղրին մասերում, ափրիկական Նեգրների, Կաբելների և այլ բարբարոս ցեղերի մէջ։ Ֆրանսիան, օրինակ, նոյն տեսակ փոխանակութիւն ունէր

Լիդովիկոս XIV-ից և Կոլբերից առաջ։ Եթէ այդպիսի տնտեսութիւն ունեցող մի երկրի կառավարութիւնը չաշխատի կատարել նրա փոխանցումը բնականից փողային տնտեսութեան՝ երկրի ազգաբնակութիւնը կընկնի ծայրայեղ ապրատութեան, պատերազմի մէջ։ Նախ պէտք է այժ տալ ներքին արդիւնագործութեան (որա համար՝ պահպանողական մաքսեր, արհեստական խրախոյսներ տալ սեփական ինդուստրիային և այլն), պէտք է զարգացնել հաղորդակցութեան միջոցները (կանոնաւոր խճուղիներ, երկաթուղիներ, հեռագիր, նաւեր և այլն), սրանով ստեղծել ներքին հրապարակ կամ վաճառանոց և ապա միայն աստիճանաբար անցնել փողային տնտեսութեան ու փողային հարկերի։

Քննենք այժմ փողային հարկերի առաջացրած հետևանքները։

Քանի դեռ Դերէբէկերն էին տիրում երկրի մեծ մասին՝ հարկերի մեծ մասը վերցնում էր բերքերով և մի շատ չնչին մասը փողով։ Իսկ այդքան փողային հարկը դեռ տանելի էր։ Քուրտ բեկերի կողքից գալիս էր կրօնաւորը. նա էլ իր հարկերն էր ուզում սա պատկադրամ է, միւսը պեղի է, երրորդը հոգևորականների հասոյթ է և այլն։ Քուրտը և պե-

տութիւնը առնում էին զէնքի ուժով, իսկ հոգեորականը կրօնի, դժոխքի, մեղքերի քաւութեան, վերջին դատաստանի և դրախտի ուժով։ Միայն կրօնական տուրքերի մեծագոյն մասն էլ բերքերով էր առնում։

Եկաւ պետութիւնը։ Նա բանակ է պահում, զէնք է գնում, պատերազմներ է մղում. բոլոր քաղաքակիրթ պետութիւնների հետ յարաբերութեան մէջ է։ Իսկ այս ամենը հնչիւն դրամով է լինում։ Նա չի կարող հարկը մթերքներով հաւաքել. նրա հարկը փողային է։ Նա չի կարող, օրինակ, իր զեսպաններին խոտով ու ցորենով ռոճիկ տալ... Սկզբներում, ինչպէս արդէն նկատեցինք, նրա փողային հարկերը քիչ էին և երկրի «բնական տնտեսութեան» համար անդամ տանելի։ Իսկ երբ նրանք պետական օր աւուր աճող կարիքների հետ միասին սկսեցին աճել, այն ժամանակ փողային հարկն սկսեց իր աւերիչ դերը*)։

*) Մի փոքրիկ գաղափար տալու համար՝ թէ որքան են պետական ծախքերը շատացել՝ առաջ բերենք հետևեալ թիւրը. 1850 թուերին թրքական ծովային և ցամաքային բանակի ծախքն էր 77,625,000 ֆրանկ (Ubicini — „Lettres", etc), իսկ 1890-ական թուերին նոյն ծախքը բարձրացել էր մինչև 225,000,000 ֆրանկի (Prof. A. L. Hickmann's „Taschen-Atlas" 1899 թ.) կրնշանակէ շատացել է առնուազը 3 անդամ։ Իսկ ամբողջ պետական բիւդժէտը 1850 թուերին 173,052,000 ֆր. էր, 1893 թուին՝ թրքական ոսկիներով դրող Բօռէն Դ'Ալլոշի վկայութեամբ՝—396,750,000 ֆր., այսինքն մօտ 2½ ան-

Գնահատում են այգու աշարը և արագիէն 2½—3 ոսկի։ Այգու բերքը ենթադրենք, նույն իսկ հիանալի է. բայց գիւղացուց բերը չեն ուզում, այլ 270—324 դահեկան հնչիւն դրամ են պահանջում։ Այգեստէրը դրամ չունի, իսկ միրգ գնողները ցորեն, իւղ, պանիր են տալիս, փողով գնող չկայ կամ եղածը չափազանց քիչ է, որ հաղիւ կարող էր բաւականացնել փոքային հարկերի 1830—40 թուերի չափերին։ Ի՞նչ անի այգեստէրը, ո՞ւր տանի իր պտուղները. հաղորդակցութեան ճանապարհներ չկան, եղածներն էլ անկանոն են ու անապահով՝—բիւրսն է թալանում, աւազակը կողոպտում, երբեմն էլ գնդակով սիրտն է ծակում... Վերջապէս ներքին վաճառանոց չկայ. եթէ տանի մօտաւոր գիւղը, փողով առնող չկայ, քաղաքն էլ շատ հեռու է, միրգը փչանում է ճանապարհին. մանաւանդ որ մրգի, ցորենի և այլ երկրագործական արդիւնքների գինն ընկած է ամբողջ երկրում, բացի Ծովափնեայ մեծ քաղաքներից։

Նոյնն է ցորենի ու գարու, այծի և ոչխարի,

դամ աւելացած։ Այս էլ նկատելու է, որ 50 թուերի Տաճկաստանը դեռ ևս պարունակում էր Եգիպտոսը, Բուլղարիան, Թումանիայի և Սերբիայի մեծ մասը, Մոլդավիան, Վալախիան, Կիպրոսը, Յունաստանի մի մասը, Կրետէն և այլն, իսկ այսօր զրկուած է այդ ամենից։ Սը նշանակէ՝ պէտք է նրա այժմեան ծախքը դէթ կրկնապատկել, որ համաչափ լինի 50-ական թուերի Թուրքիային... փոքր պետութիւնը քիչ ծախք կո.նենայ, մեծը—շատ։

արտի և կալածի տիրոջ դրութիւնը։ Փող չկայ, գները կոտրուած են, ներքին փողային շուկայ չկայ, իսկ արտահանելու հնար չկայ, որովհետև կանոնաւոր և ապահով ճանապարհներ չկան։ Բայց փողն այնուամենայնիւ հարկաւոր է. պետութիւնն իր հարկը ուզում է փողով։

Ահա այդ ժամանակ օգնութեան է հասնում վաշխառուն, գրամագլխի ամենատոր, ամենակեղեքիչ և անբարոյական ձեի ներկայացուցիչը։ Նա կամ առնում է գիւղացու արդիւնքները (ի հարկէ երկար դիմացողները միայն) սպանուած, ամենատոր գներով կամ նրան տոկոսով փող է տալիս։ Ցաճախ, շատ յաճախ գիւղացու բոլոր արդիւնքը ծախսում է և ստացուած փողը հազիւ է բաւականացնում միայն զինուորական հարկը կամ մի երկու այլ տուրքեր միասին։ Մինչև յաջորդ բերքն ապրուստի միջոց այլ ոչ չի մնում։ Եւ գիւղացին ստիպւում է նոր ու նոր պարտքեր անել վաշխառուից կամ գնալ Պոլիս, Կովկաս, Բուլղարիա, Ամերիկա մի քիչ նպդ փող պատելու, հարկերն ու պարտքերը տալու։ Իսկ վաշխառուի տոկոսները հրէշաւոր են. 10-ը ոսկին 4—5 տարուայ մէջ դառնում է 60—70 ոսկի։ Գիւղացին իր ամբողջ ընտանիքով դառնում է վաշխառուի ճորտը, նրա համար է աշխատում միայն տոկոսների

կէսը, մի բառորդը վճարելու համար... մի գեղեցիկ օր էլ իւր բոլոր շէնքերն ու հողը, այգին ու ստացուածքը տեսնում է վաշխառուի ձեռքում, պարտքի տեղ խլած, մեջլիսի (դատարան), օրէնքի միջոցով ու վճռով։

Աշար հաւաքելու դէպքում վաշխառու կապալառուն հանդիսանում է մի կողմից իբր հարկահան, միւս կողմից իբր հացահատիկներ և անասուններ գնող։ Մի կողմից սեղմում է նա գիւղացուն, հարկն է ուզում, իսկ միւս կողմից կամ անձամբ, կամ իր ազենտների միջոցով ամենատոր ու կոտրուած գներով գնում է գիւղացու վերջին քիլէ ցորենը, նրա վերջին լուծը եզը կամ մի քանի ոչխարները։

Ահա թէ ինչու 1877-ի պատերազմից յետոյ սկսեց քայքայել Տաճկա-Հայաստանի բոլոր տնտեսութիւնը, նրա զօրեղ ու դարեւոր հիմքերը։

Եւ քանդւում, կործանւում են տնտեսութիւններն ու ստացուածքները իրար ետեւից։ Ինչու մշակել Մշու դաշտի դրախտանման այգին, երբ միայն աշարը վճարելու համար ամբողջ բերրը տալիս ես, ձեռք չին քաշում։ Ինչու հող ունենալ կամ ինչու մշակել այդ հողը, երբ աշարդին ու էսկէրիէն, աշարն ու խամշուրը վերջ ի վերջոյ ստիպում են ծախել այդ

հողը մի վաշխառուի, մի ագայի։

Այգիները կտրատում, պտղատու մայրհողը բարձիմսղի անում, ամայանում են։ Այն երկիրը, որի մէջ հրէայի արևելեան վառ երևակայութիւնը տեղաւորել է մարդկային երջանկութեան իդեալ դրախտը, այսօր իր սակաւաթիւ ազգաբնակութեանն անգամ հրաժարւում է կերակրել։

Կայ պտղատու հող, ջուր, այգի ու անդաստան. կան աշխատասէր ու մշակող ձեռքեր։ Բայց հարկերի, փողային ծանր հարկերի ճնշումը, բրդի ու աւազակի թալանը, կառավարութեան սիստեմի կատարեալ անիշխանութիւնը՝ մի անհերևոյթ պատի պէս խանգարում են մարդկային երջանկութեան ազբիւրը կազմող մայրերկրի և աշխատաւոր ձեռքերի միացման։ Հողը խոպանանում, փչանում է, իսկ աշխատաւոր գիւղացին գաղթական, մուրացիկ դառնում.

Եւ այս բոլորի արմատական պատճառը հարկերի փողային ձևի, նոցա գանձելու եղանակի եւ նրանց անհամաչափ մեծութեան մէջն է թաքնուած։

Փողային չափազանց հարկն առաջացրեց նիւթական քայքայում, աղքատութիւն ու սոմ. դրանից ծնեցաւ դժգոհութիւն ընդդէմ տիրող կարգերի։ Վրայ հասաւ շունչ ու կենդանու-

թիւն տող գաղափարը — առաջնորդեց, որոշ ձև տուց խալ ու բնագրական բողոքին։ Սկսեցաւ գոյութեան կռիւ ժողովրդի, ճնշածի, կեղեքուածի և բռնակալութեան, ճնշողի, կեղեքողի մէջ։ Կեղեքողը զօրեղ էր և յաղթեց. արիւն հոսեց ամեն տեղ, բայց դրանով պետութեան ոչ հիմքերը ամրացան և ոչ էլ եկամուտները շատացան *)։

Զարմանալին այն է, որ գտնուեցան մարդիկ, որոնք գերմանական ու անգլիական մամուլի մէջ սկսեցին ճառել, թէ Ցանկա-Հայաստանի տնտեսական այդ դրութիւնը ծնաւ կապիտալիզմի մուտ գործելու շնորհով.

*) 1895—98 թուերին տեղի ունեցած կոտորածներն ու բարբարոսութիւնները տին՝ Ցանկի կառավարութեան համար՝ հարկերի վերաբերութեամբ՝ հետեւեալ արդիւնքը, որ գաղում ենք „National Zeitung“ թերթի 1898 թի համարներից մէկում մի ձեռնհաս անձի յօդուածից. „Այն նահանգները, որ 80—100,000 դահեկան հարկ էին տալիս, այժմ 10,000 դահեկան անգամ դժուարութեամբ են բերում։ Միլիոնաւոր դահեկաններ Ցամբուլ իբր հարկ զրկող նահանգներն այսօր հազիւ այնքան են տալիս, որ տեղական ծառայողների ռոճիկն անգամ չի լրացնում։ Պատճառը նախ 50—100,000 հայեր կոտորելն է, որոնց տեղերը բռնեցին խիստ անկանոն հարկ վճարող քրդերը և, երկրորդ, հարկերը կապալով գնողներն այլ ևս հայերը և Նոյն իսկ Թուրքերը չեն, այլ Սուլթանի ձեռքով զինուած քուրդ բէկերը, որոնք առաջուց յայտարարում են, թէ հարկերն իրենք են գնելու։ Նրանց երկիւղից ոչ ոք չի մտանում հարկերի աճուրդին և կապալն էժան գներով նրանց վրայ է մնում։ Զաբի փաշան, օրինակ, այդ միջոցով միլիոններ զիւեց և նոյն իսկ կարծւում է, որ նա ձգտում է քրդական առանձին իշխանութիւն հիմնելու“։

Նրանք քարոզեցին, որ Ցանկա-Հայաստանում ծագեց բանաորական խնդիր: Նրանցից մէկն սկսեց նոյն իսկ հաստատել, որ «բանկերը և այլ կրեդիտական հաստատութիւնները հիմք են բռնել Հայաստանում», որ «մամի և մետաքսի գործարաններ են հաստատել»*). . Ո՞ւր են այդ բանկերը և գործարանները. Բազմ, թէ Կարին. Թիֆլիս, թէ Բիթլիս, դրա մասին «բաջութեամբ լռում էին»... Այդ մարդիկը գրում էին այն բանի մասին, որն իրենց համար աւելի անծանօթ էր, քան չինական լեզուն... Նրանք հայ գաղթականին կամ քրդի ու վաշխառուի ձեռքից սար ու քոլ ընկած հայ մուրացիկին պրոլետարիատ պատուաւոր տիտղոսը տուին և Նրանց վրին փաթաթեցին զանազան անգիր արած թէորիաներ: Իսկ աւելի զարմանալին այն եղաւ, որ գտնուեցան բազմաթիւ «գրագէտ», «հրապարակագիր», «բանաստեղծ» և այլ միամիտ հաւատացողներ: Թողնենք դրանց և անցնենք մեր նիւթին:

Ցնտեսական համանման մի տագնապ մենք տեսնում ենք Ֆրանսիական պատմութեան մէջ, XVII տարի վերջերը և XVIII-ի սկիզբները, Լիւդովիկոս XIV-ի թագաւորութեան վերջին

*) Տես „Neue Zeit"-ի 1896 թ-ի ամառուայ համարները, պ. Ա. Նազարբէկեանի յօդուածը:

տարիներում։ Երբ Լիւդովիկոսն սկսեց երկար ու անմիտ պատերազմներ Իսպանական թագի ժառանգութեան համար, Ֆրանսիայի ծախքերը հասան հրէշաւոր չափերի, համեմատելով իր այն ժամանակի ազգային հարստութեան հետ։ Իսկ այդ հարստութիւնն արդէն բաւական աճած էր. արդէն Կոլբերի շինող ձեռքերը, նրա հովանաւորող (protectionniste) տարիֆների կամ մաքսերի սիստէմը գործել էին. երկիրն արդէն տնտեսապէս բաւական բարձրացել էր, ճանապարհները կանոնաւորուել և այլն։ Բայց պատերազմները խստացրին փողի պահանջը և Լիւդովիկոսը փոխեց մինչև այդ ժամանակ գոյութիւն ունեցող հարկերի «բնական սիստեմը» (մթերքներով հարկ առնելը) և մըտցրեց զուտ փողային հարկեր և այն էլ բաւական զօրեղ չափերով։ Մի կողմից պատերազմների աւերիչ ազդեցութիւնը, միւս կողմից հարկերի փողային ձևի դառնալը՝ քայքայեցին Կոլբերի ծաղկեցրած Ֆրանսիայի տնտեսութիւնը։ Ժողովուրդը հասաւ այնպիսի դառն ու խեղճ վիճակի, որ նրա լսկ նկարագրութիւնն անգամ կարդացողի մաղերը փշաքաղում են... Եւ ով կարող է պնդել, որ տնտեսական այդ քայքայումը չդարձաւ Ֆրանսիական մեծ յեղափոխութեան պատճառների-պատճառը կամ նրա

հիմնաքարը։

Աւելորդ չենք համարում առաջ բերել այստեղ նորագոյն քաղաքատնտեսութեան հանճարներից մէկի կարծիքն այդ հարցի մասին. նա շատ խրատական է և մասամբ պարունակում է իր մէջ մի մարգարէացում նաև Տաճկաստանի տնտեսական ներկայ կրիզիսների մասին.

«Ապրանքային արդիւնագործութեան որոշ աստիճանի զարգացման և որոշ մեծութեան ժամանակ՝ փողի պաշտօնը, իբր վճարման միջոցի՝ դուրս է գալիս ապրանքների փոխանակութեան շրջանից։ Փողը դառնում է մի ընդհանուր ապրանք բոլոր գործողութիւնների ժամանակ։ Հարկերը, ռենտան և ուրիշ դրանց նման՝ արդիւնքներով կատարուող վճարումները՝ վերածւում են փողային վճարների։ Թէ որքան խիստ կերպով կախուած է այդ փոփոխութիւնն արդիւնագործութեան պրոցեսսի ընդհանուր պայմաններից՝ ցոյց է տալիս, օրինակ, Հռոմի կայսրների արած անյաջող կրկնակի փորձը՝ բոլոր հարկերը փողով հաւաքելու։ Ֆրանսիայի գիւղական ազգաբնակութեան զարհուրելի ապրատութեան պատճառը Լիւդովիկոս XIV-ի ժամանակ, որ այնքան պերճախօս կերպով նկարագրում են Բուագիլբերը, Մարշալ Վօբանը և ուրիշները՝ ոչ միայն մեծաքանակ հարկերն էին,

այլ և բնական բերքերով վերցնող հարկերի փոխարինի վերածելը։ Եթէ միւս կողմից, հողային ռենտայի բնական ձևը (բերքերով), որ կազմում է Ասիայում պետական հարկերի գլխաւոր տարրը, հիմնւում է այնտեղ արդիւնաբերութեան պայմանների վրայ, որոնք կրկնւում են բնական երևոյթների պէս անփոփոխ կերպով, հողային ռենտան էլ իր կողմից պահպանում է արդիւնաբերութեան նախկին ձևերը։ Դրանումն է Տաճկական կայսրութեան ինքնապաշտպանութեան գաղտնիքներից մէկը։ Եթէ Եւրոպայի կողմից Եապոնիայի վրայ փաթաթած նորագոյն առևտուրը կարագացնի բնական ռենտայի փոխարինի ձևի դարձնելը, այն ժամանակ նրա օրինակելի երկրագործութեան վերջը կըգայ. այդպիսի երկրագործութեան գոյութեան համար անհրաժեշտ նեղ անտեսական պայմանները կը կործանուին»։ (Karl Marx «Capital»—58, հատ. I, ռուսերէն թարգմ.—երես 94)։

Այս քաղուածքից երևում է, որ Մարքսը դուշակում է երկու բան. ա) եթէ Տաճկաստանը անցնի հարկերի փոխարինի ձևին, նրա երկրագործութիւնը կամ առհասարակ նրա ամբողջ տնտեսութիւնը կը կորցնի իր կայունութիւնը, կըքայքայի—և, բ) բնական հարկային սիստեմը

կարելի է միմիայն այն ժամանակ անվնաս կերպով վերածել փողային սիստեմի, երբ երկրի ներքին արդիւնագործութիւնը բաւականաչափ կը զարգանայ, կը կատարելագործուի։ Այդ երկու գուշակութիւններն էլ մենք տեսնում ենք այսօր լիուլի իրականացած։

Հռոմի կայսրները երկու անգամ ուզեցին մացնել իրենց լայնածաւալ ու հարուստ կայսրութեան մէջ հարկերի փողային ձևը, բայց երկու անգամ էլ անյաջող դուրս եկաւ. հարկերը հաւաքել անհնարին եղաւ, որովհետև ժողովրդի ձեռքը փող չկար, այլ միայն ցիրք, արդիւնք, ապրանք։ Սրա պատճառը երկրի արդիւնագործութեան անզարգացած վիճակն էր։ Արդիւնագործութիւնը դեռ ևս այնքան չէր զարգացել, աշխատանքի բաժանումը երկրի ներսում դեռ ևս այնքան չէր առաջացել, որ զուտ «ապրանքային արդիւնագործութիւնը» թագաւորէր և փողը դառնար ապրանքների փոխանակութեան և վճարումների դէպքում իբր միակ ու անհրաժեշտ միջոց։ Արդիւնագործողը դեռ ևս ամեն բան յարմարեցնում էր իր սեփական գործածութեան եւ ոչ փոխանակութեան կամ առեւտուրի տեսակէտին։ Եթէ խօսենք քաղաքատնտեսական լեզուով պէտք է ասենք այսպէս. արդիւնագործողն ապրանքներ

չէր արտադրում, այլ միայն սեփական գործածական արժէքներ (valeure d'usage կամ потребительныя стоимости)։ Իսկ այդ տեսակ արդիւնաւորութեան համապատասխանում է միայն բերքերի, արդիւնաւորողի սեփական գործածութիւնից աւելացած բերքերի փոխանակութիւն և ոչ ապրանքների առնտուր փոխի միջոցով։ Այդ վիճակին եղող մի ժողովրդի մօտ հնչիւն դրամը բացակայում է և նրանից դրամական հարկ առնել չի կարելի։ Եթէ փորձեն առնել զօրով, ժողովրդի տնտեսութիւնը կը քայքայի, հարկատուն ուժասպառ կը լինի և կը լցայ ապրատութեան, անօթութեան ու մշտական սովի մէջ, իսկ տէրութեան հարկերը՝ փոխանակ աճելու, կը պակսին...

Նոյն փորձն արեց և Լիւդովիկոս XIV-ը Ֆրանսիայում, որ և երկրի երկրագործ մեծամասնութեանը հասցրեց տնտեսական սնանկութեան ու սովի գիրկը։

Այս դեռ առաջնատար երկրների համար է... Կուլտուրական զարգացման գլուխը կանգնած երկրներն անգամ չեն կարողանում տանել կենսական անդուզահեռական կամ ոչ համաչափ զարգացման դէպքեր ու երեոյթներ։ Մարդկային տնտեսական կեանքի բոլոր երեոյթները, նրա բոլոր կողմերը զարգանում են իրար հետ

միասին, պահպանելով մի որոշ համաչափութիւն իրար մէջ։ Նրանք կապած, շղթայած են իրար։ Չի կարող արդիւնաբերութիւնը զօրեղ կերպով զարգանալ, իսկ ապրանքների փոխանակութիւնը՝ յետ մնալ։ Նոյնպէս էլ չի կարելի անվնաս կերպով բնական հարկերը վերածել փողային այն ժամանակ, երբ արդիւնաբերութիւնն ու ապրանքների փոխանակութիւնը յետ են մնացած, երբ փողը չի դառնալ դեռ ևս բոլոր վճարումների անհրաժեշտ միաւորը։

Բայց «կարիքը լոգիկա չի ճանաչում»... Ցաճկաստանն էլ, կարիքների տակ ճնշուած, ոչ գիտութիւն, ոչ ուրիշ ազգերի փորձառութիւն, ոչ էլ լոգիկա է ճանաչում։

Հռոմը, Ֆրանսիան, Անգլիան չունէին այնպիսի մրցակիցներ, որոնք իրենցից ամեն բանով զարգացած և ուժեղ լինէին։ Իսկ Ցաճկաստանին ամենօրեայ ճնշող իրականութիւնն ստիպում է փոքի նոր ու նոր ապրիւրներ գտնել։ Վաղուց փողային տնտեսութեան անցած Եւրոպան ճակատագրաբար ստիպում է նրան հարկերն ու բոլոր միւս վճարումները փողով կատարել։ Պետական 250,000,000 ոսկի (մօտ $2^1/_2$ միլիարդ բուբլի) պարտքի տէրերը տանձ ու ծիրան, մեղր ու կորէկ չեն ընդունում

իրենց պարտքերի չահի փոխարէն... Կրուպպի ֆինդանոֆթի գործարանը ցորեն ու գարի չի առնում իր ուած զէնքերի համար... Ռուսական և այլ պատերազմական տուգանքի փոխարէն ոչ որ խոտ ու գարման չի վերցնում Տաճկաստանից... Տաճկական բաղմաթիւ դեսպաններին ու կոնսուլներին, վեզիրներին ու փաշաներին, օֆիցերներին ու լրտեսներին չի կարելի ցորեն կամ գարման տալ իբր ռոճիկ... Դրանք բոլորն էլ փող են ուզում, և այն էլ միլիոններ։ Օսմանը կամ նրա հայր Էրմիզդրուլը, Բեսարեան-բէկը կամ Եզդիշարը կարող էին իրենց բոլոր ծառայողներին հողով, ոչխարով ու ցորենով վճարել. նրանք հնչիւն դրամի կարիքը շատ քիչ էին զգում, որովհետև իրենց բոլոր անհրաժեշտութիւնները կամ իրենց ճորտերն էին արդիւնագործում կամ, պակասածն էլ, ձեռք էին բերում ոչխար, իւղ, ցորեն տալով։ Իսկ այսօրուան մի պետութիւն, որ յարաբերութեան մէջ է կոլտուրապէս զարգացած պետութիւնների հետ, չի կարող ապրել առանց մեծաքանակ հնչիւն դրամի։ Ոչ էլ նա կարող է ապրել՝ մինչև որ երկրի արդիւնագործութիւնը զարգանայ, որ յետոյ հարկերն ու ռենտան փողի վերածէ... մինչև այդ՝ շատ ջուր կը հոսի և շատ գարման կը տանի. ամեն ինչ

Նրա ձեռքից կըփախչի, նրա քաղաքական կեանքը կըկորչի։

Զօրեղ ու զարգացած արդիւնաւործութեան տէր հարուստ երկրները մտնում են մրցման յետամնաց երկրների հետ և նրանց տնտեսական կեանքը քայքայում, տնանկութեան դուռն են հասցնում... Փող վճարէ կամ մեռիր, անհետացիր երկրի երեսից իբրև ազգ, իբրև քաղաքական միութիւն, իբրև պետութիւն։

Այսօր միայն Տաճկաստանը չէ, որի ժողովուրդը տնանկութեան, համաճարակ աղքատութեան ու պարբերական սովերի ճահճի մէջն է լողում. այդպէս են և միւս բոլոր յետամնաց երկրների ժողովուրդները քիչ կամ շատ չափերով։ Տաճկաստանն աւելի յետամնաց է, քան նրանցից շատերը. նրա ներքին պայմաններն աւելի քայքայիչ են, քան միւսներինը. նրա բռնած աշխարհագրական դիրքն աւելի բաղձալի ու դրաւումի ախորժակ գրգռող է և այլն, և այլն... և ահա նրա ժողովրդի գրութիւնն աւելի տաժանելի, աւելի սպանիչ վիճակի է հասել. նա տնանկացել է։ Իսկ տնանկ ժողովուրդը կազմում է տնանկ պետութիւն։ Տնանկ է թուրքը, տնանկ է քուրդը, տնանկ է և քրիստոնեայ ռայան։ Այդ տնանկութիւնը ծնեցրել է մի տեսակ ճակատագրական դժգոհութիւն,

բողոք, խառնակութիւն եւ նոյն իսկ զինուած ապստամբութիւն. Անօթիներին, սովամահին դուռը հասած ռայանների առաջը դրուած է մի հարց. կամ, սովամահ եղիր կամ ազատիր:

VII.

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

Հարկերի ընդհանուր նկարագրութիւնը վերջացրինք։ Ի հարկէ չափազանց հետաքրքիր կը լինէր վերցնել «պաշտօնական» թիւեր կամ մասնաւոր բարեխիղճ հետազօտութիւններ, գտնել ամեն մի ընտանիքի, անհատի և նոյն իսկ ամեն մի մշակուած ու անմշակ հողի օրավարի վրայ ընկնող հարկերի միջին չափերը։ Հետաքրքիր կը լինէր, այդ անվիճելի է։ Բայց Տաճկաստանը մի գաղանանոց է, որի համար վիճակագրութիւնը գոյութիւն չունի։

Ինչ էլ որ լինի, այնուամենայնիւ անհրաժեշտ է որևէ ձևով աշխատել մի ընդհանուր եզրակացութեան հասնել, մի քանի մօտաւոր թիւեր գտնել և համեմատել այդ թիւերը Կով-

կասի պետական գիւղացիների վճարած հարկերի հետ։

Մենք կարծում ենք, որ առանց այդ համեմատութեան ընթերցողի համար մի որոշ եզրակացութեան հասնելը խիստ դժուար կ'նոյն իսկ անհնար կըլինի։

Այդպիսի մի քանի թուեր, գտնելու համար մենք դիմեցինք հետեւեալ միջոցներին։ Երկրից նոր դուրս եկած գաղթականներից ընտրել ենք այնպիսիներին, որոնք ընտանիքի գլուխներ են, որոնք հարկ են վճարել, ստացականներ ստացել և այլն։ Մի խօսքով այնպիսի անձեր, որոնք լիովին տեղեակ են եղել զէմ իրենց վճարած հարկերի, իրենց ցանած արտերի, ունեցած տների, կենդանիների և այլ ստացուածքների գոյին։ Ապա գտել ենք գիւղական *հեօխվաներ* կամ *ռեսներ* և կամ հարկահանների մօտ ծառայող շահնաներ և այլն. սրանց միջոցով աշխատել ենք ստուգել իրենց համապիւղացիների ցոյց տուած թուերը։

Երկրորդն է անգլիական կապոյտ գրքի տուած մի քանի փաստերը, որ բաղուած են տեղի վրայ, տաճիկ կառավարութեան պաշտօնական դրութիւններից։

Խոստովանում ենք, այդ թուերը ճիշտ և բաւարար չեն, բայց այդ է եղածը և եղածնե-

րից էլ ամենամօտաւորները։ Մի մասի մէջ կը-լինեն չափազանցումներ դէպի շատացումը, միւսների մէջ կրճատումներ... Ուղենք-չուղենք պէտք է բաւականանանք առ այժմ դրանցով։ Երանի թէ աւելի ձեռնհաս մարդիկ հաւաքէին բուն տեղի վրայ աւելի դրական և աւելի բազմաթիւ փաստեր։

Սկսենք նախ «Կապոյտ Գրքի» փաստերից 1896 թուի դեկտեմբերից մինչև 1897-ի սեպտեմբերի ժամանակամիջոցին վերաբերող «Կապոյտ Գիրքը», որ պարունակում է իր մէջ անգլիական հիւպատոսների և արտաքին գործոց նախարարութեան մէջ փոխանակուած 365 պաշտօնական հեռագրեր և տեղեկագրեր (սրանցից աւելի քան 300-ը հայկական գործերին է վերաբերում), հարկերի մասին հետեւեալն է հաղորդում։

Խարբերդի մօտ գտնուող Հողի գիւղից, որ 180 հայ տուն ունի, բոլորն էլ կստորածների ժամանակ խստիւ թալանուած, կառավարութիւնը պահանջում է ուղիղ 41000 դահ. տուրք։ Զմշկածակի մօտ եղած Միսանէ գիւղից, որ 35 տուն հայ ունի իր մէջ, բոլորն էլ թալանուած, 8000 դահ. հարկ են ուզում։ Մամուռաա 51 տնոց հայ գիւղից՝ «մաքրապէս» թալանուած 12000 դահեկան են պահանջում։

Այս գիւղերից առաջինը՝ կոնսուլների տեղեկագրած ժամանակ՝ վճարել էր 32000 դահ., երկրորդը՝ 5000, իսկ երրորդը՝ 8000 և միայն մնացած չնչին գումարների համար մի քիչ յետաձգում էին խնդրել։ Զմշկածագի Զապիթա-Մէմուրին (ոստիկանապետը) հետևեալ պատասխանն էր տուել Մամուսա գիւղի բնակիչներին. «Ձեր խնդիրը Միրալայ Պէյին (գայմագամին) հաղորդեցի. ահա նրա պատասխանը. «Ես այդպիսի բան չեմ հասկանում. մինչև որ բոլոր դրամը չվճարուի, զինուորները գիւղից չպէտք է դուրս գան»—Հետևաբար՝ աշխատեցէք ժամ առաջ մի հնար գտնել, գիւղացիներից դրամը հաւաքել և հարկը լրացնել»։

Ինքնըստինքեան հասկանալի է, որ կառավարութեան պահանջած այս հարկերի մէջ չեն մտնում ոչ աշարը, ոչ ճանապարհների հարկը, ոչ ոչխարների խամզուրը (սա պատկանում է «հանրային պարտքի վարչութեան», որ միշտ ծախսում է մասնաւոր անձերի), դրանց մէջն են՝—զինուորական հարկը, հողային տուրքերը և բէմէթթօհաթը։ Այժմ այդ երեք թուերից միջին թուեր դուրս բերենք, որ կազմեցու են ամբողջ հարկերի մօտաւորապէս կէս մասը։ 41000:180=մօտ 228-ի. 8000:35=մօտ 228-ի և 12000:51=մօտ 235-ի։ Այսպէս ուրեմն՝

ամեն մի տան վրայ ընկնում է մօտաւորապէս 230 դահեկան հարկ։ Իսկ եթէ հաշուենք մնացած հարկերն էլ, այն ժամանակ կըստանանք ուղիղ կրկնակին կամ մօտ 460 դահեկան, որ մեր փողով անում է 30 ռ. 80 կ., այն էլ եթէ երբէք հաշուի չառնենք մխտարների ռոճիկը, շահնաների բաժինները և գործնականի մէջ տեղի ունեցող բոլոր դեպքումները...

Այժմ դիմենք իրական՝ անուն-անուն հաւաքած փաստերին։

I. Վանայ վիլայեթի, Ոստանայ գաւմազամութեան (Ռշտունիք), վերին-Սարէի գիւղի բնակիչ Մանուկի տունը։

Համարում է ամենաաղքատ տներից մէկը նոյն իսկ իրենց ծայրայեղ աղքատ գիւղում։

Ունի.—հոգ՝ միայն 120 հոխայի կամ 9 վիթի տեղ (ցորեն). մի խրճիթ, մի գոմ, մի մարագ, իբր մնացորդ անցեալ փառքի, որովհետև կով, ոչխար, այծ բոլորը կամ թալանել են կամ հարկի տեղ առել և գոսն ու մարագը ոչնչի չեն ծառայում։ Ցանած ցորենը, հողի խիստ վատութեան պատճառով՝ տալիս է 1-ին երեք։

Ընտանիքը կազմուած է երկու տղամարդ և երկու կին անդամներից։

Վճարում է. բեդէլը-էսկէրիէ 2 հոգու հա-

մար 84 դահեկան։ Ահա օրէնքի որոշումը... Նա սահմանել է 37½ դահ., 2½ դահ. էլ աւելացնում են մխտարի համար, դառնում է 40, որ ասել է 2 մէջիտ։ Եթէ աչքի առաջ ունենանք, որ 20 դահեկանոց մէջիտն արժէ երկրի մէջ իսկ 19 դահեկան՝ շնորհիւ տաճկական օրենսաւ փողերի մէջ տիրող մշտական «ածիս»-ների, այն ժամանակ ամեն մի անհատի համար զինուորական տուրքը կըլինի ոչ թէ 37½, այլ ուղիղ 42 դահեկան։

Հողի, տան, գոմի և մարագի «շինութեան» և հողային հարկերը միասին անում են տարեկան 20 դահեկան։

Ճանապարհների հարկ՝—ընտանիքի հօրից և մեծ որդուց՝ ամեն մէկին 4 օրուայ աշխատանք կամ օրական 4 դահ. հաշուելով՝ մարդուց 16 դահ., իսկ երկու հողուց ուղիղ 32 դահ.։

Աշար. 1898 թուին ցանել էր 120 հոխա ցորեն և բերք ստացել 360 հոխա։ ⅛-ը առան իրը հարկ և հինգ հոխա էլ շահնայի համար վերցրին, որ անում է 50 հոխա։ Իւրաքանչիւր 40 հոխան այդ ժամանակ ծախւում էր 40 դահեկանի. ուրեմն՝ 50 հոխան արժէր 75 դահ.։

Արտի գլխներին ու ափերին ցանած կանեփի, շաղգամի և եղած ընկուզենիների համար էլ դանձել են 30 դահեկան։

Այդ տարի չի ունեցել ոչ խոտ, ոչ առ-
ոյտ և այլն։

Այս բոլորը միասին վերցրած՝ կազմում է
այդ ազքատ ընտանիքի համար 241 դահ. տա-
րեկան հարկ կամ 19 մնթ. 28 կ., չհաշուելով
պատահական, քրտական և այլ հարկերը։

*II. Վանայ վիլայեթի, Գեանդրանցի գայմա-
գամութեան Կարականի Եղեգիս գիւղի «Դե-
մուրչի Ուսֆի» տանը (դարբին)։*

Վերին աստիճանի ազքատ ընտանիք է.
չունի ոչ մի կտոր հող, ոչ արտ, ոչ այգի։

Ունի 8 անդամ, 4 կին, 4 տղամարդ. մի
խրճիթ, մի գոմ, մի մատակ (էգ գոմէշ), մի
կով, մի էշ և 15 ոչխար։

Վճարում է. բէդէլը-էսկէրիէ՝ 4×42=168
դահ.։ Տան համար—3 դահ., գոմի համար—
12 դահ., բոլորը=15 դահ.։ Ոչխարի խամշու-
բը՝ 58 դահ. (15×3½ և 5½ էլ հարկահանի
համար)։ Ճանապարհների շինուվածքի համար
3 հասակաւոր տղամարդոցից 3×16=48։

Բոլորի գումարն է՝ 388 դահեկ. կամ
30 մնթ. 84 կոպ.

*III. Վանայ վիլայեթի Բէլու գիւղից-
Խաչօի տունը։*

Միջակից էլ աւելի վատ տներից է։

Ունի 5 անդամ (իսկապէս՝ 4)—2 տղամարդ և 3 կին։ Ընտանիքի ծեր հայրն սպանուած է դեռ 8—9 տարի առաջ, բայց նրա զինուորական տուրքը դեռ ևս առնում է, որովհետև դեռ ստացուածքը որդու վրայ չէ անցած. իսկ որդին չի ուզում իր վրայ դարձնել տալ, որովհետև՝ այդպիսի դէպքում՝ բոլոր հին ու նոր, երևակայական և չեղած պարտքերը պէտք է հանուին «դէֆտէր»-ներից ու իր վիզը կապուին։ Որդին աւելի լաւ է համարում դեռ ևս վճարել հօր փոխարէն տարեկան 42 դահ. զինուորական տուրք, քան միանգամից ենթարկուել ժառանգութեան հարկին ու «պարտքերի» դանձման թալանին։

Ունի, 480 հոխա ցորենի կամ 36 փթի տեղ. մի խրճիթ, մի դամ և մի մարագ. մի խոտհարքի տեղ, որ միջին չափով 20 բարդ խոտ է տալիս։

Վճարում է՝ բէդէլը-էսկէրիէ – 2×42=84 դահ.։ Հողի համար (գնահատուած 12,500 դահ.). —50 դահ., 3 շէնքերի համար (գնահատուած 1 400 դահ.)—5 դահ.։ Ճանապարհի հարկ առնում են 20 դահ.։

1897 թուին ցանել էր 240 հոխա կամ 18 փութ ցորեն. ստացել էր 2400 հոխա կամ 180 փութ.։ Դրանից 300 հոխա վերցրել էին

իբր աշար, չ'հաշուելով շահնայի տարած բաժինը։ Այդ ժամանակ 45 հոխան ծախսում էր 55 դահեկանի, ուրեմն 300 հոխան կանէր 366 դահ.։

Քաղել էր 10 բարդ խոտ, որի տուրքը ուզել էին նաղդ փողով (звонкой монетой)— «ստակ կուզէին, յուստ ճարէի, ապա. չկրցի ճարել՝ 7 բարդ խոտս տարին, գիրեր թողին»։ Իւրաքանչիւր բարդը ծախսում էր 30 դահեկանով. ուրեմն խոտի համար առել են 7×30=210 դահ.։

Այս բոլորի գումարն է 735 դահեկան կամ 56 մնթ. 80 կոպ.։

IV. Բաղեշի վիլայեթի, Մշու մութասերիֆութեան, Մշու նահիեի Աբուշ-Բահար գիւղի Խաչիկեանի ընտանիքը։

Մինչև 1895 թիւը հարուստ, առաջնակարգ տուն էր ամբողջ շրջանի մէջ, իսկ 95 ի կոտորածներից յետոյ այնպէս ընկաւ, որ այժմ տան 3 հասակաւոր արու անդամները հեռացել են տանից, պանդխտել են, որ մի քիչ դրամ շահեն և երկիր ուղարկեն հարկերը, գլխ փողով պահանջող սպանիչ հարկերը տալու համար։ Համեմատութեան համար՝ մենք կըտանք այս մեծ ընտանիքի շաւ ժամա-

նակի հարկերի պատ. կերը և ապա այժմեան վճարածները։

1895-ից առաջ ունէր. 14 անդամ—9 տղամարդ, 5 կին. տուն, մարագ, դոմ, օդա կամ հիւրասենեակ, մի սրահ և մի մեծ կալ-հող,—56 քիլէ ցորնի համար։ Հող—խոտի համար—30 բարդի տեղ (մի բարդը 30 խոշոր խուրձ է), 15 բարդ էլ փաշախ խոտի տեղ (կեմ հիւսելու համար). 4 դոմէշ, 2 մատակ (էգ դոմէշ), 6 եզ, 7 կով և 80 ոչխար։

Վճարում էր 1894—95 թուին. բէգէլը-էսկէրիէ՝ 9×45=405 դահ. (իբր հարուստ՝ 3-ական դահեկան աւել էին առնում)։ Բոլոր հողերի և շէնքերի համար՝—288 դահ.։

30 բարդ լաւ տեսակ խոտի (բէօտախոտ) համար—450 դահ., որովհետև իւրաքանչիւր բարդի գինը կառավարութիւնը հաշուում էր 6 մեջիտ կամ 120 դահ. բոլորն անում էր 3600 դահ., որի 1/8 է 450 դահ.։

15 բարդ փաշախ խոտի (ճիլ-խոտ) բարդը 110 դահ. հաշուելով՝—15×110=1650 դահ., որի 1/8-ը կամ 206 դահ.՝ առնում էր կառավարութիւնը։

80 հատ այծ ու ոչխարի համար միշտ առնում էր 5-ական դահեկան, որ անում է 400 դահ.։ Եէօլ-փարասը՝ հաշուելով 6 հատա-

կաւոր տղամարդկանցից 12½-ական դահեկան՝ և մի մարդու վարձ էլ իրր օգնականի օրապին՝ առնում էր 87½ դահ.։

Աշար վճարում էին.—դարուց, որ ցանում էին առհասարակ 4 քիլ և, շնորհիւ ուժեղ ու ջրովի արտերին, ստանում էին առհասարակ 60 քիլ.—իսկ քիլն արժէր՝ 93—95 թուերին 280 դահեկան՝—վճարում էին 920 դահ.։ Կորեկ ցանում էին ½ քիլ և ստանում մօտ 15 քիլ. քիլն արժէր այն ժամանակները 150 դահ., որով տալիք աշարը լինում էր—92 դահ.։ Կտաւատ ցանում էին նոյնպէս ½ քիլ և ստանում 8 քիլ. քիլն արժէր առնուազը 100 դահեկան։ Աշարը լինում էր 150 դահ.։

Ցորեն ցանում էին միշտ 15 քիլ և ստանում մօտ 1-ին 6 կամ 90 քիլ։ Քիլն արժէր 500 դահեկան, ուրեմն աշարը լինում էր 1687½ դահ.։

Նկատելու էր, որ աշարը 8-ից մէկը չէին առնում, այլ շահնայի և այլ աւելորդ բաժինները հետը հաշուած՝ դուրս էր գալիս 8 ից 1½-ը։

Այս բոլորի գումարն անում է 4,480 դահ. կամ 358 ռ. 40 կ.։

Այդպէս էր մինչև 1895 թիւը. այդպէս չէ այժմ։ Բոլոր կարողութիւնը թալանուած, բոլոր շէնքերի մասերը քանդուած՝ իրր հարկ առ-

նուած, բոլոր կենդանիները տարուած, հողերը բարձի թողի արուած, ընտանիքի 3 հասակաւորները պանդխտած... օջախը մարած... իսկ հարկերն՝ ի հարկէ «չնորհիւ վեհափառ Սուլթանի»—կրճատուած...

Այժմ վճարում է.

Բէկլը Էսկէրիէ—անփոփոխ—405 դահ։

Հողերի ու շէնքերի համար նոյնպէս 288 դահ.—կառավարութեան շատ պէտքն է, թէ դու ցանում ես, մշակում, թէ ոչ՝ պէտք է հողային հարկը վճարես... յաջոյս հողն աւելի բեռ է գիւղացու վրայ, քան «սննդատու մայր»։

Եէօլ-փարասըն նոյնպէս նոյն 87½ դահեկանն է։

Ամեն մի «պրլիկ» հող ունեցող պարտաւոր է եկող-գնացող զօրքերի համար վճարել մէկ քիլէ գարի... ունիս-չունիս, պէտք է վճարես։ Այս ընտանիքն էլ ունի 2 պրլիկ հող, ուրեմն 2 քիլէ էլ գարի պէտք է տայ ամեն տարի։ 2 քիլէն այժմ արժէ 160 դահեկան, որովհետև կոտորածներից յետոյ հացահատիկների գինն ընկաւ զգալի կերպով։

Հաշուելով զօրքերի համար վերցուած 2 քիլէ գարու արժէքը. այժմեան վճարած մնացած հարկերի գումարը լինում է (1897-ի համար) 780½ դահ. կամ 62 ռ. 44 կ.։

V. Բաղեշու վիլայեթի, Մշու մուրասերիֆութեան Զիտուրի Ծմակ գիւղի Տէր-Դաւիթեանց տունը:

Գիւղում համարում է միջակ ընտանիք։ Ունի՝ — 9 անդամ. երկու ամուսնացած եղբայրներ, 2 կին և 5 հատ արու զաւակներ։

Մի խրճիթ, մի դռմ, մի մարագ և մի կալ։ 1/2 պլիկ հող, որ անում է 66 կոտի տեղ (մի կոտը մօտ մի փութ է)։ Մի փոքրիկ բանջարանոց—«տան մօտ ձորի բերանը», կաղամբի համար։ 2 կով, 2 մատակ և 4 մանր (հորթ և կօժու կամ գոմշուկներ)։

Վճարում է.—բէդէլը-էսկէրիէ—7×40=280 դահ.։ Հողային և շինութեան հարկ—70 դահ. (երբեմն էլ 5 դահ. աւելի են առնում)։ Եէօլ փարասը—2 հողու համար=25 դահ.։

Աշար. Ցորեն ցանել է 12 կոտ և ստացել 12 քիլէ կամ 1-ին 8-ը։ «Զմաքուր տեղ չափեց յրուէջ ինք վերուց. յմէն քիլուն լէ կոտ մի վերուց. շահնու համար»։ Պարզ է. 8-ից մէկ վերցնում են իբր հարկ, իսկ խրաքանչիւր քիլէից էլ մի կոտ իբր շահնայի և միլթեղիմի բաժին, որ բոլորը միասին՝ 12-ից 2 քիլէ է անում. Այդ տարին (1897 թ.) քիլէն արժէր 100 դահ.—ուրեմն առել են 200 դահ.։ Գըլգիլ ցանել է 3 կոտը հողի վրայ։ Վեց կոտանոց

անջուր հողը տուել է 15 քիլէ, 2 կոտնոց ջրովի հողը 8 քիլէ և 3 կոտնոց ջրովի հողն էլ 12 քիլէ. ընդամենը ստացել է 35 քիլէ ճերմակ գրգիլ, որից վերցրել են 4 քիլէ և 2 կոտ։ Քիլէն արժէր 88 դահ։ Վերցրածն անում է 374 դահեկան։

Ցանել էր 3 կոտնոց մի արտ էլ կարմիր գրգիլ, որ տուել էր 5 քիլէ (40 կոտ). դրանից էլ վերցրել էին 6 կոտ (5 աշար, 1 շահնի բաժին), որ անում է 37¹/₄ դահ.։

Յիշելու է, որ մի կոտ գրգիլը բռնում է ցանած ժամանակ) 4 կոտ ցորնի տեղ։

Գիւղն ունի մի համայնական խոտհարքի տեղ։ Այս ընտանիքի բաժինն ընկնում է առհասարակ 3—5 բարդ (բարդը 30 խուրձ)։ Խոտը քիչ է, դրա համար էլ առհասարակ չոր տերևներ են հաւաքում և կենդանիներին ուտեցնում։ Կառավարութիւնը հարկն առնում է մշտապէս՝ խոտի ամեն մի խուրձը գնահատելով 5 դահեկան։ Մի բարդն անում է 150 դահ., իսկ 3—5 բարդը 450—750 դահ., որի ¹/₈-ը անում է 56¹/₄—93³/₄ դահեկան։

Կաղամբի բանջարանոցը մի կոտ ցորնի տեղ է։ Ամեն տարի առնում են իրը աշար 15 դահեկան, լաւ է, վատ է բերքը՝ հարցնող չկայ։ Եղած կաղամբը կամ այլ բանջարեղէն-

ները ծառայում են միայն ընտանիքի գործածութեան և երբէք վաճառքի չեն հանուում։

Այս բոլոր հարկերի գումարն անում է 1057½—1100¼ դահ. կամ 84 ռ. 60 կ.—88 ռուբլի։

VI. Երզնկայի շրջանի, Ազարակ գիւղի՝ Թումանեանի ընտանիքը, միջակ կարողութեան տէր։

Ունի.— 9 անդամ, 6-ը տղամարդ (մէկը 20 տարի է պանդխտած է) և 3-ը կին.

Տուն, դոմ, մարագ, 5 սամարի չափ հող, 2 կոտնոց մի պարտէզ և 6—7 կոտնոց մի այգի։

Երկու կով, 2 եզ։ Ոչխար ունէին բաւական տարիներ առաջ, այժմ չունին։ Գիւղում եղած 60 տուն հայերից՝ 20 տունը հազիւ ոչխար ու այծ ունենայ, այն էլ 100 հատի չափ իսկ 50 տուն թուրքերը դուրս են հանում մինչև 300—500 ոչխար։ Հայերի ոչխար չպահելու պատճառներից մէկն է և մասամբ խամշարը, իսկ գլխաւորը՝ քրտերի ու թուրքերի թալանը, բուրտ ու թուրք հովիւների բուրդը խուզելը, կաթը վաճառելը և այլն. հայը վախենում է այդ կողմերում հովիւ լինել. բոլոր հովիւները թուրքերն ու քրտերն են։

Վճարում է.—բէգէլը էսկէրիէ՝ 6×45=270 դահ.։ Հողերի համար.—մի արտ՝ 16 կոտի

տեղ—19 դահ., միւսը 7 կոտի տեղ—5 դահ., երրորդը—16 կոտի տեղ,—$9^1/_2$ դահ., չորրորդը՝ կրկին 16 կոտի տեղ—$6^1/_2$ դահ.—վճարը հաշուած է հողերի պտղաբերութեան համաձայն։ Ցան, գոմի, մարագի և մնացած արտերի համար (24 կոտի տեղ ևս)—38 դահ.։ Այգու համար—7 դահ.։ Սրանց վրայ էլ աւելացնելու է հարկահանի բաժինը՝ 1 դահեկանին 3 փարա, որ անում է բոլորը $6^1/_2$ դահ.։ Ուրեմն՝ բոլոր հողերի և չէնքերի հարկերն անում են $91^1/_2$ դահ.։ Վկայութիւն տուողը եղել է բաւական ժամանակ գիւղապետ ու դրագիր)։

Եէօլ-փարասը 2 հասակաւորներից՝ $2 \times 22 =$ 44 դահ.։

Այգու աշարը միջակ տարին 103 դահեկան է, իսկ այգու պահպանութեան համար վարձուած թուրքին ինքը վճարել է 15 դահ.։ Այս պահապանը վարձւում է մի քանի այգեպէրերի կողմից՝—ընկերովի եթէ թուրք պահապան չլինի՝ թուրքերը մի ճիթ խաղող չեն թողնի, բոլորը կըգողանան։

Թթենիների և այլ մրգատու ծառերի պարտէզի համար աշար—18 դահ (սրա բերքը տնեցիներին անգամ բաւական չէ)։

Միւս բերքերի աշարի վրայ մի քիչ կանգ առնենք։

1896 թվին ստացել է 350 կիլոգրամ կամ լիտր (լիտրը=մոտ $2^2/_5$ գրանքայ) գինի, որի համար աշար վճարել է 46 դահ. (ի հարկէ բացի այդու 118 դահեկանը)։

Ամեն մի ընտանիք—մեծ, թէ փոքր—150 կիլո գինու համար ոչինչ չի վճարում, որովհետև այդքանը նշանակւում է իբր թէ գործածութեան համար։ Ուրեմն՝ այս ընտանիքից 200 կիլոյի համար վերցրել են 46 դահ. աշար։ Ցունը, գոմը, մարագը, խոտը, փայտերը խուզարկում են, որ գինի թաղցրած չլինեն։ Գինու *ղարա-հոխաև* (400 գրամ կամ մոտ $3^1/_4$ ֆունտ) ծախւում է տեղում ամենաշատը 2 դահեկանով, իսկ առնւածը $^1/_2$ դահեկանով։ Իսկ կառավարութիւնը, հարկն առնում է կիլոյի հաշւով (312 գրամ կամ մոտ $2^3/_8$ ֆունտ) և կիլոն էլ անփոփոխ 3 դահեկան գնահատելով։

Եթէ գինին մի գաւառից միւսը տանեն, պէտք է «թէսքէրէ» առնին կառավարութիւնից և նորից՝ համաձայն գինու չափին՝ «ներքին մաքս» վճարեն 100 ին 8-ը [1])։

[1]) 1900 թվի ամառը սուլթանական մի իրադէով ներքին մաքսը ջնջւեց և փոխարինւեց փոխադրւող ապրանքի արժէքից 100-ին 2 գինուորական տուրքով։ Հաւաքւած գումարը պէտք է գնայ բանակի կանոնաւորման և այլ գինուորական ծախքերի համար։

Արտոյտ (հոնջա) ցանել է 12 կոտի տեղ. 6 կոտ սև, 6 դեղին կոչուած տեսակներից։ Ստացել է 3 բարդ սև, 3 բարդ դեղին։ Կառավարութիւնն առել է իբր թէ 1/8-ը. հաշուելով 1¼ դահ. դեղնի համար, 2՝ սևի։ 90-ական խուրձի 1/8-ը հաշուելով 11-ական խուրձ, ստանում ենք 13¾ և 24 դահ. իբր աշար արտոյտի։ Եւ իսկապէս, այս ընտանիքը 1896-ին վճարել է ուղիղ 28 դահ. արտոյտի աշար։

Ցանել է վիկ կոչուած խոտից 4 կոտի տեղ և ստացել է 40 խուրձ (մի բարդ—10 խուրձ) որից 5 խուրձը առնուել է իբր աշար. խուրձը 2½ դահեկան հաշուելով՝ առել են 12½ դահեկան։

Վարունգի բոստանը 6—7 կոտի տեղ է։ Եթէ բերքը բոլորովին նուազ է կամ չկայ՝ առնում են 50 դահ., իսկ եթէ լաւ բերք է—120 դահ.։ 1896-ին, որին վերաբերում է մեր այս հաշիւը, առել են 120 դահ.։

Լոբի ցանում է միշտ 10 կոտի տեղ։ 96 ին ստացել է 4 սոմար (սոմարը 16 կոտ կամ մօտ 15½ փութ է). իսկ 1898 ին միայն 2 սոմար։ Աշարը հաշուում են 8-ից 1-ը, Եթէ փոգով վճարել ուզենաս, իրենց ուզած գինն են նշանակում, իսկ եթէ չհամաձայնես գնի հետ և բերքով տաս՝ ինքդ պէտք է տանես

վճարածդ աշարը մինչև կենտրոնական քաղաքը —մինչև Երզնկա։ Միջակ տարին ծախսում է կոտը 7 դահեկանով. ուրիմն՝ 4 սմմարից ½ սմմար կամ 8 կոտ՝ անում է 56 դահ.։

Մնացած հողերը, 30 կոտի չափ էլ ուրիշներից քրեհով վերցնելով՝ ցորեն ու գարի են ցանում։ Առանց քրեհով վերցնելու, իրենց հողերով ապրել չեն կարողանում։

Յիշած տարին ցանել են 2 սմմար և ստացել 12 սմմար։ Աշար վերցուում է 1½ սմմար, իսկ ծառայողների համար էլ միշտ ½ սմմարաչափ՝ ուրիմն՝ առնում են 12-ից 2 բաբաժին։ Սմմարի գինը՝ վերջին դէպքերից յետոյ միշտ եղել է 80—115 դահ.։ Ուրիմն՝ աշարն անում է 160—230 դահ., եթէ նոյն իսկ տեղական գներով հաշուենք։ Իսկ եթէ ուղենաք դրամով վճարել՝ կամ Երզնկայի, կամ Երզրումի կամ Տրապիզոնի թանգ գներով են հաշուում ու հարկն առնում։

Նոյն տարին գարի ցանել էին 8 կոտ, ստացել միայն 48 կոտ։ Զորրորդ զօրաբանակի ներկայութիւնը միշտ բարձր է պահում այդ կողմերում գարու գինը։ Սմմարը, համարեա միշտ, ծախսում է 70—80 դահեկանով։ Սրա էլ աշարն անում է (48-ի ⅛ ը=6, աւելացրած 1 կոտ՝ ծառայողների բաժինը)=36—40 դահ.։

Այս բոլորի գումարն անում է 918—1062 դահ. կամ 73 ռ. 44 կ.— 84 ռ. 96 կոպ.։

VII. Մշու դաշտի Աղաուրինջ գիւղի Ցակորի ընտանիքը։

Սա առաջ համարւում էր գիւղի ապրատ ընտանիքներից մէկը, որովհետև հող քիչ ունէր, իսկ այժմ, հողերն անմշակ ընկնելուց յետոյ, համարւում է ամենահարուստներից, որովհետև իւր երկու հասակաւոր անդամները գտնւում են օտարութեան մէջ և փող են աշխատում. մէկը Տփխիսում. ամսական 11 ռուբլի է ստանում (1898-ին), միւսը Զմիւռնիայի մօտերը, երկաթուղու գծի վրայ պահապան է և ստանում է ամսական 15 մէջիդ (մի մէջիդը մօտ 1 ռ. 60 կ. է)։ Այս երկու աշխատաւորները տուն փող են ուղարկում և փոդաչին հարկերի դժոխային ծանրութիւնը մի քիչ թեթևացնում։

Ունի՝ 15 անդամ, որոնցից 10-ը տղամարդ են (երկուսն ամուրի են և 14 տարի է օտարութեան են դուրս եկած), իսկ 5-ը կին։

Կէս պչիկ հող, որ կարող է տանել 6 քիլէ ցորեն կամ 48 փութ 8 ֆունտ։ Մի տուն, մի գոմ, մի մարագ, մի կալ և մի այգի (մօտ 7 փութ ցորենի տեղ), որոնց բոլորն էլ հաշւած են, կէս պչիկ հողի տարածութեան մէջ։

Վեց եզ, 2 գոմէշ, 2 մատակ, 3 կով, 3 հորթ և մի գոմշի ձագ, կամ կօժու։

Վճարում է. բէգլը էսկէրիէ՝ 10×42=420 դահ.։ 1/2 պշիկ հողի համար՝ տան և հողի հարկ=25 դահ։ Եօլ-փարասը—մի մարդու համար=15 դահ.։ Այգու համար՝ 216—324 դահ., նայելով բերքին, իսկ բերքը միշտ քիչ է և ծառերն էլ հետզհետէ կտրտում են, որովհետև միրգը գնող չկայ և աշարը ծանր է. Խոտաբքի չաշիրը տալիս է 12 բարդ, խոտ—«գոլորդ» (լաւ) և «փալախ» (վատ) տեսակներից (5 բարդ լաւ, 7-ը վատ)։ Հասարակ տեսակ խոտի ամեն մի բարդի համար աշար վճարում է փոդով 25—30 դահ., որ անում է 175—210 դահ., իսկ լաւ տեսակի բարդից 30—40 դահ., որ անում է 150—200 դահեկան։

Արևոյտ ցանում է փոքր արտի մէջ, որից ստանում է մօտ 5—6 բարդ, իսկ ամեն բարդին վճարում է 50—60 դահ. աշար, որ անում է 250—300 դահ., հաշուելով միայն 5 բարդ։

Այս ընտանիքի ցորնի ու գարու աշարը բաւարար ճշտութեամբ չկարողանալով պարզել, աւելորդ համարեցի եղած թիւերը առաջ բերել։

Եղած հարկերը—բացի ցորնինը և գա-

բունը—միասին հաշվելով՝ ստանում ենք 1251 —1494 դահ. կամ 100 ռ. 08 կ.—119 —52 կ.

VIII. Տրապիզոնի վիլայեթի, Եօմուրա Նահիեի Գաշակա գիւղի՝ Փոշաեան ընտանիք: Գիւղը բաղկացած է 400 տուն տաճիկներից և միայն 50 տուն հայերից։ Հայերի մէջ այս ընտանիքը համարւում է հարուստներից մէկը։

Ունի՝ 9 անդամ, որոնցից չորս տղամարդ (2 հասակաւոր) և 5 կին։

Հող—արտ՝ միայն 10 կոտի տեղ։ Ընդհանրապէս այդ գիւղը վարելահողեր չունի, որովհետև շրջապատւած է կաղնի (ֆնդուղի) անտառներով և բնակիչների համարեա միակ գործը և սեփականութիւնն այդ բերքի մշակումն ու առևտուրն է։

Մի խրճիթ, մի գոմ խրճթի տակը, մի մի «սրանդէլ» կամ «կօրսպ» (կաղին կամ եղիպտացորեն լցնելու տեղ)։ Կաղնու այգի—մօտ 150 կոտի տեղ։ Սեփական անտառ—մօտ 200 կոտի տեղ։ Իսկ խոտ քաղում են գիւղի համայնական անտառից։ 12 հատ էլ կով ու եզ։

Վճարում է. բէդէլը-էսկէրիէ՝ ամեն մի անձի համար 42½ դահ.=170 դահ.։ Բոլոր հողերի և շէնքերի էմլաք—150 դահեկան։

Տաւարներն ամառը քշում են «Եայլա»

(ամարանոց), որի տեղը կառավարութիւնն է. դրա համար վճարում են ամեն մի գլխին 8½ դահ., որ անում է 102 դահ.։

Եօլ-փարասը 2 հասակաւորների համար. 2×12=24 դահեկան։

Ցանում են 10 կոտ եգիպտացորեն (սիմինդր), որ տալիս առհասարակ 16 սոմարի չափ։ Երկրի մէջ կոտը ծախւում է 5 դահեկանով՝ ուրեմն՝ բոլորն արժենում է 1,440 դահ.։ Դրանից աշար առնւում է առնւածը 200 դահ.։

Կալին ստացւում է 10 12 բեռ (բեռը մօտ 88 հոխա, հոխան=3¼ ֆունտ) յաջող տարին. միջակ տարին 6 և վատ տարին 3 բեռ։ Կապալառուն՝ միջակ տարին՝ ամբողջ գիւղի աշարն առնում է 30,000 դահեկանի։ Գիւղի թուրք բնակիչների բաւական խոշոր մասն «աղաներ» են, որ ազատ են աշարից. նրանց աշարն էլ ծանրանում է 50 տուն հայերի և մի քանի տասնեակ տուն ազգատ թուրքերի վրայ։ Այդ պատճառով էլ ամենավատ բերը եկած տարին անդամ (երբ միայն 3—4—6 բեռ հազիւ է բերը ստացւում և բեռն էլ 150—200 դահեկանի ծախւում) այս ընտանիքից առնում են 150 դահ.։

Այս բոլորի գումարն անում է 796 դահ. կամ 63—68 կոպէկ։

* * *

Քիչ, չափազանց քիչ են մեր ունեցած թուերը միջին հաշիւ, ընդհանուր եզրակացութիւններ դուրս բերելու և համեմատութիւններ անելու համար։ Բայց «անճարը կերել է բանջար»—ասում է առածը։ Որքան թուեր ունինք՝ առ այժմ բաւականանանք նրանցով միայն զգալով, որ արդիւնքը բաւարար գիտակցութիւն չի կարող ունենալ։

«Կապոյտ Գրքի» տուած 3 գիւղերի համար միջին թուերը հետեւեալն են ամեն մի ընտանիքի համար։

1) Հողի գիւղ	36	ո.	48	կոպ.	հարկ։
2) Միսանե գիւղ	36	„	48	„	„
3) Մամուսա գիւղ	37	„	60	„	„

Մեր հաւաքած 8 ընտանիքինը.

4) Վերին-Սարեհ գիւղ	19	„	28	„	„
5) Եղեգիս գիւղ	30	„	84	„	„
6) Բեղու գիւղ	56	„	80	„	„
7) Արուշ-Բահար գիւղ	62	„	44	„	„
8) Ծղակ գիւղ	84	„	60	„	„
9) Ազարակ գիւղ	73	„	44	„	„
10) Այվարիկ գիւղ	100	„	08	„	„
11) Գաղարկա գիւղ	63	„	68	„	„

Բոլորի ընդհանուր գումարը կազմում է 601 ռուբլի 72 կ., որ բաժանելով տված 11 ընտանիքի վրայ՝ ստանում ենք 54 ռուբլի 70 կ.։

Այսպէս ուրեմն՝ եղած փաստերն ու թուերը տալիս են, միջին հաշուով, ամեն մի ընտանիքի համար 54 ռ. 70 կոպէկ հարկի չափը։

Լաւ ծանօթ լինելով մեր ժողովրդի և մանաւադ թրքահայ գաղթականների բնաւորութեան, գիտենք, որ, իրենց խեղճութիւնը, կրած դժոխային տառապանքներն աւելի ևս ուզելով դատաւորել, յաճախ դիմում են չափազանցութիւնների։ Այդ պատճառով էլ մենք վերցնում և երկու անգամ—լաւ լսեցէք—երկու անգամ—քշացնում ենք այդ միջին չափը ենթադրելով, որ անպատճառ չափազանցրած կըլինեն իրենց թուերը փաստերը մեզ պատմողները։ Այդպիսով, մենք համոզուած ենք, որ իրերի եղած դրութիւնից բուերն աւելի պակաս կըլինեն. իսկ այդ աւելի լաւ է, քան մեծացնել եղածը և մարդկանց դցել սխալ դատողութիւնների ու սարսափների ծուռ ճանապարհը։

Փոխանակ ամեն մի ընտանիքի վրայ 54 ռ. 70 կոպէկ ծանրացնելու, հաշուենք ուրեմն դրա կեսը—27 ռ. 35 կոպ.։ Մենք կարծում ենք, որ այս արդէն չափազանց խիստ

վերաբերմունք է, որ ծառայում է եղած կարգերի օգտին։

Ա՛յդքան բշայնելուց յետոյ՝ այժմ համեմատենք Տաճկա-Հայաստանի ամեն մի գիւղական ընտանիքի վճարած հարկը Ռուսա-Հայաստանի կամ ամբողջ Կովկասի պետական գիւղացիների վճարածի հետ։

„Изученіе быта гос. крестьянъ на Кавказѣ“ լուրջ հետազօտութեան հարկերին վերաբերող հատորում մենք գտնում ենք հետեւեալ միջին թիւերը.

Ամեն մի ընտանիք վճարում է.—միջին չափով.

1) Թիֆլիսի նահանգ	13 ռ.	75 կ.	հարկ.
2) Քութայիսի նահանգ	10 „	36 „	„
3) Երեւանի նահանգ	15 „	21 „	„
4) Բաքուի նահանգ	13 „	14 „	„
5) Գանձակի նահանգ	16 „	05 „	„

Այս հինգ նահանգի էլ միջին թիւը գուրս է գալիս 14 ռ. 09 կոպէկ [1]։

Այսպէս ուրեմն՝ Տաճկա-Հայաստանում ամեն մի ընտանիք վճարում է 27 ռ. 35 կ. տարեկան հարկ, իսկ Կովկասի գիւղացի ընտանիքը՝ 14 ռ. 09 կ.։

---

[1]) Այդ թիւերը վերաբերում են մեր երկրում մինչև 1901 թիւը գոյութիւն ունեցող հարկերին։ Եթէ մենք վերցնենք այժմեան հարկերը Կովկասի գիւղացիների համար, գուցէ թէ տարբեր պատկեր ստանանք...

Թուերը խիստ պերճախօս են. այնտեղ մարդիկ երկու անգամ աւելի են վճարում այն ժամանակ, երբ թալանը, սրածութիւնը կատարւում են մշտապէս և օր-ցերեկով, երբ կեանքի ու աշխատանքի, զոյրի ու պատի ապահովութիւնը բացակայում է բոլորովին։ Աւելացրէք դրա վրա հնչիւն դրամի պակասութիւնը, կաշառարակերութեան ճակատագրական անհրաժեշտութիւնը. աւելացնենք քրդի հարկն ու թալանը, հոգևորականի պարկն, զինուորների և ասիճանաւորների կերածն ու փչացրածը. վաշխառուի կեղեքումը... և այն ժամանակ պարզ կը լինի, թէ ինչու մարդիկ անօթի են, ինչու նրանք ստիպուած եղան բռնել աւեանի փշոտ ճանապարհը . . .

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

Բաղդասար Հայոց
Հոլիփսիմ Եան Դարձ
Եկեղ.-ծխակ. (երբորդաբ)